



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



4543







4791

2710

# ՕՐԱՑՈՅՑ

## 1869

### ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

### ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ՈՅԺԸ = 1518

4543



Ժ. ՏԱՐԻ

Ի ԹԻՆՆՈՍԻԱ



ի սպարանի Խաչիքեան Ուսումնարանի Ազգիս Հայոց



## Յ Ո Ւ Յ Ա Կ

### ԹՈՒՈՅ ԻՒՐԱՔԱՆՉԻՐ ԱՄՍՈՅ ՏԱՐԻՈՅՍ.

ԱՒՈՒՐՔ.	ՅՈՒՆՈՒԱՐ.					ՓԵՏՐՈՒԱՐ.					ՄԱՐՏ.					
Կիրակի . . . . .	—	5	12	19	26	—	2	9	16	23	—	2	9	16	23	30
Երկուշաբթ . . . . .	6	13	20	27	—	—	3	10	17	24	—	3	10	17	24	31
Երեքշաբթ . . . . .	7	14	21	28	—	—	4	11	18	25	—	4	11	18	25	—
Չորեքշաբթ . . . . .	1	8	15	22	29	—	5	12	19	26	—	5	12	19	26	—
Հինգշաբթ . . . . .	2	9	16	23	30	6	13	20	27	—	—	6	13	20	27	—
Ուրբաթ . . . . .	3	10	17	24	31	7	14	21	28	—	7	14	21	28	—	—
Շաբաթ . . . . .	4	11	18	25	—	1	8	15	22	—	1	8	15	22	29	—

ԱՒՈՒՐՔ.	ԱՊՐԻԼ.					ՄԱՅԻՍ.					ՅՈՒՆԻՍ.					
Կիրակի . . . . .	6	13	20	27	—	4	11	18	25	26	1	8	15	22	29	—
Երկուշաբթ . . . . .	7	14	21	28	—	5	12	19	26	—	2	9	16	23	30	—
Երեքշաբթ . . . . .	1	8	15	22	29	6	13	20	27	—	3	10	17	24	—	—
Չորեքշաբթ . . . . .	2	9	16	23	30	7	14	21	28	—	4	11	18	25	—	—
Հինգշաբթ . . . . .	3	10	17	24	—	1	8	15	22	29	5	12	19	26	—	—
Ուրբաթ . . . . .	4	11	18	25	—	2	9	16	23	30	6	13	20	27	—	—
Շաբաթ . . . . .	5	12	19	26	—	3	10	17	24	31	7	14	21	28	—	—

ԱՒՈՒՐՔ.	ՅՈՒԼԻՍ.					ՕԳՈՍՏՈՍ.					ՍԵՊՏԵՄԲԵՐ.					
Կիրակի . . . . .	6	13	20	27	—	3	10	17	24	31	7	14	21	28	—	—
Երկուշաբթ . . . . .	7	14	21	28	—	4	11	18	25	—	1	8	15	22	29	—
Երեքշաբթ . . . . .	1	8	15	22	29	5	12	19	26	—	2	9	16	23	30	—
Չորեքշաբթ . . . . .	2	9	16	23	30	6	13	20	27	—	3	10	17	24	—	—
Հինգշաբթ . . . . .	3	10	17	24	31	7	14	21	28	—	4	11	18	25	—	—
Ուրբաթ . . . . .	4	11	18	25	—	1	8	15	22	29	5	12	19	26	—	—
Շաբաթ . . . . .	5	12	19	26	—	2	9	16	23	30	6	13	20	27	—	—

ԱՒՈՒՐՔ.	ՀՈՍԵՍԵՄԲԵՐ.					ՆՈՅԵՄԲԵՐ.					ԴԵԿՏԵՄԲԵՐ.					
Կիրակի . . . . .	5	12	19	26	—	2	9	16	23	30	7	14	21	28	—	—
Երկուշաբթ . . . . .	6	13	20	27	—	3	10	17	24	—	1	8	15	22	29	—
Երեքշաբթ . . . . .	7	14	21	28	—	4	11	18	25	—	2	9	16	23	30	—
Չորեքշաբթ . . . . .	1	8	15	22	29	5	12	19	26	—	3	10	17	24	31	—
Հինգշաբթ . . . . .	2	9	16	23	30	6	13	20	27	—	4	11	18	25	—	—
Ուրբաթ . . . . .	3	10	17	24	31	7	14	21	28	—	5	12	19	26	—	—
Շաբաթ . . . . .	4	11	18	25	—	1	8	15	22	29	6	13	20	27	—	—







## ՆԵՐՍԷՍ Ե

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1843—1857.



ՆԵՐՍԷՍ Ե, իբրեւ կաթողիկոս, այն չնաշխարհիկ հայրապետներէն մէկն էր, որ իւրեանց եռանդուն ազգասիրութեամբը, նախանձելի սրբակեցութեամբը, խոհական կառավարութեամբն ու նշանաւոր գործունէութեամբը անմահացուցած են իւրեանց անունները. իբրեւ երեւելի անձններկայ իննեւտասներորդ դարուս, այն մարդիկներէն մէկն էր, որ իւրեանց բարակ քաղաքականութեամբը, անձնանուէր հայրենասիրութեամբը, արթուն բնաւորութեամբն ու նուրբ հեռատեսութեամբը յաւերժական յիշատակներով փառաւորուած են. եւ իբրեւ Հայ, այն դիւցազանց մէկն էր, որ պատերազմի ժամանակ ախոյեան հանդիսացան հայրենեաց աշխարհին մէջ, եւ նորա բարօրութեանն ու ազատութեանը մինչեւ ի մահ պաշտպան կեցան, եւ խաղաղութեան ժամանակ՝ իւրեանց անխոնջ աշխատութեամբը ազգիս բարոյական յառաջադիմութեան հիմունքը ձգելով՝ նորա ուսումնական դաստիարակութեան վերայ փոյթ ու խնամք ունեցան:

Այս մեծահռչակ կաթողիկոսը ծնած է 1771 թուականի օգոստոսի 13-ին Աշտարակ գիւղին մէջ, որ ժամանակով Հայաստանի Արարատեան նահանգի Բագրեւանդ գաւառի նշանաւոր տեղերէն մէկն էր, եւ 20 վերստ հեռաւորութիւն ունի Ս. Էջմիածնի մայր եկեղեցիէն: Իւր ծագումը Կամսարական—Շահազիզեանց ազնուական հին տոհմէն էր, որ մինչեւ ցայժմ Հայաստանի եւ Վրաստանի մէջ մեծանուն ցեղերէն մէկն է. եւ նորա կենաց առաջին տարիներէն այսքանս գիտեմք, որ մինչեւ հնգետասանամեայ հասակը իւր բարեպաշտ ծնողաց տունը կենալով՝ Աշտարակայ քահանայէն հայերէն գրավարժութիւն կսովորէր. յետոյ իւր ամենապատիւ կնքահօր, Գալուստ արքեպիսկոպոսի հոգաբարձութեամբը Ս. Էջմիածին գնաց, ուր քիչ ժամանակի մէջ իւր կարգէ դուրս բնդունակութիւնը, ուսումնասիրութիւնն ու հաստատուն բնաւորութիւնը ցուցրնելով՝ Գալուստ սրբազանը մասնաւոր խնդիրք արաւ Կոստանդնուպոլսոյ Գրիգոր արքեպիսկոպոսին, որ այն ժամանակը մեծ համբաւ ունէր գիտութեան եւ առաքինութեան կողմանէ, որպէս զի իւր քովն առնու զՆերսէս պատանին, եւ ըստ ներելոյ ժամանակին՝ ուսումնական գիտութեանց մէջ կրթէ: Գրիգոր սրբազանին յօժարակամ սիրով յանձնառութիւնն իմանալէն վերջը՝ Ներսէսը Կոստանդնուպոլիս յուղարկուեցաւ, ուր քանի մի տարուան մէջ աստուածաբանական գիտութեանց հմտանալէն յետոյ Զմիւռնիա գնաց եւ իւր 23 տարեկան հասակին, այսինքն 1794-ին սեպտեմբերի 24-ին վարդապետ ձեռնադրուեցաւ եւ Էջմիածին վերադարձաւ:

Ներսէս՝ տեղ հասնելուն պէս թէեւ շատ տխրեցաւ Գալուստ արքեպիսկոպոսի մահուան վերայ, որուն *երկրորդ հայր* կանուանէր ինքը, բայց Առկաս կաթո-

դիկոսը նորա բնական հանճարն ու ստացական ձիրքը տեսնելով՝ մասնաւոր խնամք ունեցաւ վերան եւ Ներսէս վարդապետին իւր գրագրութեանցը աշխատեցուց:

Նոյն միջոցները Թէքիրտաղցի Սարգիս վարդապետը (որ Բասենցի Յարութիւն արքեպիսկոպոսի ժամանակէն աշակերտակից էր Ղուկասու) էջմիածին գնալով՝ մէկ համբաւ տարածուեցաւ մեր համազգեաց մէջ, որ իբր թէ Հայոց ազգը Հռովմայ եկեղեցւոյն հետ կուզեն միացընել<sup>(1)</sup>, եւ այնքան երկար տեւեց այս լուրը, որ վերջապէս Տաճկաստանի Հայերէն ոմանք մասնաւոր նամակաւ հարցուցին էջմիածնի միաբաններէն համբաւին ստուգութիւնը: Կաթողիկոսը լսելուն պէս՝ Ներսէս վարդապետը Տաճկաստան՝ այսինքն Զմիւռնիա եւ Կոստանդնուպոլիս յուղարկեց իրեն կողմանէ, ուր ազգայնոց մէջ յարուցած վրդովմունքը իւր ճարտար խօսքերովը խաղաղութեան հրեշտակի պէս հանդարտեցընելէն յետոյ՝ էջմիածին վերադարձաւ:

Ղուկաս եւ Յովսէփ կաթողիկոսներէն վերջը՝ երբ 1802 թուականին Դանիէլը կաթողիկոս նստաւ, Ներսէս վարդապետի եզական յատկութիւնները տեսնելով՝ ծայրագոյն վարդապետութեան գաւազանը տուաւ նորա եւ քիչ ժամանակէն յետոյ եպիսկոպոս ձեռնադրեց ու Վրաստան (Թիֆլիզ) յուղարկեց, ուր Պարսից եւ Ռուսաց մէջ բոբբոքած պատերազմի բոլոր ժամանակը ախոյեան հանդիսանալով՝ իւր ազգի բարօրութեանը աշխատեցաւ:

(<sup>1</sup>) Այս համբաւոյն վերայ Հայերը Թէքիրտաղցի Սարգիս վարդապետին հետ այնքան բշնամացան, որ վերջինս Վրացոց Հերակլ բազաւորին ձեռնառուութեամբը հազիւ կարողացաւ Թիֆլիզ եւ այն տեղէն եւս եւրոպա փախչիլ:

Պատերազմէն յետոյ կաթողիկոսի հրաւիրանօքը՝ Ներսէս եպիսկոպոսն էջմիածին վերադարձաւ եւ Ս. Աթոռոյն գործերն յառաջ տանելու կողմանէ եռանդուն գործակից եղաւ իրեն: Կաթողիկոսը նորա առ ինքն ունեցած հաւատարմութիւնն ու առ ազգն ունեցած անկեղծ սէրը տեսնելով՝ արքեպիսկոպոսական բարձր աստիճանը տուաւ նմա, եւ քիչ ժամանակէն յանձնարարական թղթերով Տաճկաստանի այլ եւ այլ քաղաքներն յուղարկեց առաքելական պաշտօնիւ, որ հետզհետէ յառաջ երթալով՝ Կոստանդնուպոլիս գնաց, Տաճկաց վէզիրներուն ու սուլթանին հետ տեսնուեցաւ, եւ ամենայն յաջողութեամբ էջմիածին վերադարձաւ, սուլթանի կողմանէ փառաւոր հրովարտակ (*փերման*) տանելով կաթողիկոսին: Նոյն միջոցները, այսինքն 1809 թուականին Ռուսաց եւ Տաճկաց մէջ պատերազմ բացուելով՝ Դանիէլ կաթողիկոսն իւր բացակայութեան պատճառաւ էջմիածնի Ս. Աթոռոյն կառավարութիւնը Ներսիսին յանձնեց, որով ընդարձակ ասպարէզ բացուեցաւ իւր ազգասէր գործունեութեան առաջեւ:

Դանիէլէն յետոյ երբ 1810-ին կաթողիկոս նստաւ Եփրեմը, Ներսէս ամենայն հաւատարմութեամբ գործակից եղաւ նաեւ նորա բարի բարի ձեռնարկութիւններին, որով այս նոր կաթողիկոսին սէրը եւս արժանապէս վայելելով՝ 1811-ին Վրաստանի առաջնորդ նշանակուեցաւ, եւ յաջորդ տարին, այսինքն 1812-ին յունուարի 9-ին, իբրեւ արժանբնտիր հովուապետ, Ռուսաց կայսեր բարձրագոյն հրովարտակին հետ մէկտեղ վեղարին ճակատը կրելու մետրապոլիտական ազամանդեայ խաչն ընդունեցաւ:

Այնուհետեւ Ներսէս Թիֆլիզի մէջ բնակելով՝ եւ Ազգիս այժմու պիտոյքն ու եւրոպական լուսաւորութեան օգուտները պէտք եղածին չափ հասկընալով՝

բոլոր ուժովն ու ջանքովը աշխատեցաւ ոչ միայն իրեն յանձնուած հօտին հոգեւորական կրթութեանը, այլ եւ ընդհանուր ազգին ապագայ բարօրութեանը. ուստի եւ 1819-ին՝ ազգասէր Հայկազանց ձեռնտուութեամբն սկսաւ այժմու ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐՈՑԻ ընդարձակ ուսումնարանին հիմնարկութիւնը՝ Թիֆլիզու մայր եկեղեցւոյ հողին վերայ:

Ուսումնարանի շինութեան համար թէեւ ի սկզբան ժողովուած փողը բաւական համարուած էր, բայց յետոյ շինութիւնը մեծցընելուն, ինչպէս նաեւ մասնաւոր բնակարաններ աւելցուելուն պատճառաւ քիչ եկաւ. ուստի եւ Ներսէս իւր բոլոր ոյժն ու նիւթական օգնութիւնը շխնայելով՝ գրեթէ ինչ որ դրամական կարողութիւն ունէր, բոլորն եւս այն ազգալոյս շինութեանը նուիրեց: — Այս միջոցները կրկին անգամ ձեռնտու եղան Ներսիսի, նախ՝ Լազարեան իշխանները եւ ապա Վանեցի մահտեսի Գասպարը, որ իւր կտակին մէջ Ներսէս արքեպիսկոպոսին գլխաւոր կտակատար կարգելով՝ նորա հիմնած ուսումնարանին *չորս հազար վեց հարիւր ռուբլի խոստացաւ*, այսպիսի պայմանաւ. «Նորակառոյց վարժարանի Հայոց աստի Թիֆլիզ քաղաքի՝ յատկացուցեն չորս հազար վեց հարիւր արծաթ մանէթ, եւ սովին գումարաւ գնեալ զանազարժ կայս, զեկամուտ նորին ամի ամի պիտոյացուցեն յաղագս վարժարանին յաւիտեանս ժամանակաց »:

1823-ին շինութիւնը բոլորովին վերջանալէն յետոյ՝ Ներսէս արքեպիսկոպոսը մեծ ծախքով զանազան տեղերէ վարժապետներ հրաւիրեց, որոց մէջ աւելի նշանաւորներն էին, առաջինը՝ Փարիզու Արեւելեան Լեզուաց վարժարանի հայկաբանութեան ուսուցիչ Յակոբ:

վարժապետ Շահան-Չրպետեանը <sup>(1)</sup>, եւ երկրորդը՝ Մուկուլայի Լազարեան ձեմարանի մէջ դասատու բազմարդիւն Յարութիւն վարդապետ Ալամդարեանը <sup>(2)</sup>:

Այս միջոցներն էր ահա Ներսիսի կենաց ամենադժուար տարիները. վասն զի մէկ կողմէն Պարսից եւ Ռուսաց մէջ սկսուելու նոր պատերազմին պատճառաւ Ռուսաց Տէրութենէն ընդունած առաջարկութիւններն ու հրամանները կկատարէր, եւ միւս կողմէն եփրեմ կաթողիկոսի հայրապետական գործառնութեանցը օգնութեան կհասնէր, Ներսիսեան նորահաստատ դպրոցին բարեկարգութեանը մեծապէս հոգ կտանէր, նորահրաւէր վարժապետաց դասախօսութեանը շատ անգամ անձամբ ներկայ գտնուելով՝ պէտք եղած տնօրէնութիւնները կանէր, Թիֆլիզու Կոնսիստորիայի եկեղեցական եւ երբեմն նաեւ աշխարհական դատերն ու դատաստանները կվճռէր, մէկ խօսքով (1819—24) այն աստիճանի ինքզինքը ազգային գործոց կամաւոր

(1) Շահան-Չրպետեան Յակոբ վարժապետը ծնած է 1772-ին դեկտեմբերի 19-ին Եղեւիոյ մէջ, եւ յառաջ եկած է մեր Ներսիսի Շնորհալուոյ Շահան եղբոր շառաւիղէն: Իւր սկզբնական ուսումը Եղեւիա քաղաքին մէջ Բաղիշեցի Առաքելեան Պօղոս վարդապետէն առած է. յետոյ Ասիայի ու Եւրոպայի այլ եւ այլ քաղաքները կրթուելով՝ Փարիզու Արեւելեան վարժարանին մէջ հայկարանութեան ուսուցիչ եղած է մինչեւ 1825, ուսկից Թիֆլիզ գնալով մինչեւ 1838-ը ապրեցաւ եւ 66 տարեկան մեռաւ:

(2) Ալամդարեան Յարութիւն վարդապետը որ իւր կենաց վերջին տարիները Նոր-Նախիջեւանի Ս. Խաչ վանքին վանահայր էր, առաջակայ վիրաւորելովը 1834 բուականին մայիսի 25-ին վախճանեցաւ: Թէ սորա եւ թէ Շահան-Չրպետեան Յակոբ վարժապետի ընդարձակ կենսագրութիւնը պատրաստած ենք ուրիշ նշանաւոր շատ հայկազանց կենսագրութեանց հետ մեկտեղ՝ մեր երկհատոր ՀԱՆՐԱՊԵՏՍԿ ԲԱՌԱՐԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՄՆՅ վերնագրով աշխատութեան համար, որ երկ (ինչպէս հրատարակած ենք) դրամական ձեռնտուութիւն գտնեմք մեր ազգայնոց կողմանէ, պիտի տպագրենք:

զոհ ըրած էր, որ երբ 1824-ին գաղղիացի ճանապարհորդ *Գամբա* ասպետը ղեսպանական պաշտօնիւ Պարսկաստան երթալու ժամանակ Թիֆլիզ գնաց եւ բարեկամացաւ Ներսէս արքեպիսկոպոսին հետ, զարմացաւ նորա անտանելի աշխատանացն ու մեծամեծ դիտաւորութիւններուն վերայ, յորս ակնյայտնի կերեւէր պայծառ արշալոյս մի բոլոր կովկասաբնակ եւ հետեւապէս ամենայն Հայոց փայլուն ապագային համար, ուստի եւ իրաւամբ գրեց իւր ճանապարհորդութեան մէջ եւ անաշառապէս հրատարակեց՝ թէ « Parmi les fondateurs des grands travaux, il n'en est pas de plus recommandable que Nersès, archevêque Arménien, à Tiflis. — այսինքն, Մեծագործութեանց ձեռք զարնող երեւելի անձանց մէջ՝ Հայոց Ներսէս արքեպիսկոպոսէն նշանաւորը չկայ Թիֆլիզու մէջ (¹) »:

Ուսումնարանի դասախօսութեան առարկաներն էին ի սկզբան հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, քերականութիւն եւ քրիստոնէական վարդապետութիւն. այլ եւ ռուսերէն լեզու, ընդհանուր աշխարհագրութիւն, թուաբանութիւն եւ վայելչագրութիւն. բայց Շահանջրպետեանի Թիֆլիզ հասնելէն յետոյ (1826) յաւելցաւ նաեւ եկեղեցական պատմութիւն եւ աստուածաբանութիւն: Սակեց քիչ մի յառաջ (1825) բացուեցաւ նաեւ Ներսիսեան ուսումնարանի տպարանը, որ ամենայն պարագայիւք ընծայեց ազնուական Ս. Ղա Գէորգ Արծրունին: Աշակերտաց թիւը հեազհետէ յաւելնալով՝ 400-ի հասաւ, բայց ուսումնարանի ընդարձակութեանը նայելով՝ նորա սրբազան հիմնադրին միտքն այն էր որ մինչեւ 800-ի հասնի:

(¹) Voyage dans la Russie méridionale, par le Chevalier Gamba. Paris, 1826, t. II, p. 157.

Ներսիսեան դպրոցը մինչդեռ այսպիսի գեղեցիկ սկզբնաւորութեամբ եւ մեծ յառաջադիմութեամբ ցանկալի պտուղներ կիսոստանար Հայաստանի նոր մարդկութեան, եւ ահա 1827 թուականին Ռուսաց եւ Պարսից պատերազմը բացուեցաւ, որով Ներսէսը Տէրութեան կողմանէ Ռուսաց բանակին գործակցութեանը հրաւիրուեցաւ եւ զօրաց հետ մէկտեղ երեւան գնաց:

Պարսից հպատակ՝ երեւանի ու Հին-Նախիջեւանի Հայերը՝ որ պատերազմի լուրն առնելով՝ սիրտերը կոտրած՝ յոյսերն Աստուծոյ եւ Ռուսաց պաշտպանութեանը վերայ դրած էին, երբ լսեցին որ Պասկեւիչ սպարապետին հետ մէկտեղ պատերազմականաց մէջ Պարսից բանակին վերայ կերթայ նաեւ Ներսէս, իսկոյն սիրտ առին, ուրախացան եւ արիացան, մանաւանդ այն միջոցին՝ երբ Պասկեւիչի ու Ներսիսի առաջեւ, ինչպէս Յեսուայ եւ Տապանակի առաջեւ՝ զօրաց պատերազմական փողերը հնչեցրնելու ժամանակ Սարտարապատի բարձրաբերձ պատերը՝ երիքովի հոյակապ պարիսպներուն պէս կայծակնահար եղածի նման փլան կործանեցան: Այնուհետեւ Ներսէս Հայոց հետ իբրեւ հայր ընդ որդւոց զրկախառն սիրով միանալով՝ իւր կենդանի օրինակովն ու քաջալերական խօսքերովը Հայկազանց սրտին մէջ ի վաղուց հետէ մոռացուած պատերազմական քաջութիւնն արթնցուց, որք Ռուս զօրաց հետ միանալով այնպիսի անձնանուիրութեամբ պատերազմեցան որ քիչ ժամանակէն բոլոր Պարսից Հայաստանը Ռուսաց ձեռքն անցաւ, ուսկից 8000 տուն կամ 40 հազար հոգի Պարսից լուծը թօթափելով՝ Ռուսաց քրիստոսազօր Տէրութեան պաշտպանութեանը հպատակեցան, եւ այն օրէն ազատեցաւ անօրինաց բռնութիւններէն էջմիածինը, — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի երկնահաստատ՝ նուիրական Ա. թոռ:

Ներսիսի այն սխրագործութեանց համար Ռուսաց Տէրութիւնը դեռ պատերազմը չվերջացած նախ՝ 1827-ին յունիսի 17-ին Բարձրագոյն հրամանաւ Ռուսաստանի մէջ եղած բոլոր Հայոց եկեղեցականներն ու նոցա կալուածները քաղաքական հարկատուութենէ եւ զինուորաց բնակութիւն տալու պարտքէն յաւիտեանս ժամանակաց ազատ արաւ. եւ երկրորդ՝ պատերազմին վերջանալէն քիչ մի յառաջ, իբրեւ առանձին պարգեւ (25 յունուարի 1828) Ներսէս արքեպիսկոպոսին Աղեքսանդրի նեւացւոյ ասպետական շքանշանը յուղարկել բարեհաճեցաւ, հետագայ կայսերական հրովարտակաւս.

*« Սրբազան Ներսէս, Արքեպիսկոպոս Հայոց,*

« Վաղ ժամանակէ հետէ եւ շատ դիպուածներու  
 « մէջ ցուցանելով Ռուսաց Տէրութեանս Ձեր գովելի  
 « մտերմութիւնը, մանաւանդ Պարսից այժմեան պա-  
 « տերազմին մէջ, — որ, ինչպէս կ'յուսամ շուտով բա-  
 « րեյաջող վերջ կունենայ, — Դուք Մեր զօրաց հետ  
 « մինչեւ այն աստիճանի թշնամեաց դէմ դրած էք որ  
 « Ձեր կեանքը վտանգի մէջ եղած է: Կովկասեան զօ-  
 « րաց առանձին հրամանատար գեներալ — ադիւտանտ  
 « Պասկեւիչը, շատ անգամ իմացընելով Մեզ Ձեր գո-  
 « վանի գործերը, յայտնած է որ պատերազմին բոլոր  
 « ժամանակը Ռուսաց օգտին նախանձաւոր հանդիսա-  
 « ցած էք անձամբ անձին, հաստատուն պահելով Հայ  
 « ժողովրդեան մէջ առ Մեզ ունեցած հարազատութիւնը,  
 « ոչ միայն Ձեր բարի խորհուրդներովն ու յորդորա-  
 « նօքր, այլ եւ Ձեր բուն անձին օրինակովը:

« Ձեր այսչափ օգտակար աշխատութեանց փոխա-  
 « րէն եւ Հայազգի ժողովրդեան Էմ առանձին շնորհա-  
 « կալութեանս նշան՝ արժան դատեցի վարձատրել Ձեզ

« սրբոյն Աղեքսանդրի նեւացւոյ ասպետական կար-  
« գովը, որոյ նշանները թղթոյս հետ յուղարկելով,  
« կմնամ Ձեր լաւութեանը ցանկացող. »

(Բնագրին մէջ ստորագրած է) ՆԻԿՈԼԱՅ.

Պարսից պատերազմէն վերջն սկսաւ Տաճկաց պա-  
տերազմը, որով աստուածային նախասահմանութիւնը  
նոր ճանապարհ բանալով Ներսէս արքեպիսկոպոսի  
համար, Տէրութեան կողմանէ 1828-ին մայիսի 17-էն  
եւ 21-էն Բեսսարաբիա հրաւիրուեցաւ, ուր բոլոր պա-  
տերազմին ժամանակը ճշմարտապէս դիւցազնական  
քաջութեամբ եւ եկեղեցական փառօք պաշտպան կա-  
ցաւ այն տեղի ազգայնոց, միանգամայն եւ Տէրութեան  
առ ինքն ունեցած հաւատարմութիւնը աւելցուց : Պա-  
տերազմէն վերջը՝ թէեւ եփրեմ կաթողիկոսը իւր ծե-  
րութեան պատճառաւ Աթոռը միայնակ կառավարել  
չկարողանալով՝ շատ կուզէր Ներսէս արքեպիսկոպոսին  
էջմիածին վերադառնալը, բայց Ռուսաց կայսրը 1830-ին  
ապրիլի 23-ին մասնաւոր հրովարտակաւ առաջնորդ  
նշանակեց գինքը Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ վի-  
ճակին, ուր այնուհետեւ 15 տարիի չափ կենալով՝  
հետզհետէ պայծառացոյց :

Գրիգոր արքեպիսկոպոսի մահուանէն վերջը (1827)  
Բեսսարաբիոյ Հայոց եկեղեցիները երեսի վերայ մը-  
նալով՝ եկեղեցական կալուածները շատ տեղ աւերուել  
էին, եւ Քիշնեւի առաջնորդարանը (որ հանգուցեալ  
Գրիգոր արքեպիսկոպոսին շինածն էր) ոչ միայն այն  
երկու տարուանը մէջ իւր առաջին շքեղութենէն  
զրկուած ու կիսաւեր դարձած էր, այլ եւ չզիտեմք  
որպիսի դրամական հաշուոց մասին քաղաքական իշ-  
խանութեան ձեռքն անցած էր. եւ ահա այն էր պատ-  
ճառը որ երբ Ներսէս արքեպիսկոպոսը Քիշնեւ գնաց

Եւ Հայոց առաջնորդարանը եկեղեցական իշխանութենէն ելած գտաւ, հարկադրեցաւ ի սկզբան տեղւոյն երէցփոխան Տէր-Յովակիմեան Մանուկ աղային տունը իջեւանիլ իւր 8 մարդիկներովը հանդերձ՝ յորոց առաջին երկուքն էին Ստեփանոս վարդապետ Արարատեան եւ Գէորգ վարդապետ Մկրտչեան:

Այնուհետեւ ներսէսը մեծ ուշադրութեամբ սկսաւ քննել վեճակին եկեղեցական գործերը եւ ըստ կարելոյն կարգի դրաւ, քաղաքական իշխանութեան ձեռքն անցած Հայոց առաջնորդարանը իրաւացի պատճառներով յետ առաւ, նորոգեց ու բարեկարգեց. քանի մի եկեղեցեաց մօտ հոգեւորական դպրոցներ բանալ հրամայեց եւ արդէն բացուածներուն վերայ փոյթ ու խնամք ունեցաւ. եւ որպէս զի Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութեան համար ուսեալ եկեղեցականներ պատրաստէ, Մանուկ Պէյ հայկազնոյն ձեռնտուութեամբը մասնաւոր կոնդակաւ Թիֆլիզէն Հնչեշտ հրաւիրեց Զմիւռնացի մեծահռչակ Մսեր վարժապետ Մսերեանը (այժմ մագիստրոս աստուածաբանութեան Մուկուայի Լազարեան ձեմարանին մէջ) եւ իւր վիճակի այլ եւ այլ քաղաքներէն շնորհալի պատանիներ յուղարկեց այն տեղ, որք պէտք եղած ուսումը սովորելէն յետոյ՝ քահանայութեան սրբազան պաշտօնն ընդունեցան ամենայն արժանաւորութեամբ, ինչպէս Օղեսսայի եկեղեցւոյ Աւագ քահանայ *Տէր Յովհաննէս* Թաթսիզեանը, բարեյիշատակ *Տէր Յարութիւն* Խաչենեանը, Հնչեշտի քահանայ *Տէր Յակոբ* Թօսունեանը, եւ այլն:

Մինչեւ այն ժամանակը որ եկեղեցական այլ եւ այլ զգեստները, մեծագնի անօթներն ու զարդերը գրեթէ առանց հաշուոյ եւ մատենի կմնար երէցփոխանաց ձեռքը, վերոյիշեալ երկու վարդապետները ներ-

սիսի կողմանէ վիճակին այլ եւ այլ քաղաքներն երթալով՝ իւրեանց Առաջնորդի առաջադրութեանը համեմատ ժապաւինեալ մատեաններ սահմանեցին վիճակին ամենայն եկեղեցեաց համար, զորս եւ Կոնստանտնուպոլիսի կնքովն ու իւրեանց ստորագրութեամբը վաւերացուցին: Նոյնպէս եւ եկեղեցեաց արժաթեղէն ու ոսկեղէն հին ու աւելորդ անօթները մասնաւոր ցուցակաւ ժողովեցին Քիշնեւի Կոնստանտնուպոլիսի տարին, եւ Ներսիսի հրամանաւր հալեցընելէն յետոյ վաճառեցին ու նոցա գնովը՝ մէկ կողմէն բազմավաստակ եւ փորձառու Սամուէլեան Յարութիւն Աւագ քահանային վերակացութեամբը՝ Քիշնեւի եկեղեցական խանութները, գինետներն ու ամբարները շինուեցան, եւ միւս կողմէն՝ բազմաշխատ երէցփոխան Առաքելեան Պետրոս աղայի հոգաբարձութեամբը Հայոց հանգստարանի մօտն եղած պտղաբեր ծառերով լեցուն ընդարձակ պարտէզը, որոց արդիւնքը մինչեւ ցայժմ թէ՛ նոյն իսկ Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ Կոնստանտնուպոլիսի, եւ թէ՛ — սորակարգադրութեամբ — վիճակին Հոգեւորական Կառավարութեանց ծախուցը կգործադրուի թէպէտ այն մեծածախ շինութեանց առաքելապատիւ Հիմնադրին դիտաւորութիւնը հաւանականաբար այս էր, որ տարուէ տարի եկամուտը շահեցընելով՝ Թիֆլիզու Ներսիսեան դպրոցին պէս մէկ ուսումնարան եւս Բեսսարաբիոյ վիճակին մէջ հիմնէ:

Ներսիսի այս ազգօգուտ եւ հանրաշահ դիտաւորութիւնը ժամանակի կարօտ լինելուն պատճառաւ, թէեւ ինքը չկարողացաւ գործադրել, բայց աստուածային նախասահմանութիւնը անկատար չթողուց իւր հարազատ եւ սրբազան պաշտօնէին նաեւ այս բաղձանքը, վասն զի անկէց 27 տարի անցնելէն յետոյ՝ մէկ անակնունելի կերպով՝ Այվազեան Գաբրիէլ գիտնական

վարդապետը (այժմ եպիսկոպոս) Փարիզէն Ռուսաստան եկաւ, եւ Ներսիսի առաջնորդութեան աթոռը նստելով՝ իսկոյն մէկ եկեղեցական ուսումնարան բանալու աշխատեցաւ, որ վերջը Նոր-Նախիջեւանցի Խալիբեան Յարութիւն աղայէն մեծ գումար ընդունելով՝ այժմու Խալիբեան ուսումնարանը բացուեցաւ, ըստ ամենայնի համաձայն Ներսիսի նպատակին, ուսկից թէ եկեղեցական եւ թէ աշխարհական երիտասարդներ ելան, յորոց այժմ ոմանք քահանայութեան, ոմանք վաճառականութեան եւ շատերը վարժապետութեան կպարապին այլ եւ այլ քաղաքաց մէջ:

Եւ այնպէս, մինչդեռ Ներսէս արքեպիսկոպոսը իւր ժողովրդոց վիճակը հետզհետէ բարւոքելու կաշխատէր Յովհաննէս Ը կաթողիկոսը վախճանեցաւ (1842 թուականին մարտի 26), որով եւ բոլոր ազգք Փանգեսի եզերքէն մինչեւ Նեւայի ափունքը «Քանի որ Ներսէսը կենդանի է, — կասէին միաբանութեամբ, — իրմէն աւելի արժանաւոր անձն չեմք ճանաչեր Լուսաւորչայ սուրբ Աթոռը ժառանգելու»: Այս լուրը հետզհետէ տարածուելով՝ արդէն Ներսէսը կաթողիկոսի տեղ ընդունուած էր Հայոց կողմանէ. բայց որովհետեւ Ռուսաց Տէրութեան Սահմանադրութեանը համաձայն՝ աշխարհիս այլ եւ այլ կողմերն եղած Հայոց եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորաց քուէարկութեամբը կրնտրուի կաթողիկոսը, Էջմիածնայ սրբազումար Սիւնհոգոսը իւր պարտականութեանը համեմատ Կոստանդնուպօլսոյ, Երուսաղեմի, Պարսկաստանի եւ ուրիշ տեղերու նշանաւոր եկեղեցականաց ձեռքովն իմացուց բոլոր Հայկազանց հին կաթողիկոսին մահն ու նորոյն ընտրութեան պատրաստութիւնը, որով եւ 1843-ին ամէն տեղէ պատգամաւորներ երթալով, ապրիլի 15—17 եղած քուէարկութիւններէն իմացուեցաւ

որ ըստ մեծի մասին Ներսէս արքեպիսկոպոսը կուզեն  
 Լուսաւորչի Աթոռակալ, ուստի եւ Ռուսաց կայսեր  
 քարձրագոյն հրովարտակովը նոյն տարւոյ Յոսատոսի  
 10-ին կաթողիկոս հաստատուեցաւ:

Ներսիսի ընտրութեան եւ կաթողիկոս հաստա-  
 տուելուն լուրը քանի մի օրուան մէջ մինչեւ ամենա-  
 հեռաւոր տեղեր տարածուելով՝ անպատմելի եղաւ  
 Հայկազանց ուրախութիւնը, մանաւանդ Կովկասաբնակ  
 Հայոց, որք ի վաղուց հետէ վայելած լինելով նորա  
 հայրական քաղցր սէրը, իւր բացակայութեանը պատ-  
 ճառաւ գրկուած էին նորա տեսութենէն. ուստի եւ  
 այն աստիճանի անհամբերութեամբ կապասէին իրեն՝  
 որ մէջերը Ներսիսի գալստեան վերայ խօսք եղած  
 ժամանակը, Աստուծմէ մասնաւոր կեանք կխնդրէին  
 որ արժանացրնէ զիրենք կրկին անգամ Ներսէսը տես-  
 նելու եւ նորա հայրապետական սուրբ օրհնութեանն  
 արժանանալու:

Բայց այս նոցա փափաքը շուտով չկատարուեցաւ.  
 վասն զի Ներսէս՝ Լուսաւորչի Աթոռը արժանապէս  
 ժառանգելէն յետոյ՝ Ռուսաց կայսրը Քիշնեւէն Պե-  
 տերբուրգ հրաւիրեց զինքը, որպէս զի կաթողիկոսը  
 դիւրութիւն ունենայ Հայոց ազգի ապագայ բարօրու-  
 թեանը համար կայսեր հետ երես առ երես խօսելու  
 եւ այս մասին պէտք եղած արտօնութիւնները խնդրե-  
 լու իրմէ. ուստի եւ Ներսէս 1843 թուականի վերջին  
 ամիսները Պետերբուրգ գնաց, ուր թէեւ ի սկզբան  
 քանի մի ամիս հիւանդացաւ, բայց յետոյ աստուածային  
 մասնաւոր ողորմութեամբը պէտք եղած առողջութիւնը  
 գտնելով՝ ժամանակին հարկաւոր ազգային խնդիր-  
 ներուն վերայ մտադրութիւն դարձուց, Պետերբուրգի  
 եւ Մոսկուայի եկեղեցեաց եւ նոցա պաշտօնէից բարե-  
 կարգութեանը վերայ հոգ տարաւ, իւր ազգօգուտ

դիտաւորութիւնները Ներքին Գործոց Ոստիկանին յայտնելով՝ նորա ձեռնադրութիւնը խնդրեց եւ ամենայն հարկաւոր բանի վերայ պէտք եղած ուշադրութիւնը դարձրնելէն յետոյ Պետերբուրգէն ելաւ:

Եւ որովհետեւ Քիշնեւի Կոնսիստորիային մէջ այնպիսի գործեր կային որ նոր կարգադրութեանց պէտք ունէին, վեհափառ կաթողիկոսն էջմիածին Երթալու ժամանակ, նախ՝ Քիշնեւ հանդիպեցաւ ու հարկաւոր տնօրէնութիւններն արաւ (1844, օգոստոսի 15), եւ ապա վիճակին քաղաքներէն անցրնելով՝ եկեղեցեաց բարեկարգութեանն ու դպրաց ժամասացութեանը վերայ մասնաւոր փոյթ ունեցաւ, ժողովրդական դպրոցները աչքէ անցուց ու նոցա մէջ եղած վարժապետները քաջալերեց. իւրեանց կոչմանն արժանաւոր եկեղեցականները առատօրէն վարձատրեց, անարժանները անաչառապէս պատժեց. երէցփոխաններէն եւս եկեղեցական փողերուն հաշիւները ճշդութեամբ ստանալու համար, երեք պատուաւոր *գործակալ* կամ ըստ Խրիմեցւոց՝ *Արոռակալ* դրաւ, որք էին. Բեսսարաբիոյ մէջ՝ Աւետեան *Ասուածասուր* աղան, Խրիմու մէջ՝ Տէօլվէթեան *Թորոս* աղան եւ Նախիջեւանի մէջ՝ Խալիբեան *Յարուքիւն* աղան, եւ սոցա վերայ պարտք դրաւ որ ամէն տարի բոլոր երէցփոխաններէն հաշիւ պահանջեն, տարեկան արդիւնքն ստանան՝ իւրեանց մօտը պահեն, եւ էջմիածնայ Սիւնհոգոսին յայտնելէն յետոյ՝ նորա կարգադրութեանը սպասեն:

Եւ այսպէս՝ Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ վիճակը, ուր գրեթէ 17 տարի առաջնորդութիւն արած էր, վերջին անգամն եւս—իբրեւ կաթողիկոս—հաստատուն հիման վերայ բարեկարգելէն յետոյ՝ ճանապարհը շարունակեց եւ 1845-ին դեկտեմբերի 8-ին *Սսարուզոյ* քաղաքը հասաւ, ուր Աժտէրիսանի առաջնորդը օրերով

յառաջ այն տեղ սպասելով՝ իւր եկեղեցական խմբին ու աշխարհական եւ քաղաքական անձանց հետ մէկտեղ վայելուչ ընդունելութիւն արաւ: Ներսէս այս տեղի ազգային գործերուն եւս առանձին մտադրութիւն դարձրնելու եւ բարեկարգելու համար մէկ ամբողջ շաբաթ կացաւ, ուսկից ճանապարհը շարունակելով՝ դեկտեմբերի 16-ին *Անանուր* հասաւ:

Թիֆլիզաբնակ Հայերը այնքան ժամանակէ հետե սպասած հայրապետին գալուստը լսելով՝ իսկոյն բոլոր խանութներն ու գործարանները փակեցին, եւ վեհափառ այցելուին ընդառաջ զնալ փութացին, որ Թիֆլիզու *Վերս* կոչուած տեղէն մինչեւ Դիգոմեան դաշտը եւ անկէց եւս մինչեւ Մրցխէթայի մերձակայքը քանի մի վայրկենի մէջ արանց եւ կանանց բազմութեամբ լցուեցան. իսկ այն փողոցները՝ ուսկից պիտի անցնէր կաթողիկոսը, նոցա վերայ շինուած փառաւոր տներուն պատուհանները, պատշգամներն ու կտուրները գոյնզգոյն հագուստներով զարդարուած Հայ եւ Վրացի տիկիներն ու օրիորդները բռնած էին, որոց ամենուն երեսին վերայ իւրեանց հոգւոյ ներքին ուրախութիւնը կփայլէր պայծառապէս:

Միւս օրը, այսինքն դեկտեմբերի 18-ին առաւօտը՝ Վրաստանի եւ Իմերեթի առաջնորդ բարեյիշատակ Կարապետ արքեպիսկոպոսը՝ երկու եպիսկոպոսաց, երկու վարդապետաց եւ քանի մի աւագ քահանայից հետ մինչեւ *Դուշեք* զնաց դիմաւորելու վեհափառ հայրապետին, ուր իւր թեմի բարելաւ դրութեան գրաւոր չայտարարութիւնը մատուցանելէն յետոյ, ուղեկից եղաւ կաթողիկոսին մինչեւ յիշեալ *Վերս* կոչուած տեղը:

Այս տեղ բերած ու պատրաստած էին հայրապետական գաւազանը, դրօշն ու կառքը. եւ այս տեղ եկած կսպասէին Անդրկովկասեան սահմանի քաղաքա-

կան գլխաւոր կառավարիչ գեներալ-լէյտէնանտ *Լա-  
դիկուսկին*, հրամանատար զօրաց Հիւսիսային Դաղեստանի  
գեներալ-լէյտէնանտ կնիազ Բարսեղ *Բեհրուսեանը*, Կով-  
կասեան փոխարքայի ղիւանատան վերատեսուչը եւ  
ուրիշ շատ նշանաւոր անձինք, որք վեհափառ այցե-  
լուին աջը համբուրելով՝ նորա հայրապետական օրհնու-  
թիւնն առին: Յետոյ կաթողիկոսական կառքը նստելով  
Ներսէս սկսաւ յառաջ երթալ երկու վարդապետաց հետ,  
որոց մէկը հայրապետական զաւազանը կկրէր եւ միւ-  
սը՝ դրօշը. կառքին ղիմացէն եւս զարդարուն ձիերով  
երկու պատուաւոր հայկազունք կերթային, եւ ետեւէն  
երկու շաթիրները (կաթողիկոսական սպասաւորները)  
կարմիր հագուստներով, կառքին աջ ու ձախ կողմը  
կանգնած:

‘Իեռ քաղաք շմտած’ ընդառաջ ելին Ներսիսի՝ օ-  
գոստափառ կայսեր Փլիզել-աղիւտանտ կոմս *Բենկեն-  
դորֆ*ն ու փոխարքայի որդին, եւ կնիազ *Վորոնցովի*  
կողմանէ շնորհաւորցուցին վեհափառ հայրապետին  
բարեյաջող ճանապարհորդութիւնը: Երբ քաղաքին  
ծայրը հասաւ, Թիֆլիզու զաւառապետ գեներալ-մայիօր  
*ժերեքցով*ն ելաւ ղիմացը եւ իւր ուրախութիւնը յայտ-  
նեց վեհափառին ողջամբ ժամանելուն վերայ. յետոյ  
քիչ մի յառաջ մղելով կառքը՝ Վանքի մայր եկեղեցւոյն  
ահագին զանգակի առաջին դրնդիւնը լսուեցաւ, որուն  
ձայնակից եղան իսկոյն Հայոց 24 եկեղեցեաց միւս  
զանգակները՝ Ներսիսի քաղաք մտնելուն պատճառաւ  
եկեղեցեաց ուրախութիւնը հրատարակելով:

Աղեքսանդրեան հրապարակի վերայ կապասէին  
Թիֆլիզու բոլոր եկեղեցականները, ուր քանի մի վայր-  
կենի մէջ անթիւ բազմութիւն արանց եւ կանանց լը-  
ցուած էր: Ներսէս տեղ հասնելուն պէս՝ ելաւ կառքէն  
եւ իւր հայրապետական օրհնութիւնը բաշխելով ժողո-

վրրդոց՝ իրեն համար պատրաստուած ամպհովանւոյն տակը կանգնեցաւ: Յետոյ ձայնաւոր կղերաց « Ուրնի լեր սուրբ եկեղեցի » շարականին ներդաշնակ երգեցողութեամբը Վանքի մայր եկեղեցին գնաց, ուր նախ կարապետ արքեպիսկոպոսը մէկ համառօտ ատենախօսութիւն ընելով ժողովրդեան կողմանէ՝ փառք տուաւ Թագաւորին թագաւորաց ու վեհափառ կաթողիկոսին գալուստը շնորհաւորեց. եւ ապա Ներսէսն ինքը, որ իւր առ ազգն ունեցած անչափ սէրը կարճառօտ կերպով բացատրելէն յետոյ՝ քաջալերեց զժողովուրդը իւրեանց ապագայ բարօրութեան համար եւ յետոյ եկեղեցականաց հանդիսաւոր ուղեկցութեամբը Վեհարան մտաւ:

Միւս օրն սկսաւ ընդունել Ներսէս՝ մեր եւ օտարազգի այցելուները, եւ Թիֆլիզու քաղաքացւոց կողմանէ մէկ գեղեցիկ ճառ կարդաց Պարոն Տէր-Շմաւոնեանը: Ճառէն յետոյ մարդ պէտք էր ականատես լինէր որ կատարելապէս հասկացողութիւն ունենար այն փոխադարձ սիրոյն վերայ, որով հոգեւոր որդիքը իւրեանց հօր զիրկը կգիմէին ուրախութեամբ, եւ եկեղեցւոյն հայրը անպատմելի սիրով ողջագուրելով զիրենք կօրհնէր ու կքաջալերէր: Այն մէկ անգուգական սէր էր՝ մարդուս հոգւոյ քաղցր զգացմունքէն յառաջացած, որ միայն հոգւով կարելի էր իմանալ. եւ մարդկային ճարտարութիւնն ու զրիշը տակաւին չունին այն միջոցներն ու բառերը որ կարողանան ճշգրութեամբ բացատրել ապագայից: — Սոյն օրն եկան այցելութեան նաեւ Կովկասու Փոխարքայ Մ. Ս. Վորոնցովն ու իւր կիներ:

Այնուհետեւ կաթողիկոսը ամբողջ չորս ամիս կեցաւ Թիֆլիզ, ուր ամէն բանէն աւելի մտադրութիւն դարձուց Ներսիսեան իւրակերտ դպրոցին բարեկար-

գութեանն ու յառաջադիմութեանը, եւ 1846 թուակա-  
նին մայիսի 5-ին ճանապարհ ելնելով՝ նոյն ամսոյ 8-ին  
Երեւան եւ անկէց եւս Ս. Էջմիածնի մայր Աթոռը հասաւ:

Մէկ ամսէն վերջը, այսինքն Յունիսի 9-ին նշանա-  
կելով օծութեան օրը՝ ամէն տեղերէ 800-էն աւելի  
եկեղեցական եւ աշխարհական անձինք գնացին հան-  
դիսին ներկայ գտնուելու, յորոց 179 հոգիքը միայն  
եկեղեցականք էին, այսինքն 14 արքեպիսկոպոսունք  
եւ եպիսկոպոսունք, 50 վարդապետք, 65 աւագ քա-  
հանայք եւ 50 աւագ սարկաւազունք եւ ուրարակիրք:  
Օծութեան հանդէսը վերջանալէն յետոյ՝ երկու շնորհաւո-  
րութեան ճառեր կարդացուեցաւ եկեղեցւոյն մէջ, որոց  
մէկը *Շահխարունեան* Յովհաննէս եպիսկոպոսը կարդաց  
հայերէն լեզուաւ, եւ միւսը *Շահնազարեան* կարապետ վար-  
դապետը ռուսերէն լեզուաւ. իսկ այլ եւ այլ տեղերէ քա-  
նէն աւելի նոյնպիսի ճառեր ընդունեցաւ Ներսէս, որպէս  
նաեւ զանազան երգեր, որոց մէկուն քանի մի տունը  
մեր Ընթերցողացը իբրեւ ճաշակ կղնեմք այս տեղ (\*).

Թընդաց երկինք անեղ ի ձայն նայթեաց կամարն ամպրոպեան,  
Յոլացան լոյս գոյն աղեղան ձիւք շող ի շող շողշողան.  
Եկն ի հանդես այր սրբազան՝ նրսաւ յԱթոռ լուսակերս,  
Հանդիսակիցք փառազարդեալ անդ շար ի շար բազմեցան:  
Հարցեմ ո՞վ է, հարցեմ ո՞ն է վեհանձն հոգին դիւցազեան,  
Որ Հայոց Տէր, Հայոց իշխան, Հայոց Ներսէս Սրբազան:  
Փողք հրնչեցին գաբրիէլեան զուարթունք ի դուրս քափեցան  
Ընդ օդ վրնիս սաւառնացեալ թեւս բարախեն գան ի գան.  
Դեռ ոչ գիտեն առ ինչ բազմի վեհ փառաւոր ծերունին  
Եւ թէ առ ինչ հրեւիին իւրնդան յայն լուսապանձ տեսարան:  
Հարցեմ ո՞վ է, եւ այլն.

(\*) Այս երգը բանաստեղծութիւն է *Արարատեան* Աղեքսանդր վար-  
դապետին, որ երկար լինելուն պատճառաւ՝ առ այժմ առաջին չորս  
տունը միայն տպեցինք:

Փառացն Ասուած անեղատես վերուս ի վայր որոսաց.  
 ,, Դա է, ասէ, իմ սիրելին, սիրս իմ դրմա հաւասաց.  
 ,, Առե՛ք ըզքազ զայս խառանիւ, առե՛ք զայս փող լուսափայլ  
 ,, Դի՛ք ի գրլուխն, ասացե՛ք թէ՛ Ասուած ըզեզ պրսակեաց“ :  
 Հարցե՛ք ո՞վ է, եւ այլն :

Խրնդաց երկինք, խրնդաց երկիր յայս ձայն փառաց ասուածեան  
 Սրբնզք ձայնեն գերասինան՝ սաւիղ՛ երգեն սասնաղեան,  
 Ինքն յԱթոռ լուսանրկար քազրն փայլե՛ր ի գրլուխ,  
 Դեմս ի խոնարհ կալեալ ասե՛ր, թէ ,, Այս փառաց չեմ արժանի“ :  
 Հարցե՛ք ո՞վ է, հարցե՛ք ո՞ն է վեհանձն հոգին դիւցազեան,  
 Որ Հայոց Տէր, Հայոց Իշխան, Հայոց Ներսէս Սրբազան. եւ այլն :

Սոյնպիսի մէկ երգ եւս Ներսիսի Երեւան մտած  
 միջոցին երգեցին, որոյ առաջին տունը այս է.

Երգեցե՛ք ազգ Հայոց զգալուս մերոյս հրակայի,  
 Որ երբեմն պատճապանե՛ր զպարիսպ սուրբ էջմիածնի.  
 Աթոռն ասուածիջեան ձեռամբ սորին փրկեցաւ,  
 Անտէրունչ Հայկազանց տէր եւ փրկիչ յայսնեցաւ. եւ այլն :

Օծութեան հանդիսէն մէկ ժամ անցնելէն յետոյ  
 1950 հոգւոյ կերակուր տրուեցաւ, յորոց 250-ը Վե-  
 հարանի սեղանատան մէջ նստան, 1250-ը հասարակաց  
 սեղանին վերայ, եւ 450-ը (որ ստորաստիճան ուս  
 զինուորականք էին) Ազգարապատի ընդարձակ բակին  
 մէջ պատրաստած տեղւոյն վերայ: Երեկոյին վանքի  
 բոլոր տեղերը ճրագալուցով զարդարուեցաւ եւ բազ-  
 մութիւնը մինչեւ կէս գիշեր ուրախութիւն արաւ պա-  
 տերազմական երաժշտականաց եւ ազգային փողհարաց  
 ու թմբկաց հնչմամբը:

Հանդիսէն մէկ օր վերջը արձակեց Ներսէս այլ եւ  
 այլ տեղերէ եկած բոլոր եկեղեցականները, ոմանց  
 բերանացի շնորհակալութիւն անելով, ոմանց օրհնու-  
 թեան կոնդակ տալով եւ ոմանց խաչով կամ կամի-  
 լաֆկայով եւ կամ փիլոնով վարձատրելով, իբրեւ նշան

նոցա այն մեծ հանդիսին արժանանալու բաղղն ունե-  
նալուն. իսկ ինքը առանց ժամանակ կորուսանելու  
նոյն օրերէն սկսաւ Ս. Էջմիածնայ Սիւնհոգոսի բարե-  
կարգութեանը հոգ տանել, եւ նորա սրբազան անդամոց  
եւ աշխարհական պաշտօնատեարց գործողութիւննե-  
րուն վերայ պէտք եղած մտադրութիւնը դարձրնել:

Նոյն տարւոյ հոկտեմբերի 27-ին Գիւտ խաչի կիւ-  
րակէ օրը կատարեց Ներսէս մեռն օրհնելոյ մեծ  
հանդէսը, որով աշխարհիս ամէն կողմէն դարձեալ  
եկեղեցական եւ աշխարհական անձինք գնացին Էջ-  
միածին. եւ յետոյ դեկտեմբերի 17-ին նորէն Թիֆլիզ  
վերադարձաւ, ուր առաջուան պէս մեծ բազմութեամբ  
ընդառաջ գնացին ազգայինք եւ օտարք եւ ամենայն  
սիրով ընդունելով զինքը՝ նորա հայրապետական  
օրհնութիւնն առին:

Այնուհետեւ Ներսէս՝ չնայելով նորա ծերութեան  
հասակին, իւր հայրապետական գործերը կատարելէն  
զատ՝ մեծ եռանդով կաշխատէր նաեւ ազգիս բարոյա-  
կան դաստիարակութեան եւ ուսումնական յառաջա-  
դիմութեան մասին. եւ այս պատճառաւ հրաման հանեց  
որ Թիֆլիզու Հայոց ամէն եկեղեցեաց սրահներուն մէջ  
ժողովրդական դպրոցներ բացուին: Բայց որովհետեւ  
Տէրութեան օրէնքն այնպէս էր որ Վրաստանի ամենայն  
դպրոցները կովկասու Ուսումնական Շրջանակի իշ-  
խանութենէն կկախուէր, որով եւ շատ դժուարութեամբ  
կբացուէին այն դպրոցները, Ներսէս պէտք եղած տը-  
նօրէնութիւններն ու գրագրութիւններն արաւ, եւ  
1853-ին հրաման եկաւ Տէրութենէն որ Հայոց եկեղե-  
ցեաց եւ վանօրէից մօտ բացուած դպրոցները կովկասու  
Ուսումնական Շրջանակի իշխանութենէն դուրս լինին,  
եւ Հայ եկեղեցականաց կառավարութեանը մնան:

Յետոյ Թիֆլիզու եւ Էջմիածնի տպարաններէն ելած գրոց տպագրութիւններուն վերայ ուշադրութիւն դարձրնելով՝ պակասաւոր գտաւ. ուստի եւ 1854-ին չորս տպագրական մամուլ բերել տուաւ Եւրոպայէն՝ Մուկուլայի վաճառական Անանեան Յովհաննէս աղային ծախիւքը, որոց երկուսը Թիֆլիզու տպարանին թողուլ հրամայեց եւ երկուսը Էջմիածին տանել:

Էջմիածնի մէջ եւս իւր անմահ յիշատակը նաեւ տեսական կերպով թողելու մտքով 1847-ին մէկ ընդարձակ անտառ շինել տուաւ Ներսէս, յորում 47 հազար երկու հարիւր երեսուն այլ եւ այլ տեսակ պտղատու եւ անպտուղ ծառեր տնկեց Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսին վերակացութեամբը, որպէս զի թէ ամառուան սաստիկ տաքերու ժամանակ զքօսանաց տեղ լինի վանքի միաբաններուն, եւ թէ միանգամայն ժամանակով Էջմիածնի համար պէտք եղած վառելու փայտը կտրուի անկէց:

Նոյնպէս մէկ գեղեցիկ լիճ շինել տուաւ վանքի պարսպին մօտ, որոյ աւելցած ջուրը պէտք եղած ժամանակ առանձին ջրանցքներով անտառը կթափուի եւ հարկաւոր տեղերը կջրէ: — Այս լճին մէջ ամառ ձմեռ ձուկներ կպահէ վանքին տնտեսը:

Եւ այսպէս, Ներսէս իւր սարկաւազութեան օրէն մինչեւ իւր կաթողիկոսական կենաց վերջին օրը ազգիս կենցաղօգուտ պիտոյիցն ու նորա բարոյական եւ ուսումնական յառաջադիմութեանը աշխատելով, վերջապէս 1857 թուականին փետրուարի 13-ին, իւր 86 տարեկան հասակին անակնկալ մահը յափշտակեց զինքը Հայաստանեայցս Մայր Աթոռէն, եւ մարմնոյն երկրաւոր կապանքն արձակելով, նորա աստուածարեալ հոգին երկնային կապանքով միացուց իւր Արարչին հետ:

Միւս օրն առաւօտը Ներսիսի մահուան լուրը Թիֆլիզու հայկական եկեղեցեաց ողբաձայն զանգակնահարութեամբը տարածուելով, բոլոր Հայերը սգոյ մէջ ընկղմեցան :

18-ին կէսօրուան չորս ժամուն մարմինը մեծ հանդիսիւ վեհարանէն վանքի մայր եկեղեցին տարին ի ներկայութեան փոխարքային Կովկասու, ուսս արքեպիսկոպոսին Վրաստանի, գինուորական եւ քաղաքական մեծամեծ պաշտօնատեարց Թիֆլիզու եւ անթիւ բազմութեան այլ եւ այլ ազգի եւ աստիճանի անձանց :

Վեհափառ հանգուցելոյն մարմինը՝ էջմիածնի Սիւնհողոսի սրբազան անդամոց յապաղելուն պատճառաւ ամբողջ երեք օր պահուեցաւ յիշեալ եկեղեցւոյն մէջ, ուր բազմութիւն արանց եւ կանանց առաւօտուրնէ մինչեւ երեկոյ ուխտաւորաց պէս այն եկեղեցին յաճախելով՝ Ներսիսի Աջը կհամբուրէին :

Այն երեք օրը հեռուէն դիտողին այնպէս կերեւէր թէ նոյն միջոցները Թիֆլիզու մէջ ազգութեան եւ հաւատոյ կողմանէ ամենեւին տարբերութիւն չկայ, վասն զի ոչ միայն զանազան քրիստոնեայք, այլ եւ Հրեայք եւ Մահմետականք կերթային իւրեանց վերջին համբոյրը տալու :

Վերջապէս փետրուարի 24-ին պատարագէն վերջը հանգստեան հանդէսը կատարուեցաւ նոյն եկեղեցւոյն մէջ, ուր ժողովուած էին Թիֆլիզու բոլոր եկեղեցականքը եւ որոց գլուխ կեցած էր հանգուցեալ հայրապետին արժանապէս ամենասիրելի եղած անձը՝ Սարգիս արքեպիսկոպոս *Չարաշեան* :

Յուզարկաւորութեան հանդէսը կէսօրուան 2-րդ ժամուն կատարուեցաւ : Ամենէն առաջ տասներկու հայ ձիաւորք կերթային եւ սոցա ետեւէն դազաղակիր կառքը ոսկեզարդ սեւ ամպհովանիով ծածկուած եւ

վառ ճրագներով շրջապատուած: Յետոյ կերթային Ներսիսեան դպրոցի աշակերտքը երկու կարգ շարուած եւ ձեռքերը վառ մոմեր բռնած. քիչ մի անդին սեւազգեստ եկեղեցականքն ու դագաղը, որ եկեղեցական անձինք կտանէին. իսկ դագաղին ետեւէն փոխարքայն եւ ամէն աստիճանի զինուորական եւ քաղաքական անձինք կերթային, եւ ապա բազմութիւն անթիւ ժողովրդոց զանազան ազգաց:

Քաղաքէն դուրս *Էրիվանսկիյ գաւսաւ* ասուած տեղը կրկին հոգեհանգիստ կատարուեցաւ, եւ վեհափառ հանգուցելոյն դագաղը փակ կառքի մէջ դրուելով՝ Սիւնհոդոսի անդամոց եւ ռուս հեծելազօրաց պահպանութեամբը էջմիածին յուղարկուեցաւ: Նոյն օրը հայկազն Վարդան Սասունաձատրեան Արշակունի իշխանը մեծածախ հոգեհաց պատրաստելով, բոլոր յուղարկաւորները՝ որպէս նաեւ Թիֆլիզու հայ արհեստաւորները կերակուրի հրաւիրեց, եւ արգելանոցի մէջ բռնուած անձանց դրամական օգնութիւն արաւ: — «Սյն օրը կերակրուող անձանց թիւը 10 հազարէն աւելի էր» կասէ Թիֆլիզու Կովկաս լրագիրը:

Երկու օրէն վերջը էջմիածին տարին հանգուցելոյն մարմինը, եւ ըստ կանոնի Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ մարմնոյն օժումը շքեղաշուք հանդիսիւ կատարելէն յետոյ, վանքի գաւթին աջակողմը՝ Գանիէլ կաթողիկոսի շիրմին մօտը թաղեցին:

Սյնուհետեւ էջմիածնի Սիւնհոդոսին կարգադրութեամբը Հայաստանեայց եկեղեցիները ամենայն տեղ հանգստեան պաշտօն կատարեցին, եւ մինչեւ նոր կաթողիկոսի ընտրութիւնը՝ Ներսիսի անունը յիշատակեցին սուրբ պատարագի մէջ:

Եւ այսպէս, Ներսիսի մահուան գոյժը աշխարհիս չորս կողմը տարածուելով՝ ազգային եւ օտար լրա-

գրապետներէն ոմանք իւրեանց թերթերուն նիւթ արին այս մեծահռչակ Հայկազնոյն համառօտ մահացուցակը, եւ ոմանք եւս դամբանական ճառեր հրատարակեցին, որոց մէջ Փարիզ տպուած 1857 թուականի «Մասեաց Աղաւնի» օրագրոյն բանաստեղծական գրուածքը ամենէն իմաստալի տեսնելով՝ պատշաճ կհամարիմք այս տեղ ամբողջապէս հրատարակել.

« Հ Ա Ն Գ Ի Ս Տ Յ Ա Ի Ի Տ Ե Ն Ի Յ »

## Տ Ե Ա Ռ Ն Ն Ե Ր Ս Ե Ս Ի

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ .

« Զայն գուժեաց յԱյրարասայ, եւ հրնչեցին բեւեո՛ք կրկին,  
Նրնջեաց Հովիւրն մեր արթուն, եւ սուգ պատեաց զամենեսին.  
Ահագինքս մրոքնչեաց սպիտակափառքն մեր Մասիս,  
Սեպունհ, Կովկաս եւ Արագած ընդ Տորոսի հաւաչեցին:

Ո՛հ, այս քանիցս այրիացար, Եկեղեցիդ Հայաստանեայց,  
Այս քանի արժար հեղուս ի քոյդ չբնաղ ականողեաց.  
Զո՛ւր վիժես դու քաղցրահամ յաղինասիպրդ դարասից  
Երե դառն ուխտ արժատուաց մինչեւ ի ծով լայնասարած:

Մերք շուրջ հայիս կոյսդ աչագեղ ի բաց ըզօղքն պարուրեալ...  
Ա՛հ, մինչեւ ցէրք յաջմե բոսոր՝ ընդ անեկե ծուխ մբրբրկեալ  
Տեսանիցես եւ սարսիցես եւ թաւալեալ անկանիցես  
Մինչեւ անդրեն սիւզ արփենւոյն ի դեմսրդ սուրբ առնու ծաւալ...

Լուսածրնունդ քո զաւակունն ընդ սիեզերս վայրավասին  
Քեզ ողբակիցք են ի սրբե, ընդ քեզ ի ջայլքս գումարին.  
Հօսապետքն զաթոռով քոյ սեւաթոյր սարածանեն,  
Եւ խառանց հոյլք խուռներամ դրոնոյք ըզբեւ սալ խուռնապին:

Են են, ճհ, եւ խորթացեալք ի սուրբ զրկացրդ մայրենի,  
Որոց վայրք եւ ժամանակք էտուն զոզցես սիրս վայրենի,  
Եւ իսրնսան ընդ վիճքս քո եւ ընդ պարծանսրդ սագնապին.  
Ա՞յսպէս ուսան ի Լասիոն, սնյսպէս յորդւոց Ալբիոնի...

Բայց քեզ յնւ՛՛, Մայր անարատ, պայծառ աւուրքն այն առաջին  
Յորս հոգւոց մեր Լուսատւին ցուցաւ տեսիլ, բանք անագինք,  
Ի՛բր օղիք ոչ նոյնգունակ անցին ընդ հուրքն եւ ընդ ջուր  
Մինչեւ էլին ի սուրբ հանգիստ, մինչեւ բացան նոցա երկինք.

Նրնջեաց Ներսէս արժանընտիր արքունակալ սուրբ Ներսիսեանց,  
Ողջակիզեալ առ Տէր ու առ Հայս սիրոյ բոցովքն գերազանց,  
Վէհին սասն անակնառու, եւ կրքսերաց հայր խընամոտ,  
Եւ սրտին կորով ըզհուր, վառեւ յալիս գլուխ հերապանձ :

Դու նվ Հայր, կառնդ Իսրայէլեան, յափրժեսակեալ յանկարծ ի մենջ,  
Յո՞ դիմես ի մուայլ երկրէ շաղեալ իլոյս փողփողենեջ,  
Ո՞ւր բոյինդ Նդիսեոս, ո՞ւր Մովսիսին յաջորդ Յեսու,  
Ո՞ւմ սացէ եւ Աղաւնիս զբերանոյն շիղ բոյինասենչ...

Այո, շիղ ի բերանին դարձ ի սապանդ էջմիածնի  
Աղաւնեակս առնէր Նոյեան փուրջալ ի գիրկսրդ հայրենի.  
Սասանեալ եւ սրբաբէկ արդ առ ափամբ Սենեայ մրնչէ,  
Գուժկան՝ ո՛չ աւեսաբեր կացեալ. աւնդ, Հայասանի :

Առ այժմիկ հուպ դու էին կաս արքունոյ վէհ Դիսապէտ.  
Քաղցր ակնարկեա ի Գահ բոյին, տուր պայազատ զոք քեզ հանգէտ.  
Շող լուսոյն բորք ծագեսցէ ի պաշտելին Իջման տեղի,  
Եւ Ներսիսեան թէ ո՛չ անուամբ՝ հոգւով սացի մեզ Հայրապէտ :  
Յայնժամ սուգ ի ցրնծութիւն դարձցի ազգիս բորգումական,  
Հօտք եւ հովիւք ըզթինդ սացեն խուռն ի գաւիթրս սրբութեան  
Նրդնուլ զուխս սրբանուէր քում յաջորդին արժանաւոր,  
Կալ անասան ի բոյդ հաւատ, ի յոյս ու ի սէր եղբայրական» :

Այս մեծահռչակ կաթողիկոսի արտաքին կենացն  
ու գործոցը վերայ այսքան խօսելէն յետոյ, դառնամք  
այժմ նորա ընտանեկան կենսագրութեանը :

Ներսէսը բնութեամբ բարեսիրտ, աշխատասէր, ծանր  
եւ խօսքի տէր մարդ էր. իւր գլխաւոր գործերը անձամբ  
կանէր, եւ ամէն բանի մէջ զարմանալի անվեհերութիւն  
կցուցրներ :

Հասակը միջակ էր, մարմինը նիհար, աչքերը սեւ ու վառվռուն, դէմքը սուրբ ու պատկառելի, եւ իւր ծանր ու մեղմ խօսակցութիւնը բնական ճարտասանութեամբ զարդարուած:

Իրեն ասածն ու արածը լաւ հասկանալով եւ իւր հայրապետական պարտաւորութիւնները անքուն գործունէութեամբ կատարելով, չէր կարող համբերել եթէ իւր կամքը, փափագն ու հրամանները որ եւ իցէ պատճառով ուշացուին կատարուելու:

Հասարակաց բարւոյն եւ մասնաւորապէս Հայոց ազգիս բարօրութեան վերայ ունեցած սէրն ու աշխատանքը գերագոյն աստիճանի հասած էին:

Ո՛րքան որ իւրեանց պարտքն ու աստիճանը ճանաչող եկեղեցականները վարձատրելու եւ քաջալերելու համար առատ էր եւ յօժարափոյթ, նոյնքան եւս իւրեանց կոչմանն անարժան հոգեւորականները պատժելու եւ յանդիմանելու համար պատրաստի:

Ամէն մարդու խօսքի շուտով չէր հաւատար, բայց եթէ քանի մի անգամ փորձելով ճշմարիտ ճանաչէր զինքը, մեծ մտերմութեամբ ու սիրով կվարուէր հետը:

Իբրեւ Հայաստանցի՝ շատ հեւրասէր էր. եւ երբ հեռաւոր տեղերէ Հայեր կերթային իրեն, ոչ միայն սիրով կընդունէր զիրենք, այլ եւ վանքի պարսպին մէջ առանձին սենեակ նշանակելով՝ կերակուր տալ կրպատուիրէր տնտեսին, եւ երբեմն եւս (ըստ արժանաւորութեան անձին) սեղանակից կանէր իրեն:

Երբ որ եւ իցէ առաջնորդէ կամ Կոնստանտնուպոլիսի աշխատի լուր առնուր՝ որոյ հետեւանքը ազգութեան ամօթ եւ նախատինք կընար բերել, գիշերներով քունը չէր տաներ եւ խոր մտածութեանց մէջ կընկղմէր. այն միջոցները սաստիկ նեղսիրտ կլինէր. բայց երբ իւր մտերիմներէն մէկը քաղցրութեամբ հասկացընէր իրեն

որ իւր կենացը վնաս է այնքան մտածելը, իսկոյն իրեն արածը պակասութիւն ճանաչելով՝ « Ես Հայ ազգի կենաց վիճակը կարգաւորեցի, կասէր ժպտելով, բայց իմ կենաց վիճակը դեռ չկարողացայ կարգաւորել »:

Սովորութիւն ունէր իւր սեպհական գրքերուն եւ ուրիշ բաներուն վերայ իւր ձեռքովը մակագրութիւն անել, եւ ինչպէս կերելի նորերս գտնուած նորա մէկ պղնձէ կաղամարին (Թանաքամանին) վերայ գրուած ոտանաւորէն, ներսէս իւր մանկութեան ժամանակէն ունէր այդ սովորութիւնը: Կաղամարն այժմ իւր եղբորորդի Շահազիզեանց — Կամսարական Յարութիւն աղայի մօտն է, եւ վերան այս ոտանաւորս գրուած է.

ՆԵՐՍԷՍ ԳՊԻՐՍ ԱՇՏԱՐԱԿՅԻ,  
 ՀՈՔԵԻՈՐԳԻՍ ԳԱԼՈՒՍՏ ՊԵՏԻ,  
 ԱՌԻ ԱՐԳԵՍՄԲ ՄՍՐՄՆՈՅՍ ԾՆՈՂԻ  
 ԶԱՅՍ ԿԱՂԱՄԱՐՍ ՊԻՏԱՆԻ,  
 Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ԵՐԵՍՆԵՅՈՒՆ  
 ԵՐԿԶԱՐԻԻՐԵԱԿՆ ԸՆԴ ՀԱԶԱՐԻՆ (ՌՄԼԷ = 1788):

Վերջապէս կմնայ մեզ յաւելցընել, որ այս մեծագործ հայրապետին անուամբը՝ իրմէ զատ՝ չորս կաթողիկոսներ եղած են.

Առաջինը՝ Լուսաւորչի ցեղէն *սուրբն Ներսէս Մեծ*, որ մեր Արշակ Բ թագաւորին օրերը բոլոր նախարարաց հաւանութեամբը հայրապետական աթոռը նստաւ 364 թուականին, եւ ամենայն բարեկարգութեամբ Հայաստանը զարդարելէն ու քսան տարի ազգը կառավարելէն յետոյ 384-ին զոհ եղաւ մեր Պապ թագաւորի անիրաւ կամացը:

Երկրորդ ներսէսը՝ Աշտարակեցի էր, որ 524-ին կաթողիկոս ընտրուեցաւ, ինը տարի ամենայն բարեմասնութեամբ պայծառացոյց Հայաստան եւ 533-ին վախճանեցաւ:

Երրորդը՝ որ ի սկզբան եպիսկոպոս էր Տայոց եւ կաթողիկոս ընտրուեցաւ 640 թուականին՝ Հայաստանի մէջ շատ վանօրայք եւ եկեղեցիք կանգնելով՝ *Ներսէս Շինող* անուանեցաւ, եւ քսան տարի Լուսաւորչի աթոռը կառավարելէն յետոյ 660-ին մեռաւ:

Չորրորդ Ներսէսն էր Գրիգոր Պահլաւունուոյ փոքրիկ եղբայրը, որ իւր ոգելից եւ ազդու գրուածոց համար *Շնորհալի* ասուեցաւ: Սա 1166-ին կաթողիկոս ընտրուելով՝ պայծառացոյց Հայաստան իւր շնորհազարդ, առաքինի եւ սուրբ վարքովը, եւ շատ *կոնդակներ* կամ ընդհանրական քրքեր գրեց եկեղեցականներուն եւ աշխարհականներուն, խորիմաստ *շարականներ* երգեց, ոտանաւոր բանիւք Հայոց համառոտ պատմութիւնն ու *Յիսուս որդի* կոչուած ողբերգական եւ խրատական տաղաչափութիւնը գրեց, *Մասթոսի աւեսարանին մեկնութիւնը* շարադրեց եւ այլն, եւ 1173 թուականին իւր 75-ամեանայ հասակին վախճանեցաւ, եօթը տարի եւ չորս ամիս ազգը կառավարելէն վերջը:

Բայց թէ այս Հինգերորդ Ներսիսին ինչ ածական տալու է որ վայելուչ լինի իւր մեծագործութեանցը. — սորա վերայ տակաւին խօսք չէ եղած, եւ կարծեմ լաւ կլինէր ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ անուանել զինքը. վասն զի Հայոց պատմութեան տեղեկութիւն ունեցող անձինքը դիւրաւ կհասկանան որ այս ածականը միայն Արամայ տրուած է, որ հրաման տուաւ իւր իշխանութեան տակ գտնուող ազգերուն «Ուսանել զխօսս եւ զլեզուս հայկական» (1). ուստի եւ իրաւամբ կարելի է *հայրենասէր* անուանել նաեւ այս մեծագործ հայրապետը, առաջինը այն պատճառաւ որ տակաւին իւր առաջնորդութեան օրէն Վրաստանի եւ նորա շրջակայ

(1) Խորենացի, Գիրք Ա, Գլ. ԺԳ.

տեղերը եկեղեցական դպրոցներ բանալով՝ վաթսուներորդ  
հազար Հայ ժողովրդոց հայերէն խօսելուն պատճառ  
եղաւ, որ իրմէ յառաջ սովորաբար վրացերէն կխօս-  
սէին. եւ երկրորդը՝ որ քաղցր է անտարակոյս ամե-  
նայն Հայի, իւր անմահ դիւցազին՝ դարելու հնուժե-  
նէն գրեթէ մոռացուած անունը, թէ՛ նորա յաւիտենական  
փառացն արժանի Ներսիսի նման անձին երեւելովը  
վերածնել ու կենդանացընել, եւ թէ միանգամայն այս  
հայրապետական փառքով ու պատուով պսակուած  
վեղարին տակը փայլող հոգեւոր Արամայ յիշատակը՝  
Հայաստանի երախտագէտ որդւոց սրտին մէջ ոսկեղէն  
տառերով դրոշմել (<sup>1</sup>):

ՅՈՎ. ՏԵՐ-ԱՅՐԱՀԱՄԵԱՆ.

(<sup>1</sup>) Այս կենսագրութիւնը գրելու ժամանակ՝ ես այն երիտասարդին  
նմանեցայ, որ ձեռքը գոյնզգոյն ծաղիկներ բռնած՝ պարտեզ կմտնե-  
կանաչ տերեւներ փրցընելու եւ իւր ծաղկանց շրջակայքը դնելով՝  
մեկ հաստատուն փունջ հիւսելու. վասն զի թեպէտ իմ յատկապէս այս  
մասին այլ եւ այլ տեղերէ խնդրած եւ ընդունած նամակները բաւական  
էին այս կենսագրութեանը, սակայն յօդուածս աւելի ճիշդ կերպով  
աւանդելու համար՝ աչքիս առաջեւը պահեցի „Կովկաս“ անունով  
հայ եւ ռուս լրագրաց քանի մի թերթերը, Պ. Նովոսելովի ռուսերէն  
գրուածքը (1858), „Ճոռաքաղ“ ամսագիրը (1860) եւ այլն :



# ՕՐԱՑՈՅՑ

1869

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ՈՅԺԸ = 1518



Ի ԹԷՂՈՂՈՍԻԱ

ի սպարանի Խաչիքեան Ռաւոյննարանի Ազգիս Հայոց



Дозволено Цензурою. С.-Петербургъ, 11 Мая 1868 года.

---

Խմբագիր—Տնօրէն ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.

---

# Ի ԹՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

## 1869

### ԵՒ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ ՌՅԺԸ = 1318.

Գիր տարւոյն Է . . . . .	Վ.
Եօրներեակն . . . . .	Գ.
Վերադիրն . . . . .	ԻԷ
Իննեւտասներեակն . . . . .	6
Տանուտերն . . . . .	ԱՌԻԻԾՆ
Բուն ձայնքն աճ, ղճ, գճ, դճ ձախակողմեան դասուն են, սկսեալ ի Բուն բարեկենդանէ.	

### ՇԱՐԺԱՎԱՆ ՏՕՆՔ ԵՒ ՄԻԶՈՅՔ ՆՈՅԻՆ.

ՕՐ ԾՆՆԴԵԱՆ. . . . .	Բշ.
Միջոց ուտիք աւուրք պահօք . . . . .	35
Առաջաւորաց բարեկենդան, ի Փետրուարի . . . . .	9
Օր Տեառնընդառաջին . . . . .	Ուր.
Բուն բարեկենդան, ի Մարտի . . . . .	2
Օր Աւետման . . . . .	Բշ.
ԶԱՏԻԿ, յԱպրիլի . . . . .	20
Երեման Խաչ, ի Մայիսի . . . . .	18
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ, ի Մայիսի . . . . .	29
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ, ի Յունիսի . . . . .	8
Բարեկենդան Լուսաւորչի պահոց, ի Յունիսի . . . . .	29
Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ի Յունիսի . . . . .	5
ՎԱՐԳԱՎԱՌ, ի Յունիսի . . . . .	27
Միջոց շաբաթ պահօք . . . . .	3
ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, յՅոգոստոսի . . . . .	17
Միջոց շաբաթ պահօք . . . . .	4
ԽԱԶՎԵՐԱՅ, ի Սեպտեմբերի . . . . .	14
Ս. Գեորգայ բարեկենդան, ի Սեպտեմբերի . . . . .	21
Միջոց ուտիք շաբաթ պահօք . . . . .	7
Գիւտ Խաչ, ի Հոկտեմբերի . . . . .	26
Յիսնակաց բարեկենդան, ի Նոյեմբերի . . . . .	16
Ս. Յակոբայ բարեկենդան, ի Դեկտեմբերի . . . . .	7
Միջոց ուտիք աւուրք պահօք . . . . .	17
Օր բարեկենդանի Յայտնութեան . . . . .	Բշ.

ՀՍՏ ՅՈՒՆԱՅ ԵՒ ՌՌԻՍԱՅ.

Շրջանն արեոն (кругъ солнца) . . . . .	13
Շրջանն լուսնի (кругъ луны) . . . . .	5
Եօրներեակն (вруцѣльто) . . . . .	B
Ընդիկտիոնն (индиктъ) . . . . .	12
Տարեգիրն (ключевая буква) . . . . .	Ы
Վերադիրն (сакта) . . . . .	23
Ուտեաց առարքն ուր շարաք եւ հինգ օր.	
Լուծումն պահոց, ի Փետրուարի . . . . .	9
Կիսապենտեկոստե (Преполовение), ի Մայիսի . . . . .	14
Համբարձումն, ի Մայիսի . . . . .	29
Պենտեկոստե (Пятидесятница), ի Յունիսի . . . . .	8
Առաքելոց բարեկենդան, ի Յունիսի . . . . .	15

ՀՍՏ ԼԱՏԻՆԱՅԻՈՅ.

Շրջանն լուսնի, որ է Ոսկեբիւն . . . . .	8
Շրջանն արեգակնային . . . . .	2
Վերադիրն . . . . .	17
Ընդիկտիոնն հռովմեական . . . . .	12
Կիրակագիրն . . . . .	Գ


Զատիկ նոցա հնգիւք եօրնեկօք յառաջէ քան զմերն.

ՏԱՐԵՄՈՒՏԲ.

Թուին Հայոց ՌՅԺԹ . . . . .	յՅգոստոսի 16
Ազարիայի ՄԾԴ . . . . .	ի Մարտի 21
Տաճկաց 1286 . . . . .	յԱպրիլի 4
Հրեից նահանջ բուսականին 5630 . . . . .	յՅգոստոսի 26

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆԲ.

Ագ. = Ազարիայի : Լտ. = Լատինացոց : Հ = Հին տոմար,  
 Յուլեանն : Հր. = Հրեից : Յայսմ. = Յայսմառարաց տոմար :  
 Յ. = Յունաց : Ն. = Նոր տոմար, Գրիգորեանն : Ռ. = Ռուսաց :  
 Տճ. = Տաճկաց : Տոմ. = Տոմար հայկական : աձ. = Առաջին ձայն :  
 ալ. = Առաջի կողմն : բձ. = Երկրորդ ձայն : բկ. = Առաջ կողմն :  
 զձ. = Երրորդ ձայն : զկ. = Վառ ձայն : զձ. = Չորրորդ ձայն :  
 զկ. = Վերջ ձայն : Բշ. = Երկուշարբի : Գշ. = Երեքշարբի : Դշ. = Չորեքշարբի :  
 Եշ. = Հինգշարբի : Ուր. = Ուրբար : Շր. = Շարաք : Կիր. = Կիրակի :  
 Հրց. = Հարց : Հմբ. = Համբարձի : մրգ. = մարգարեին : հյրպ. =  
 հայրապետին : եպս. = եպիսկոպոսին : պհ. = պահոց : մ, պ.  
 = մեծի պահոց : վկ = վկայուն կամ վկայից : քհ. = քահանային :



### ՅՈՒՆՈՒՄ

(31 օր է, յորոց 4-ը կիրակի եւ 3-ը տօն.)

- |    |   |    |
|----|---|----|
| 13 | <p>1 † Դշ. զձ. Գ օր պահոց Ծննդեան. ԿԱՂԱՆԴ. եւս Յունաց եւ Ռուսաց, որոց եւ տօն անուան Տեառն եւ յիշատակ Բարսղի հայրապետին.— Ըստ հին Տոմարին մերոյ Քաղոցի 19.— Ըստ Յայամաւորաց Քաղոցի 24.— Ըստ Ազարիայի Արամայ 17. — Լատինացոց Տօն անուան Յիսուսի եւ Վերոնիկայ կուսին.— Տաճկաց Ռամազանի 30 եւ Գաւրմի 68. — Հրեից Սեբասթի 1.</p> <p>Ծնունդ Վսեմափառ. Կայսրորդուոյն Մեծի Իշխանին Ալեքսեայ Ալեքսանդրովիչ (յամին 1850). — Ծնունդ Վսեմափառ. Դշխոյին Ելենայ Պաւլովնայ (յամին 1864).</p> <p>☉ Ծնունդ լուսնի. — Պարզ եւ ցուրտ.</p> <p>☽ Արեգակն ելանէ ժամ 7, վ. 38.<br/>— մտանէ ժամ 4, վ. 41.</p> | 30 |
| 14 | 2 Եշ. զվ. Դ օր պահոց Ծննդեան.— Ռ. Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին.— Տճ Շեփիայ եւ պայրամ 3 օր.  | 1  |
| 15 | 3 Ռբ. դձ. Ե օր պահոց Ծննդեան.— Ռ. Մաղաքիայ մարգարեին.   | 2  |
| 16 | 4 Շր. դկ. Զ օր պահոց Ծննդեան.— Ռ. 72 աշակերտացն Քրիստոսի.   | 3  |
| 17 | 5 † Կիր. աձ. ձրագալոյց Ծննդեան եւ Մկրտութեան Քրիստոսի. Նաապատիք յերեկոյին. — Յ. եւ Ռ. ձրագալոյց Յայտնութեան. — Լտ. Անտոնի անապատականին.   | 4  |

Ն.

Լ.



- 18 6 † Բշ. աղ. ՏՅՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿԲՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ. 5  
 Ուտիք է մեզ Տ օր անմիջոց. — Յ. եւ Ռ. Աստուածա-  
 յայտնութիւն.
- 19 7 † Գշ. բձ. Բ օր Ծննդեան եւ յիշատակ մեռելոց. — 6  
 Յ. եւ Ռ. Յովհաննու Կարապետին.
- 20 8 Գշ. բկ. Գ օր Ծննդեան. — Յայսմ. Արաց. — Ռ. Գեորգեայ 7  
 եւ Եմելիանոսի.
- 21 9 Եշ. գձ. Դ օր Ծննդեան. — Ռ. Պողիքոսի վկային. — Լտ. 8  
 Ազնեսի կուսին.
- © Առաջին քառորդ լուսնի. — Յուրտ եւ անձրեւ.
- 22 10 Ուր. զկ. Ե օր Ծննդեան. — Ռ. Գրիգորի նիսացւոյն եւ 9  
 Գոմետիանոսի մելիտացւոյն.  
 Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Մեծի Իշխանին  
 Պետրոսի Նիկոլայեվիչ (յամին 1864).
- 23 11 Շր. դձ. Զ օր Ծննդեան. — Ռ. Թեոդոսի կապաղով- 10  
 կացւոյն.
- © Արեգակն ելանէ ժամ 7, վ. 31.  
 — մտանէ ժամ 4, վ. 54.
- 24 12 † Կիր. դկ. Է օր Ծննդեան. — Ռ. Տատիանեայ կուսին. 11
- 25 13 Բշ. աձ. Ը օր Ծննդեան եւ Տօն Անուանակոչութեան 12  
 Տեառն. — Տոմ. Արաց. — Ռ. Երմիղայ եւ Ստրատոնիկեայ.
- 26 14 Գշ. աղ. Տօն Ծննդեան Յովհաննու Կարապետին. — Ռ. 13  
 Հարցն նահատակելոց ի Սինա.
- 27 15 Գշ. բձ. պահք. — Լ. Յովհաննու Ոսկերերանին. — Ազ. 14  
 Ովղան. — Ռ. Պօղոսի անապատականին եւ Յովհաննու  
 Գրեցւոյն. — Հր. Տարեգրութի տնկոց.
- 28 16 Եշ. բկ. Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին 15  
 եւ Արիստղոմայ սարկաազին. — Ռ. Լուծումն շղթայից  
 սրբոյն Պետրոսի.
- © Լրումն լուսնի. — Զիւնաբեր Հողմունք.
- 29 17 Ուր. գձ. Պահք. — Ռ. Անտոնի անապատականին. — 16  
 Տճ. Ախրրը Էրպային. վերջ քառասուն աւուրց առաջ-  
 նոյ մասին ձմերան.



Ն.

Լ.

- |   |    |   |    |
|---|----|---|----|
| 30  | 18 | Շր. զկ. Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ եւ Ոնոփրիոսի ճգնաւորացն. — Ռ. Աքանասի եւ Կիւրղի հայրապետացն Աղեքսանդրիոյ. — Տճ. <i>Էփիէղի Խամսիյն</i> . Սկիզբն յիսուն աւուրց երկրորդի մասին ձմեռան.                     | 17 |
| 31  | 19 | † Կիր. դձ. Ա, զկնի Ծննդեան. Հրց. դձ. Ծագումն միածնի. Հմբ. դձ. Զհրաշայի աստուածորդւոյն <i>ցփերչն</i> . — Հարսանիք. — Ռ. Մակարայ եգիպտացւոյն.   | 8  |
| 1   | 20 | Բշ. զկ. Թեոդոսի բազաւորին եւ մանկանցն Եփեսոսի. — Ռ. Եւրիմիոսի ճգնաւորին. — Լտ. ՓԵՏՐՈՒՍՐ.  | 19 |
| 2   | 21 | Գշ. աձ. Կիրակոսի եւ Յուդիտայ, եւ Գորղիոսի, Պօղիքտոսի եւ Գրիգորիսի. — Ռ. Մաքսիմոսի խոստովանողին. — Լտ. Տեառնընդառաջ.   | 20 |
| ☉ Արեգակն երանե ժամ 7, վ. 20.<br>— մտանե ժամ 5, վ. 7. |    |   |    |
| 3   | 22 | Գշ. ալ. պահք. — Ռ. Տիմոթեոսի եւ Անաստասայ վկայից.   | 21 |
| 4   | 23 | Եշ. բձ. Վահանայ զողբնացւոյն, եւ Եւզինեայ կուսին եւ հօր նորա Փիլիպպոսի, եւ մօրն Կղօղեայ, եւ երկուց եղբարցն Սերգեայ եւ Ապիտոնի, եւ երկուց ներքինեացն. — Յ. եւ Ռ. Կղեմայ եպիսկոպոսին եւ Ագաբանգեղոսի վկային. | 22 |
| ☽ Վերջին քառորդ լուսնի. — Պարզ եւ Հողմային.           |    |   |    |
| 5   | 24 | Ուր. բկ. պահք. — Ռ. Եւքսինեայ կուսին. — Լտ. Ագարայ կուսին.  | 23 |
| 6   | 25 | Շր. գձ. Աքանասի եւ Կիւրղի հայրապետացն Աղեքսանդրիոյ. — Ռ. Գրիգորի աստուածաբանին. — Լտ. Տորոքիայ կուսին.  | 24 |
| 7   | 26 | † Կիր. գկ. Բ, զկնի Ծննդեան. Հրց. գձ. Արարիչդ արարածոց. Հմբ. գկ. Տեսիլ փայլակնածեւ. — Ռ. Բսենոփոնի վկային. — Լտ. Բուն բարեկենդան.  | 25 |
| 8   | 27 | Բշ. դձ. Եւզինեոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կանդիտոսի եւ Ակիւղասայ. — Ռ. Դարձ նշխարաց Յովհաննու ոսկերերանին.   | 26 |

Ն.

Լ.



- 9 28 Գշ. դկ. Անդրեի գորավարին եւ բանակի նորին, եւ Կալի-  
նիկոսի եւ Դիոմետեայ բժ.—Ռ. Եփրեմի խորին Ատրուոյ. 27
  - 10 29 Դշ. աձ. պահք. — Ռ. Իգնատիոսի աստուածազգեաց 28  
հայրապետին. — Լտ. Օր մոխրոց.
  - 11 30 Եշ. ալ. Անդրիանոսի եւ կնոջն Անատուայ, եւ Թեո- 29  
դորոսի եւ Ելեփարոսի վկայիցն. — Ռ. Հայրապետացն  
Բարսղի, Գրիգորի եւ Յովհաննոս ոսկերերանին.
- ⊗ Ծնունդ լուսնի. — Խառնակ եւ ցուրտ.
- 12 31 Ուր. բձ. պահք.—Ռ. Կիւրոսի եւ Յովհաննոս վկայիցն. 1  
— Տճ. Զիւլզատե. — Հր. Աղար.

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Յայտնութեան տօնը խնայեալ գտնելու է.

— Տարեգրոյն թիւը 7-ով բաժանելու է, մնացածը երեքշաբթի օրէն յետ տալով, այսինքն երեքշաբթի, երկուշաբթի, կիրակե, շաբաթ եւ այլն ասելով՝ այնչափ յետ գնալու է որ մնացած թիւը վերջանայ. եւ որ օրուան մեջ դադարի, այն օրը յայտնութիւնն է: Օրինակ. ներկայ տարուոյս տարեգիրը—Վ, 30-րդն է. ուստի թէ որ 7-ով բաժանեմք, կմնայ 2, երեքշաբթիէն յետ տալով՝ երկրորդ թիւը երկուշաբթի օրուան կրնկնի. ուրեմն եւ երկուշաբթի օր կուգայ Յայտնութեան տօնը, ինչպէս որ օրացուցիս սկիզբը Շարժական տօներուն մեջ դրուած է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՇՆԵՐ.

- Մօտիկ հարեանը լաւ ա, քան զհեռու բարեկամը:
- Տասը չափի, մին կտրի:
- Ամառուայ փուշը, ձմեռայ նուշը:
- Դուռդ փակ պահի, հարեանդ գող մի բռնիլ:
- Գրծի հացը՝ խելօքի փորը:
- Ինչ կը բըրդես, են կը խըրթես:



**ՅՈՒՆՈՒԱՐ.**

**ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ**

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.**—Երկրագործին ժամանակ է կանուխ ցանելու հունտերը, այսինքն *արևատուտքա* ասուած ցորենի, վարսակի եւ զարւոյ սերմացուները գնել ու պատրաստել. եւ սաստիկ ցուրտերու ժամանակ երկրագործական գործիքները մաքրել ու սրել. այլ եւ եզիպտացորենը հատել :

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.**—Ամսոյս մեջ մեղուները ուրիշ գեւնոց նման բմբած կամ քուն եղած կլինին. ուստի պետք է փերակներուն մօտ բարձր ձայներ հանելով զարբեցրնել զիրենք, մանաւանդ այս պատճառաւ որ զարբեցրնելն յետոյ հարկ կլինի շատ մեղրով կերակրել զնոսա : Սաստիկ ցուրտերու ժամանակ պետք է մեղուաց փերակներուն վերայ հսկել որ ոչ ցուրտէ մըսին եւ ոչ առանց կերակուրի մնան : Եթէ ցուրտին պատճառաւ հարկ լինի փերակաց տեղը փոխադրել, լաւ ու օգտակար է առաջուան տեղը բողբուլ ու զանազան լաթերով ծածկել փերակը, քան թէ փոխադրութեան պատճառաւ մեղուները զարբեցրնել :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.**—Այգեգործին եւս ժամանակ է ամսոյս մեջ հանդիպած խոնաւ ու ամպոտ եղանակներուն՝ ծառերուն չոր ճիւղերն ու բուփերը կտրել, չոր ու անպիտան խոտերը ժողովել ու վառելու գործածել. թթենիի, բալի, ծիրանի, նուշի եւ ուրիշ ծառեր տնկելու տեղերը փորել ու փոսերը պատրաստել : Զիւնի եւ սաստիկ ցուրտի ժամանակ յօտոցը սրել եւ այգիներու համար ծայրերը սրած ցիցեր պատրաստել :



**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Կովերն ու եզները օրը երեք անգամ կերակրելու է, այսինքն առաւօտը կանուխ, կեսօրին եւ երեկոյին: Ամսոյս ցրտերուն պատճառաւ անասունները շատ կուտեն. ուստի լաւ կլինի որ խոտին հետ խառն յարդ (*սամաւն*) տրուի նոցա: Ծնած կովերուն վերայ մասնաւոր խնամք տանելու է, հորքերը առանձին ու տաք խրճիթի մէջ պահելու է, եւ ջուրը թէ կովին եւ թէ հորքին քիչ մի տաքցուցած տալու է: Ոչխարները՝ եթէ գետինը ծածկուած չէ ձիւնով, ցորեկները կարելի է արածելու բողոռէ եւ երեկոնները աղ տալ. իսկ նորածին գառները առաւօտեան ու երեկոյեան ծծած կարեն զատ՝ պէտք է քիչ քիչ ամենալաւ խոտով կերակրել ու այնպէս սնուցանել:

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Հաւերը կորեկով եւ սագերը զարիով ու թեփով կերակրելու է, որ թէ գեր լինին եւ թէ շատ հաւկիթ ածեն. այլ եւ կովի կարեն եղ հանել, եւ ամառուան սառոյցը պատրաստել պէտք է: Խոզերը զիրցրնելու համար առաւօտները աղով խառն թեփ, կեսօրները եզիպտացորեն եւ երեկոնները խոտ տալու է:

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՅՈՒՆՈՒԱՐԻ.

(ի Հարաւային Ռուսիա.)

յԱտակի (Բեսսարարիոյ մէջ) 5-ին.

Ի Հօրին, 6-ին.

— Խարկով, 6-էն մինչեւ 26 յունուարի.

— Բերդիչեւ, 13-ին.

— Կիեւ, 15-էն յունուարի մինչեւ 91 փետրուարի.

— Բերեզովկա (գաւառ Անանեւի) երկու շաբաթը մի անգամ.



## ՓԵՏՐՈՒՍՐ

(28 օր է, յորոց 4-ը կերակի եւ 2-ը տօն.)

13 1 Շր. ըկ. Ս. Գրիգորի աստուածարանին. — Ռ. Տրիփոնի վկային. 2

◎ Արեգակն ելանէ ժամ 7, վ. 9.  
— մտանէ ժամ 5, վ. 23.

14 2 † Կիր. զձ. Գ, զկնի Ծննդեան Հրց. զկ. Այսօր զենաւ. 3  
Հմբ. զձ. Ի ձայն ահեղ. — Ռ. Տեստ. նրնդառաջ.

15 3 Բշ. զկ. Մակարայեցւոցն՝ Եղիազարու քահանային, եւ 4  
Շամունեայ եւ եօթն որդւոց նորա. — Ռ. Սիմեոնի ծերու-  
նւոյն եւ Աննայի մարգարեութիւնն.

Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Մեծի Իշխանին  
Նիկոլայի Կոստանդինովիչ (յամին 1850).

16 4 Գշ. զձ. Երկոտասան մարգարեիցն՝ Ովսեայ, Ամովսայ, 5  
Միքիայ, Յովելեայ, Աբդիու, Նաուամայ, Ամբակումայ,  
Յովնանու, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ եւ Մա-  
ղաքիայ. — Ռ. Իսիգորի եզիպտացւոյն.

Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Դշխոյին Վերայ  
Կոստանդինովնայ (յամին 1854).

17 5 Դշ. զկ. պահք. — Ռ. Ազաբեայ կուսին. 6

Ն.

Լ.



18 6 Եջ. աձ. Սուփիայ եւ երից դստերացն՝ Պիստիսի, Ելպիսի եւ Ագապի.—Ռ. Վուկողայ եպիսկոպոսին Զմիւռնիոյ. 7

19 7 Ուր. ակ. պահք. — Ռ. Ղուկասու Ելլադացւոյն. 8

☉ Առաջին քառորդ լուսնի. — Զիւնաբեր հողմունք.

20 8 Շր. բձ. Որդւոց եւ բոռանց Ս. Հօրն մերոյ Գրիգորի 9  
Լուսաւորչին՝ Արիստակիսի, Վրբանիսի, Յուսկան, Գրիգորի եւ Գանիէլի. — Ռ. Թեոդորոսի Ստրատելատի վկային եւ Զաքարիայ մարգարէին.

21 9 † Կիր. բկ. Գ, գկնի Ծննդեան. Հրց. դձ. Ծագումն. 10  
Հմբ. բկ. Զյարուբիան Քրիստոսի. — Բարեկենդան Առաջաւորաց.—Ռ. Նիկեփորայ վկային.

22 10 Բշ. գձ. Ա օր պահոց Առաջաւորաց. — Ռ. Ղարալամպոսի քահանային, որոց եւ Լուծումն պահոց յայսմ եօրնեկի. 11

23 11 Գշ. գկ. Բ օր պհց. Առաջաւորաց.—Ռ. Վլասայ վկային. 12

☉ Արեգակն հլանէ ժամ 6, վ. 51.  
— մտանէ ժամ 5, վ. 57.

24 12 Գշ. դձ. Գ օր պհց. Առաջ. — Տոմ. Մեհեկան.—Ռ. Մելիտոսի եպիսկոպոսին. — Հր. Ծով վասն Եսրերայ. 13

25 13 Եջ. դկ. Դ օր պհց. Առաջ. եւ յիշատակ Յովնանու մարգ. 14  
— Յ. եւ Ռ. Մարտինիանոսի կեսարացւոյն. — Հր. Փորիւ, որ է Շէքեր պայրամք.

26 14 † Ուր. աձ. Ե օր պհց. Առաջաւորաց եւ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ, 15  
որ է Տօն քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի տաճարն. — Ագ. Նիրհան. — Ռ. Օգսենտիոսի անապատականին.

☉ Լրումն լուսնի. — Պարզ եւ փոփոխ.

27 15 Շր. ակ. Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ 14 գինուորացն. — Ռ. Ոնեսիմեայ աշակերտին Պօղոսի. 16


28 16 † Կիր. բձ. Ե, գկնի Ծննդեան. Հրց. դկ. Անսկիզբն բանդ. 17  
— Հարսանիք.— Ռ. Պամփիլեայ եւ Պորփիրի վկային.



Ն.

Լ.

1	17 Բշ. րկ. Ատովմանց զօրավարաց. — Ռ. Թեոդորոսի Տիւռոնի զօրավարին. — Լա. ՄԱՐՏ.	18
2	18 Գշ. գձ. Սուքիասեանց վկայից. — Ռ. Լեոնի պապին.	19
3	19 Գշ. գկ պահք. — Ռ. Արքիպպայ վկային. Օր գահակալութեան Վեհափառ ԻՆՒՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց (յամին 1855).	20
4	20 Եշ. դձ. Ոսկեանց քահանայից. — Ռ. Լեոնի եպիսկ.	21
5	21 Ուր. դկ. պահք. — Ռ. Տիմոթեոսի վկային.	22
© Արեգակն ելանե ժամ 6, վ. 54. — մտանե ժամ 5, վ. 50.		
6	22 Շր. աձ. Ս. Սահակայ Պարբեի հայրապետին մերոյ. — Ռ. Գարձ նշխարաց եւզինեոսի վկային.	23
© Վերջին քառորդ լուսնի. — Յուլիոս եւ Ճիւն.		
7	23 † Կիր. ալ. Հրց. դկ. Որ յանեղակերպ. — Հարսանիք. — Ռ. Պողիկարպոսի Զմիւռնիոյ հայրապետին.	24
8	24 Բշ. րձ. Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիւրղի եւ Բենիամինի սարկաւազացն, եւ սրբոց վկ. Աբղլմսենի, Ռամզղանայ, եւ Սայենի. — Ռ. Նաւակատիք յեօրնեկիս, եւ գիւտ գլխոյ Յովհ. Կարապետին.	25
9	25 Գշ. րկ. Ղեոնդեանց քահանայից. — Ռ. Տարասիոսի եպիսկոպոսին Կ.-Պօլսոյ, եւ յիշատակ մեռելոց. — Տձ. <i>Էվվեյի պերտիւշ անուզ</i> . Սկիզբն ցրտոյն պառաւանց, որ տեւե եօրն տիւ եւ ուր գիշեր.	26
10	26 Գշ. գձ. պահք. — Յ. եւ Ռ. Պորփիւրի եպիսկոպոսին. Ծնունդ Վսեմափառ Կայրսորդւոյն Թագաժառանգ Մեծի Իշխ. Ալեքսանդրի Ալեքսանդրովիչ (յամին 1845.)	27
11	27 † Եշ. գկ. Ս. Վարդանանց զօրավարացն մերոց 1036 վկայիցն. Յիշատակ մեռելոց. — Ռ. Պրոկոպիոսի խոստովանողին.	28
12	28 Ուր. դձ. պահք. — Ռ. Բարսղի խոստովանողին.	29





Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Յայտնութենէն մինչեւ Առաջաւորաց բարեկենդանի միջոցը քանի որ ուտիք լինելը ինչո՞վ իմանալու է .

— Տարեգրոյն վերայ միշտ 5 թիւն աւելցրնելու է, եւ որքան լինի, այնքան որ միջոց ուտիք կհաշուի Յայտնութենէն մինչեւ Առաջաւորաց բարեկենդանի օրը : Օրինակ. այս տարւոյ տարեգիրը Վ.—30-ն է, եթէ վերան աւելցրնեմք 5, կլինի 35. ուրեմն միջոց ուտիքը 35 օր է :

Առաջաւորաց բարեկենդանի օրն ինչ հաշուով կգտնուի .

— Եթէ Յունուարի 10-ին վերայ տարեգրոյ թիւն աւելցրնեմք՝ Առաջաւորաց բարեկենդանի օրը կգտնեմք : Օրինակ. եթէ գիր տարւոյն լինի Դ, այսինքն 4, Յունուարի 10-ն եւս վերան կաւելցրնեմք, կլինի 14, եւ այսպէս կիմանամք որ Դ տարեգրոյն ժամանակ Առաջաւորաց բարեկենդանը Յունուարի 14-ին կհանդիպի : Բայց որովհետեւ ներկայ թուականիս տարեգիրը ՎԼԿԵ է, այսինքն երեսներորդը, Յունուարի տասնէն 30 օր հաշուելով՝ կըտեսնեմք որ Փետր. 9-ին Առաջաւորաց բարեկենդան է :

ՀՍ.ՅԱՍՏԱՆԻ ԱՌԱԾՆԵՐ.

Իմաստունի հետ քար կրի, լիմարի հետ փլաւ մի ուտիլ :

Ահր դժուար ա, քան զմահր :

Ինչ չէր տեսել պատեն կախ, հիմի տեսաւ ճակտեն կախ :

Գիլի զլիին աւետարան կարդացին, ասեց. „Թեզարա, ոչխարը զնաց“ :

Իմ հալին, նորա տրուտինկ տալին :

Բանն արա, յետոյ պարծեցիր :

Աղուեսի դունչը խաղողին ջհասաւ, ասեց. „Խակ ա“ :

Եղն ու մեղրը շան տկում :

Ինչ տեղ պանիր, ընտեղ բանիր :



ՓԵՏՐՈՒԱՐ

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ.

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Տաք երկիրներու մէջ ժամանակ է գետին հերկելու : Աշնան մէջ հերկած գետիններուն վերայ , երէ օղը ներէ , պէտք է *արևատուտքա* ցորենը , վարսակն ու գարին ցանել , եւ քիչ ժամանակէն յետոյ երկիրը տափանել որ դուրս մնացած սերմերը հողին մէջ քաղուին :

ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ. — Ամսոյս մէջ շատ անգամ յունուարէն աւելի ցուրտեր կպատահին . ուստի եւ պէտք է յունուարի կանոնները եւս առաւել ճշդութեամբ պահել : Ընդհանրապէս մեղուները սաստիկ ցուրտի կամ ձիւնի ժամանակ փերակէն ելածներուն պէս մեկէն չպաղելու համար՝ հմուտք խորհուրդ կուտան փերակներուն չորս կողմը յարդ (*աւմակ*) եւ մոխիր փռելու . այլ եւ իւրեանց բունէն հեռացած ժամանակները՝ փերակին քովի ձիւնը տախտակներով ծածկելու , համարելով՝ որ ո՛չ այնչափ ցուրտը , որչափ ձիւնն իւր սպիտակութեամբը կկուրցընէ մեղուաց աչքը , որով շատ անգամ իւրեանց փերակի տեղը կորսընցընելով՝ ցուրտէն կպաղին ու բոյորովին կսատակին : Երէ օղը տաք լինի , մեղուները արեզակը ծագելուն պէս իրենք իրենց կելնեն փերակներէն եւ քիչ մը թռչրտելէն յետոյ նորէն տեղերնին կկառնան : Մեղուաց ելած ժամանակը՝ որքան կարելի է շուտով պէտք է փերակը մաքրել , որ աղտոտութենէ յառաջացող ցաւերէն անվնաս մնան :

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Երէ յունուարի մէջ սաստիկ ցուրտեր եղած լինին , ամսոյս մէջ պէտք է նախընթացին յիշուած խրատները կատարել . այլ եւ ձիւն , այծի կամ ոչխարի աղը դիզել , որ վարելիք հողին հետը խառնելով զօրաւոր լինին բոյսերը : — Ընդհանրապէս ամսոյս մէջ կտնկեն վարդի , ելակի (*земляника*) ու հաղարջի (*смородина*) ծառերը :



ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ. — Անասնոց զոմբ պետք է տաք պահել. ձիերու եւ եզներու կերակուրն ու աշխատանքը աւելցրնել, եւ խոզերու տնակի փտտած խոտերը դուրս հանել որ խոճքորները (խոզի ձագերը) անվնաս մնան: Կովերը լաւ կերակրելու է, վասն զի ամսոյս մեջ յունուարէն աւելի կյդանան. իսկ ոջխարները ողորկ սառոյցէն (гололедица) ազատ պահելու համար պետք է զոմերուն մեջ կերակրել. վասն զի այն սառուցին վերայ դժուարութեամբ քալելով՝ նոցա ոտքերը կվիրաւորուին: Թէ որ եղեամն (*գրադը, ивей*) չինի, ոջխարներուն առաւօտը պետք է խոտ տալ եւ յետոյ դուրս հանել. վասն զի եղեամն վնասակար է ոջխարաց. ուստի եւ մինչեւ ջանհետանայ՝ խոհեմութիւն է զոմերէն դուրս ջհանելը: Երեկոները խոտ տալէն յառաջ՝ քէ ոչ ամէն օր, գէթ երբեմն պետք է աղ տալ. իսկ ջրելը առաւօտուն քողցրնելու է: Ընդհանրապէս 1000 ոջխարին 40 ֆունք աղ կտրուի. իսկ գառներուն — կեսը:

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Երէ յունուարին սաստիկ ցուրտեր ջպատահին, ամսոյս մեջ պետք է սառոյց ժողովել, եւ մարտի ցուրտերը մտածելով՝ փայտի եւ ածուխի համար հոգ տանել: Ուշադրութիւն անելու է նաեւ աշնան ժամանակէն ձմեռուան համար պատրաստուած սոխի եւ զետնախնձորի վերայ, որ սաստիկ ցուրտերէն ջպաղին ու ջփճանան:

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՅԱՌՔ Ի ՓԵՏՐՈՒԱՐԻ.

(ի Հարաւային Ռուսիա.)


Ի Բելց եւ յՕլգոպոլ, 2-ին Փետրուարի.

յԱլեքսանդրիա եւ ի Նովոմոսկովսկ, 5—11.

Ի Նովոգեորգեւսկ եւ ի Բախմուք, 12—18.

— Պաւլոգրադ, 19—25.

— Կախովկա, 20.



Ն.

Լ.



Մ Ա Ր Տ

(31 օր է, յորոց 5-ը կիրակի.)

53-43

- |    |   |    |
|----|---|----|
| 13 | 1 Շր. դկ. Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովոյն 150 հայրապետացն. — Ռ. Եղովեայ վկային.   | 30 |
|    | <ul style="list-style-type: none"> <li>⊙ Ծնունդ լուսնի. — Յուլիոս եւ անձրեւ.</li> <li>⊙ Արեգակն ելանէ ժամ 6, վ. 19.</li> <li>— մտանէ ժամ 5, վ. 00.</li> </ul>   |    |
| 14 | 2 † Կիր. դկ. Բոսն Բարեկենդան. եւս Յ. եւ Ռ. որոց եւ յիշատակ Թեոդոտեայ եպիսկ. — Հր. Նիսան, որ է առաջին ամիս ըստ Աստուածաչնչին. — Տճ. Զիւլիհանէ.   | 1  |
| 15 | 3 Բշ. աձ. Ա օր մեծի պահոց. — Ռ. Եւորոպեայ, Կղկունիկեայ եւ Բասիլիսկոսի.  | 2  |
| 16 | 4 Գշ. ալ. Բ օր մեծի պհց. — Ռ. Գերասիմոսի վկային.  | 3  |
| 17 | 5 Գշ քձ. Գ օր մեծի պհց.—Ռ. Կոնոնոսի վկային.   | 4  |
| 18 | 6 Եշ. քկ. Գ օր մեծի պահոց. — Ռ. Բառասուն եւ երկուց վկայիցն.   | 5  |
| 19 | 7 Ուր. գձ. Ե օր մեծի պահոց. — Ռ. Բարսղի, Եփրեմայ, Կապիտոնի, Եգիսեոսի, Եթերիոսի եւ այլոց եպիսկոպոսացն Բերսոսի.—Լտ. Յովսեփայ աստուածահօրն. —Տճ. Ախրրը Խաւնսիյն. Վերջ յիսուն առուրց երկրորդի մասին ձմերան. | 6  |



Ն.

Լ.

20 8 Շր. զկ. Զ օր մեծի պահոց. եւ Թեոդորոսի զօրավարին. — Ռ. Թեոփիլակտոսի եպիսկոպոսին Նիկումիդիոյ. — Յայսմ. Արեգ. — Գարնանամուտ եւ հասարակած, որով լինի տիւ եւ զիշեր հաւասար.

21 9 † Կիր. դձ. Բ, Քառասնորդաց պհց. — Ռ. Քառասուն մանկանցն Սեբաստիոյ. — Լտ. Բենեդիկտոսի արքային. եւ Ծաղկագարդ.

☉ Առաջին քառորդ լուսնի. — Փոփոխական.

22 10 Բշ. դկ. Ը օր մեծի պհց.—Ռ. Կողրատիոսեանց վկայից. 9

23 11 Գշ. աձ. Թ օր մեծի պհց. — Ռ. Սոփրոնիոսի Երուսաղեմայ եպիսկոպոսին. — Տճ. Գուրպան պայրամը. 10

☉ Արեգակն ելանէ ժամ 6, վ. 1.  
— մտանէ ժամ 6, վ. 13.

24 12 Գշ. ալ. Ժ օր մեծի պահոց. — Ռ. Թեոփանայ խոստովանողին. 11

25 13 Եշ. քձ. ԺԱ. օր մեծի պահոց.—Ռ. Փոխադրութիւն նշխարաց Նիկեփորայ պատրիարքին Կոստանդնուպոլսոյ. — Լտ. Աւետումն. 12

26 14 Ուր. քկ. ԺԲ օր մեծի պահոց. — Տոմ. Արեգ. — Ռ. Բենեդիկտոսի վկային. 13

27 15 Շր. զձ. ԺԳ օր մեծի պահոց. եւ Կիւրղի Երուսաղեմի հայրապետին եւ միւս Կիւրղի եւ մօրն Աննայի. — Ազ. Աւելեաց. — Ռ. Ազապիայ վկային. — Հր. Ապիպ, որ է զարնանամուտ. 14

28 16 † Կիր. զկ. Գ, Քառասնորդաց պահոց.—Անառակին.— Ռ. Սարինայ եւ Պապայ վկայից. — Լտ. ԶԱՏԻԿ. — Ազ. Աւելեաց —Հր. Պասեք, որ է Խամուրսուզ պայրամը. 15

☉ Յետին լուսն լուսնի. — Անճրեւային.

29 17 Բշ. դձ. ԺԵ օր մեծի պահոց. — Ռ. Ալեքսիանոսի առն Աստուծոյ. 16



Ն.

Լ.

- 30 18 Գշ. ղկ. ԺՁ օր մեծի պահոց. — Ռ. Կիւրղի երուսաղէմացւոյն. 17
- 31 19 Գշ. աձ. ՃԷ օր մեծի պահոց. — Ռ. Խրիստոնքայ եւ Գարիոսի վկայից. 18
- 4 20 Եշ. ալ. Ժ՛, օր մեծի պահոց. — Ռ. Յովհաննու, Սերգեայ եւ Պատրիկիոսի վկայից. — Լտ. ԱՊՐԵԼ. 19
- 2 21 Ուր. բձ. ԺԹ օր մեծի պահոց. — Ռ. Յակովբայ եպիսկ. — Ազ. Շամս, եւ տարեմուտ ՄԾԳ քուականին. եւ գարնանամուտ ըստ հին տոմարին. 20
- ⊙ Արեգակն ելանէ ժամ 5, վ. 42.  
— մտանէ ժամ 6, վ. 26.
- 3 22 Շր. բկ. Ի օր մեծի պահոց. եւ Յովհաննու երուսաղէմի հայրապետին, եւ Յովհաննու օձնեցոյ հայրապետին մերոյ, եւ սրբոց վարդապետացն' Յովհաննու որոտնեցւոյն եւ Գրիգորի տաբեացւոյն. — Ռ. Բարսղի վկային. 21
- 4 23 † Կիր. գձ. Գ, Քառասնորդաց պահոց. — Տնտեսին. — Ռ. Նիկոնի եւ հարիւր իննսուներեքն աշակերտաց նորին. 22
- ⊙ Վերջին քառորդ լուսնի. — *Անձրեւաբեր հողմունք.*
- 5 24 Բշ. ղկ. ԻԲ օր մեծի պահոց. — Ռ. Զաքարիայ մարգարէին եւ Արտեմիոսի եպիսկոպոսին Թեսաղոնիկիոյ. — Լտ. Վինչենցիոսի Ֆերերեան. 23
- 6 25 Գշ. ղձ. ԻԳ օր մեծի պահոց. — Ռ. Աւետումն. 24
- 7 26 Գշ. ղկ. ԻԴ օր մեծի պահոց. — ՄԻՋԻՆԲ. — Ռ. Իրինիոսի եպիսկոպոսին. 25
- 8 27 Եշ. աձ. ԻԵ օր մեծի պահոց. — Ռ. Մատրոնայ կուսին. — Հր. *Ծով վասն մահուան Յեսուայ.* 26
- 9 28 Ուր. ալ. ԻԶ օր մեծի պահոց. — Ռ. Նորոյն Իլարիոնի եւ Ստեփանոսի սքանչելագործին. 27
- 10 29 Շր. բձ. ԻԷ օր մեծի պահոց. եւ քառասուն մանկանցն Սերաստիոյ — Ռ. Մարկոսի Արեբուսայ եպիսկոպոսին, Կիւրղի սարկաւազին եւ այլոց սրբոց վկայից. 28

Ն.

Լ.



11 30 † կիր. քկ. Ե, Գառ.ասնորդաց պահոց. — Գառաւորին. 29  
— Ռ. Յովհաննու վկային.

12 31 Բշ. գձ. ԻՅ՝ օր մեծի պահոց.—Ռ. Հիւպատիոսի եպիս- 30  
կոպոսին.—Հր. Նիւակն, որ Է առ.աջին ամիս ըստ աս-  
տուածաշնչին.

— Ծնունդ գատկական լուսնի. — Գարնանաբեր Հողմունք.

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Բռան բարեկենդանի համար թնջ հաշիւ կայ.

— Տարեգրոյն թիւը փետրուարի ամսաթիւերուն հետ հաշուելով յառաջ երթալու Է, եւ որ օր վերջանայ, նոյն օրը Բռան բարեկենդան Է: Բայց եթէ աւելի լինի տարեգրոյն թիւը քան գփետրուարի ամսոյն օրերը (ինչպէս այս տարի), պէտք Է մարտ ամիսն անցնել:—Յրինակ. մեր տարեգրոյն թիւը 30 Է, իսկ տարւոյս փետրուարի օրերը 28, ուրեմն եթէ երկու օր մարտէն առնուամք՝ ճիշդ 30 հաշուելու համար, կտեսնեմք որ մարտի 2-ին Բռան բարեկենդան Է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՅՆԵՐ.

Էծն (այծն) իծի համար լաւ ա, քան զմի սիրու ոչխար:

Եօրդանիղ գէօրէ ոտըղ մեկնիթ:

Ճրագն իր տակին լիս չի տայ:

Չուկը գլխիցը կրճոտի:

Հաւը ջուր ա խմում, Աստրծուն ա մտիկ տալիս:

Գրուստ խօսողին մի ձի, որ ասի ու փախչի:




Մ Ա Ր Տ .

**ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ**

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այս ամսուն մեջ է երկրագործի աշխատութեան գլխաւոր ժամանակը. վասն զի թէ տաք էս. թէ ցուրտ երկիրներու մեջ մարտին կտերմեն ցորենը, գարին, վարսակը, վուշը եւ այլն : Ո՛րքան շուտով սերմուի գարնան արտերը, այնքան աւելի յուսալի է նոցա արդիւնաւոր լինելուն : Ժամանակ է կաղամբ, բանջար, մանանեխ եւ մեկուն ցանելոյ : Ուշադրութիւն դարձրնելու է որ սերմանուած արտերուն մեջ անասունք չմըտնեն :

**ՄԵՂՈՒԱՔՈՒԾԱԿԱՆՔ.** — Մեղուներն ընդհանրապէս ամսոյս մեջ կսկսին ձագեր հանել, ուստի պէտք է փերակին դուռը բաց ձգելով ազատ բողուլ զիրենք. վասն զի թէ որ եղանակը տաք լինի, իրենք իրենց կելնեն բռջրտելու եւ զքօսնելու. իսկ եթէ ցուրտ լինի փերակին մեջ կմնան, որով դուռը դարձեալ հարկ կլինի գոցելու : Թէ որ եղանակը տաք լինի, ամսոյս վերջը կարելի է մեղը կտրել :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Յունուարի մեջ նոր ծառեր տընկելու համար փորած փոսերը նորէն աչքէ անցնելու է, եւ թէ որ լցուած են՝ մաքրելէն յետոյ պէտք եղած ծառերը տնկելու է : Եթէ օդը տաք լինի, ժամանակ է ծառերը պատուաստ (*աշխարհա*) անելու, ծառերուն տակի կարծրացած հողերը փորելու, որ թէ ըստ բաւականին անձրեւի ջուր ձձեն եւ թէ արեւու ծառերուն արմատին վերայ ունեցած ազդեցութենէն շուտով պտուղ տան. այլ եւ խաղողի որք կամ խաղողնիք տնկելու եւ արդէն տնկուածներուն տակերը փորելու : Նոյնպէս պարտեզներու մեջ հաւասար գծով ճամբաներ բանալու, ջրանցքները մաքրելու եւ գանազան ծաղկանց հունտեր պատրաստելու : Ամսոյս մեջ կրտնկեն ծիրանի, նուշի, դեղձի, սալորի, բուրբի, բալի, կեռասի, խնձորի, տանձի եւ ուրիշ ծառերը :



**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.**—Չիերը ամորձատելու (կուտելու) համար ամենեն յարմար ամիսը մարտն է : Մատակ ձիերուն վերայ թէ ծանր աշխատանաց եւ թէ ուտելեաց կողմանէ մասնաւոր խնամք տանելու է. վասն զի նոքա ընդհանրապէս ամսոյս մեջ կձնեն իրենց քուռակները : Կովերն ու եզները արածելու ղրկելու է. իսկ հորթերուն առաւօտները խոտ տալու է : Ամսոյս մեջ ցուլերը (*սյուշա*) կովերուն, խոյերը (*գօչ* կամ *խոչ*) ոչխարներուն եւ նոխազները (*թէթէ*) այծերուն (*թէչի*) քով բողջընելու է. իսկ այն դանաները (արու հորթերը) որ պիտանի չեն լացեղ յառաջացընելու, ամորձատելու է : Ոչխարներն արածեցընել պէտք է, եւ կանուխ ծնած գառներուն փորհարինքէ ազատ պահելու համար՝ քիչ վարսակով խառն թեփ տալու է :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.**—Հաւերու եւ սագերու կուտը կանոնաւոր տալով՝ ջանալու է գատիկուան համար պէտք եղած հաւկիրը ժողովել : Կովի կարեն սեր, եղ ու մածուն հանել եւ կանխածին ոչխարաց կարեն պանիր պատրաստել :

**ՆՇԱՆԱՒՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՄԱՐՏԻ.**

(ի Հարաւային Ռուսիա.)

Ի Բորրինեց, 4-ին Մարտի.

յելրսաւետարաղ, ի Նովոգեորգեւսկ, յեկատերինուսլա, յՈրեխով, եւ ի Բելոցերկովկա (գաւառ Աղեքսանդրիոյ) 4—10.


Ի Տիրասպոլ, 10-ին.

— Նովոմիրզորոդ, ի Լիխովկա եւ ի Պաւլովսկ, 11—17.

— Սեղնեկա (գաւառ Բորրինեցի), 17—24.


— Կազալնիկա (գաւառ Ռոստովի) Բշ. 24-ին.

— Բերդեանսկ, ի Բելց եւ ի Գենիչեսկ, Գշ. 25-ին :



Ն.

Լ.



### Ա Պ Ր Ի Լ

(30 օր է, յորոց 4-ը կիրակի եւ 6-ը տօն.)

- |    |  |   |
|----|--|---|
| 13 | 1 Գշ. զկ. Լ օր մեծի պն.—Ռ. Մարիամու եգիպտացւոյն.<br>— Տճ. Մունարրեմ եւ տարեմուտ 1286 քուակակե.<br>— Հր. Եստ.   | 4 |
|    | ⊙ Արեգակն ելանէ ժամ 5, վ. 21.<br>— մտանէ ժամ 6, վ. 40.   |   |
| 14 | 2 Գշ. դձ. ԼԱ. օր մեծի պն.—Ռ. Տիտոսի սքանչելագործին.  | 2 |
| 15 | 3 Եշ. զկ. ԼԲ օր մեծի պն.—Ռ. Նիկեոսայ խոստովանողին.   | 3 |
| 16 | 4 Ուր. աձ. ԼԳ օր մեծի պահոց.— Ռ. Յովսեփայ երզնցո-<br>ղին եւ Գեորգայ վկային.<br>Յիշատակ ազատութեան վեհափառ Ինքնակային ամե-<br>նայն Ռուսաց ԱԼԵԿՍԱՆԴՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ Ի մեծ<br>վտանգէ. | 4 |
| 17 | 5 Շր. ակ. ԼԴ օր մեծի պահոց, եւ սրբոյ հօրն մերոյ<br>Գրիգորի Լուսաւորչին մուտն ի վիրապն.—Ռ. Թեոդո-<br>լայ եւ այլոց վկայից.   | 5 |
| 18 | 6 † Կիր. բձ. 2, Քառասնորդաց պահոց.— Գալստեան.—<br>Ռ. Եստիքեայ եպիսկոպոսին Կ.-Պոլսոյ.   | 6 |
| 19 | 7 † Բշ. բկ. ԼԶ օր մեծի պահոց.— ԱԻԵՏՈՒՄՆ Ս. Աստուա-<br>ծածնի. — Ռ. Գեորգայ մելիտեցւոյն.   | 7 |

Ն.

Լ.




- 20 8 Գշ. գձ. ԼԵ օր մեծի պն. — Ռ. Իրողիոնի եւ այլոց սրց. — Յայսմ. Ահեկան. 8
- ⊙ Առաջին քառորդ լուսնի. — Պարզ եւ պայծառ.
- 21 9 Գշ. գկ. ԼԸ օր մեծի պահոց. — Ռ. Եւփսիքիոսի վկային. 9
- 22 10 Եշ. դձ. ԼԹ օր մեծի պահոց — Ռ. Տերենտեայ, Ափրիկանոսի, Մաքսիմոսի, Պոմպոնիոսի, Զենոնի, Աղեքսանդրոսի, Թեոդորայ եւ այլոց վկայից. — Հր. Ծով վասն մահուան Հեղեայ եւ գերուքիւն տապալակին. 10
- 23 11 Ուր. դկ. Խ օր մեծի պահոց. — Ռ. Անտիպասի եպիսկ. 11
- ⊙ Արեգակն ելանէ ժամ 5, վ. 4.  
— մտանէ ժամ 6, վ. 53.
- 24 12 Շր. աձ. Յիշատակ յարութեան Ղազարու. — Ռ. Վասլի խոստովանողին. 12
- 25 13 † Կիր. ակ. ԾԱՂԿԱԶԱՐԳ ԵՍՍ Յ. ԵՍ Ռ., որոց եւ յիշատակ Արտեմոնի վկային. — Տոմ. Ահեկան. 13
- 26 14 Աւագ երկուշաբթի, բձ. — Ռ. Մարտինոսի պապին. 14
- ⊙ Աւագ լրումն լուսնի. — Հողմ եւ պարզ.
- 27 15 Աւագ երեքշաբթի, բկ. Յիշատակ տասն կուսանաց. — Ռ. Արիստարքոսի եւ Տրոփիմոսի. 15
- 28 16 Աւագ չորեքշաբթի, գձ. — Ռ. Ագապեայ, Իրինեայ եւ Քիոնէ կուսանացն. 16
- 29 17 † Աւագ հինգշաբթի, գկ. Տօն ամենատուրք հաղորդութեան եւ յիշատակ ոտնալուային. — Ռ. Սիմեոնի եպիսկ. Ծնունդ Վեհափառ Ինքնակային ամենայն Ռուսաց ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ (յամին 1818). 17
- 30 18 † Աւագ ուրբաթ, դձ. Յիշատակ Զարչարանաց, Թաջելութեան եւ Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. — ԵՍՍ Յ. ԵՍ Ռ. 18
- 1 19 † Աւագ շաբաթ, դկ. Ճրագալոյց գատկի. — Նաւակատիք յերեկոյին. — Ռ. Վսեփոյող իշխանին — Լու. ՄԱՅԻՍ, եւ տօն առաքելոցն Փիլիպպոսի եւ Յակոբայ. 19

Ն.

Լ.



- 2 20 ††† Ա.Կ. աձ. ԶԱՏԻԿ, եւս Յ. եւ Ռ. Ուտիք ե մեզ մինչեւ 20  
 ցՀամբարձումն. իսկ Ռուսաց մինչեւ ցՆոր Կիւրակե. —  
 Ազ. Ադամ.
- 3 21 † Ա.Բ. Բշ. ալ. Բ օր Զատկի. Յիշատակ մեռելոց. — Ռ. 21  
 Գեներալիոսի եպիսկոպոսին. — Լտ. Գիւտ Խաչ.
- ☉ Վերջին քառորդ լուսնի. — *Սմայամած եւ անձրեւային.*
- ☉ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 48.  
 — մտանէ ժամ 7, վ. 5.
- 4 22 † Ա.Գ. Գշ. րձ. Գ օր Զատկի. — Ռ. Թեոդորոսի եպիսկ. 22
- 5 23 Ա.Գ. Գշ. րկ. Գ օր Զատկի. — Ռ. Գեորգայ գօրավարին. 23  
 — Տճ. *Խըտրելէզ. - Խըտրելէզ ֆուրրուհասը.*
- 6 24 Ա.Ե. Եշ. զձ. Ե օր Զատկի. — Ռ. Սարայի ստրա՛ռելատի 24  
 եւ քանակի նորին. — Լտ. Համբարձումն.
- 7 25 Ա.Զ. Ուր. զկ. Զ օր Զատկի. — Ռ. Մարկոսի աւետարանչին. 25
- 8 26 Ա.Է. Շր. զձ. Է օր Զատկի. — Ռ. Բարսղի ամասիացւոյն. 26
- 9 27 † ԲԿ. — Նոր Կիւրակե, ղկ. — Ռ. Սիմեոնի ազգակա- 27  
 նին Քրիստոսի.
- 10 28 ԲԲ. Բշ. աձ. Թ օր յինանց. — Ռ. Յասոնի եւ Սոսիպա- 28  
 տրոսի. — Յ. Տօն Պալքիւր այազմային.
- 11 29 ԲԳ. Գշ. ալ. Ժ օր յինանց. — Ռ. Ինն վկայից, որք ի 29  
 Կիզիցիա կատարեցան.
- ☉ Ծնունդ լուսնի. — *Զուարճալի աւուրք.*
- 12 30 ԲԴ. Գշ. րձ. ԺԱ օր յինանց — Ռ. Յակովբայ առաքելոյն. 1  
 — Տճ. *Սեֆեր. — Հր. Սիվան.*





Տ Օ Ն Ա Պ Ի Ի Տ.

Չատկի օրը թնջ հաշուով գտնելու է .

— Մարտի 21-ին վերայ տարեգրոյն թիւը աւելցընելով՝  
զատկի օրը կը գտնուի :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՅՆԵՐ.

Կատուի դունչը մսին չհասան. ասեց «Էսօր ուրբար ա» :  
Ես փաշա <sup>1</sup>, դու բօշայ <sup>2</sup>. բարեկամացանք, — բարե-  
բարացանք <sup>3</sup> :

Գող, սրտումը դող :

Բարեկամի հետ կեր ու խում արա, առուտուր մի անիլ :

Առաւօտուայ շառը լաւ ա, քանց իրիկուան խերը :

Քետուի թնջ վեջն ա թէ մումը բանկ ա <sup>4</sup> :

Ինչ տեղ հաց, ընտեղ կաց :

Ծերանաս, ծերի դատրըն իմանաս :

Կաշառքը մութը տեղը լիս կը տայ :

Թութքերն անիրաւ, խօսքերն իրաւ :

Էշն թնջ գիտէ — նուշն թնջ ա :

Հազար թիւման պարտքս ըլի, մարդամիջի մարդս ըլի :

Իշու քացուցը բեղամաղ մի ըլիլ :

Ծառը քանի բար (պտուղ) շատ ունենայ, գլուխը կախ  
կը քցի :

Կոռուի վերջը փոշմանութիւն ա :

Հարիւր միրքիցը մի մի մազ որ հանես, մի միրուք  
կը դառնայ :

Կտրած հացը չի սաղանայ :

Հաւի կռկրուայիցն իմացի որ փորացաւ ունի :

Հաց ու պանիր, կեր ու բանիր :

1 Կուսակալ. 2 Չինկիւրանէ. 3 Հաւասարեցանք, — աստիճանով մեկ  
եղանք. 4 Կոյրին թնջ հոգն է թէ մումը բանկ է :



Ա Պ Ր Ի Լ .

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Հիւսիսային<sup>7</sup> այսինքն ցուրտ երկիրներու մեջ ընդհանրապէս ամսոյս մեջ կսկսեն վարուցանք անելը. իսկ հարաւային<sup>7</sup> այսինքն տաք երկիրներու մեջ ժամանակ է սեխ, ձմերուկ, կորեկ, եգիպտացորեն, լոպի, գետնախնձոր, ոսպն, սիսեռն, բողկ, ծներեկ<sup>1</sup>, նեխուր<sup>2</sup>, անանուխ<sup>3</sup>, կապար<sup>4</sup>, կինամոն<sup>5</sup>, պատինճան<sup>6</sup>, շահասպրամ<sup>7</sup>, սաեպղին<sup>8</sup>, բրբնջուկ<sup>9</sup>, սոխ, սխտոր, պղպեղ եւ ուրիշ սոցա նման համեմունք եւ բանջարեղէնք ցանել. այլ եւ անցեալ մարտի մեջ վարսակ<sup>10</sup> ու գարի սերմանած տեղերն եղած կունտ հողերը տափանով փշրել :

ՄԵՂՈՒԱՅՈՒԾԱԿԱՆՔ. — Մեղուներն ամսոյս մեջ օդոյ բարեխառնութենէն մեկ նոր ոյժ ստանալով՝ մեծ աշխուժով կսկսին նոր ծաղկած ուռիներու, սերկեւիլի, ծիրանիլի եւ ուրիշ ծառերու վերայ բռնրախլ եւ մեղրաբերական հիւք ժողովել. եւ անա այս է պատճառը որ ամսոյս մեջ բազմաքիւ ձագեր կհանեն. ուստի եւ մեղուի տերը մեծ ուշադրութիւն պիտի դարձընէ որ միշտ փերակները մաքուր լինին : Եթէ մեղուաց մերձակայքը գետ կամ լիճ չկայ, պէտք է ամանով ջուր դնել փերակին մօտ : Ապրիլի մեջ քիչ անգամ կպատահի որ ցուրտի պատճառաւ մեղուները քաղցածութիւն կրեն. բայց պատահած ժամանակը պէտք է մաքուր մեղրով կերակրել գիրենք, եւ եթէ մեղր չգտնուի, շաքարի կտորներ ձգել փերակին մեջ :

<sup>1</sup> Ռու. Спаржа, Տճ. դուշ դօմիաղ : <sup>2</sup> Сельдерей, — քէրէվիլ : <sup>3</sup> Мята, — նանէ : <sup>4</sup> Каперсы, — քէպէրէ : <sup>5</sup> Корица, — տարջին : <sup>6</sup> Демьянка, — փաթլըճան : <sup>7</sup> Василекъ, — ֆէսիլէն : <sup>8</sup> Морковь, — չալուճ : <sup>9</sup> Щавель, — դուղու դուղաղը : <sup>10</sup> Овёсь, — եուլաֆ :

Ա. Պ Ր Ի Լ

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Ամսոյս սկիզբները բոլոր այգին պէտք է փորել, եւ մի եւ նոյն ժամանակ խաղողնիքի աւելորդ ճիւղերը կտրել : Երե եղանակը ցուրտ լինի, նոր ծառեր տնկելը կարելի է շարունակել : Հայաստանի մեջ ընդհանրապէս ամսոյս մեջ կը տնկեն խաղողնիքին մօտի ցիցերը, որ շատ օգտակար է երբեմն պատահած սաստիկ քամիներէն ճիւղերն անվնաս պահելու կողմանէ :

ԱՆԱՍՆԱԳԱՐԾԱՆԱԿԱՆՔ. — Գոմերն ու ախուռները պէտք է մաքրել ու հովոտել : Մատակ ձիերը իրենց քուռակներուն հետ ցերեկները դաշտի մեջ բողջընելու է որ կանաչ խոտ ուտեն. իսկ երեկոները քուռակին մօրը վարսակ տալու է : Ոչխարներն ըստ մեծի մասին ապրիլի մեջ կձնեն իրենց գառնուկները. ուստի պէտք է մաքրիները (օճառ, եգ ոչխար) գէթ երեկոները՝ քեփով կերակրել, եւ շարաքը մեկ անգամ աղ ուտեցընել : Գառները գոմերուն մերձակայքը պէտք է արածեցընել եւ զգոյշ կենալ որ անձրեւէ ու սաստիկ քամիէ ջվնասուին :

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Շտեմարանները հովոտելու եւ ըստ կարելւոյն մաքուր պահելու է : Կովի կարէն երկու տեսակ եղ, այսինքն կոզի (կարի եղ) եւ կարագ (սերի եղ) հանելու է : Բնակարանի պատուհանները բանալ, սենեակները հովոտել եւ պատերուն աւրուած տեղերը ձեփել տալ պէտք է. բակին մեջ եւս համեմունք եւ բանջարեղէնք ցանել տալու է :

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՏԱՌՔ ԱՊՐԻԼԻ.

(Ի Հարաւային Ռուսիա.)

- Ի Նովոմոսկովսկ եւ ի Մելիտոպոլ, 1—6.
- Պետրոպաւովսկ, 2-ին.
- Հոբին, յԱնանեւ, յԵլիսապետգրաղ, յԵկատերինուլաւ, յԱլեքսանդրովսկ, ի Սիրագոսի (գաւառ Մելիտոպոլի), ի Մայորսկիյ (գաւառ Ալեքսանդր.) եւ ի Ռեւաժսկիյ (գաւառ Ռոստովի), 23-ին.
- Բերեզովկա, ամեն երկուշաբթի :



Մ Ա Յ Ի Ս


(31 օր է, յորոց 2-ը կիրակի.)

- |    |  |    |
|----|--|----|
| 13 | 1 ԲԵ. ԵՂ. ԲԿ. ԺԲ օր յինանց. — Ռ. Երեմիայ մարգարէին.  | 2  |
|    | ⊙ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 35.<br>— մտանէ ժամ 7, վ. 18.   |    |
| 14 | 2 ԲՁ. Ուր. գձ. ԺԳ օր յինանց. — Ռ. Գիւտ նշնարաց սրբոյն Արանասի հայրապետին.                        | 3  |
| 15 | 3 ԲԷ. Շր. գկ. ԺԴ օր յինանց. — Ռ. Տիմոթէոսի եւ Մարտի.   | 4  |
| 16 | 4 † ԳԿ. Աշխարհամատրան կիրակէ, դձ. — Կանաչ կիր. — Ռ. Պեղագեայ կուսին. — Լտ. Հոգեգայուստ.          | 5  |
| 17 | 5 ԳԲ. ԲՂ. դկ. ԺԶ օր յինանց. — Ռ. Իրինեայ կուսին. — Հր. Սաւփօր կամ Պեկտեկոստէ, որ է Կիւլ պայրամը. | 6  |
| 18 | 6 ԳԳ. ԳՂ. աձ. ԺԷ օր յինանց. — Ռ. Յորայ արղարոյն.   | 7  |
| 19 | 7 ԳԴ. ԴՂ. ակ. ԺԸ օր յինանց. — Ռ. Երեւումն Ս. Խաչին.  | 8  |
|    | ⊙ Առաջին քառորդ յուսնի. — Զովարար անձրեւք.   |    |
| 20 | 8 ԳԵ. ԵՂ. Բձ. ԺԹ օր յին. — Ռ. Յովհ. աստուածարանին. — Յայսմ. Մարերի.                              | 9  |
| 21 | 9 ԳԶ. Ուր. ԲԿ. Ի օր յինանց. — Ռ. Փոխադրութիւն նըշխարաց Նիկողայոսի հայրապետին.                    | 10 |
| 22 | 10 ԳԷ. Շր. գձ. ԻԱ օր յինանց. — Ռ. Սիմոնի կանանացոյ.  | 11 |
| 23 | 11 † ԳԿ. Զորրորդ կիրակէ, գկ. — Կարմիր կիր. — Ռս. Մուկիոսի վկային. — Լտ. Ամենասուրբ Երրորդութիւն. | 12 |

⊙ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 25.  
— մտանէ, ժամ 7, վ. 29.

Ն.

Լ.



- |    |   |    |
|----|---|----|
| 24 | 12 ԳԲ. ԲՂ. դձ. ԻԳ օր յինանց. — Ռ. Եպիփանու կիպրացւոյն.                    | 13 |
| 25 | 13 ԳԳ. ԳՂ. դկ. ԻԳ օր յինանց. — Տում. Մարերի. — Ռ. Գղիկերիոսի վկայուհւոյն. | 14 |

⊙ Լրումն լուսնի. — Պայծառ աւուրք.

- |    |  |    |
|----|--|----|
| 26 | 14 ԳԳ. ԳՂ. աձ. ԻԵ օր յինանց. — Յ. եւ Ռ. Կիսապենտեկոստե եւ Իսիդորոսի վկային.                                    | 15 |
| 27 | 15 ԳԵ. ԵՂ. ակ. ԻԶ օր յինանց. — Պախոմիայ մեծին. — Լտ. Տօն խորհրդոյ ամենասուրբ հաղորդութեան. — Տճ. Կիւղ փանայրք. | 16 |
| 28 | 16 ԳԶ. Ուր. բձ. ԻԷ օր յինանց. — Ռ. Թեոդորի աշակերկերտին Պախոմիայ.  | 17 |
| 29 | 17 ԳԷ. Շր. բկ. ԻԸ օր յինանց. — Ռ. Անդրոնիկոսի վկային.  | 18 |
| 30 | 18 † ԵԿ. Հինգերորդ կիւրակե, գձ. Տօն Երեւման Խաչին. — Ռ. Թեոդոտայ վկային.                                       | 19 |

- |    |  |    |
|----|--|----|
| 31 | 19 ԵԲ. ԲՂ. գկ. Լ օր յինանց. — Ռ. Պատրիկիոսի եպիսկոպոսին. | 20 |
|----|--|----|

- |   |   |    |
|---|---|----|
| 1 | 20 ԵԳ. ԳՂ. դձ. ԼԱ օր յին. — Ռ. Ալեքսիոսի մետրապոլտին. — Ագ. Շրաք. — Լտ. ՅՈՒՆԻՍ. | 21 |
|---|---|----|

Անուանակոչութիւն վսեմափառ. Կայսրորդւոյն Թագածառանգ Մեծի Իշխանին Ալեքսեայ Ալեքսանդրովիչ.

- |   |   |    |
|---|---|----|
| 2 | 21 ԵԴ. ԳՂ. դկ. ԼԲ օր յինանց. — Յ. եւ Ռ. Կոստանդիանոսի եւ Հեղինայ. | 22 |
|---|---|----|

Անուանակոչութիւն վսեմափառ. Կայսրեղբօր Մեծի Իշխանին Կոստանդին Նիկոլայեւիչ.

Անուանակոչութիւն վսեմափառ. եւ Կայսերազն Մեծի Իշխանին Կոստանդին Կոստանդինովիչ.

Ծնունդ վսեմափառ. եւ Կայսերազն Գշխ. Ալեքսանդրայ Պետրովնայ (յամին 1838.)

Անուանակոչութիւն վսեմափառ. եւ Կայսերազն Դըշխոյին Ելենայ Պաւլովնայ.

⊙ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 18.

— մտանէ ժամ 7, վ. 58.

Ն.

Լ.



- 3 22 ԵԵ. ԵՂ. աձ. ԼԳ. օր յինանց.—Ռ. Բասիլիսկոսի վկային. 23
- Ⓒ Վերջին քառորդ լուսնի. — Փոփոխական.
- 4 23 ԵՁ. Ուր ազ. ԼԳ. օր յինանց — Ռ. Միքայելի եպիսկ.— 24
- Լտ. Տօն սրտին Յիսուսի.
- 5 24 ԵԷ. Շր. բձ. ԼԵ. օր յինանց. — Ռ. Սիմեոնի վկային. 25
- 6 25 † ԶԿ. Վեցերորդ կիրակե, բկ. — Ռ. Գիւտ գլխոյ Յով- 26
- հաննու. Կարապետին.
- 7 26 ԶԲ. ԲՂ. գձ. ԼԷ. օր յինանց. — Ռ. Կարպոսի վկային. 27
- 8 27 ԶԳ. ԳՂ. գկ. ԼԸ. օր յինանց. — Ռ. Բերապոնտայ եպիս- 28
- կոպոսին Սարգիսցւոց.
- 9 28 ԶԴ. ԳՂ. դձ. ԼԹ. օր յինանց.— Ռ. Նիկեոայ եպիսկոպո- 29
- սին Բաղկեղոնիոյ.
- 10 29 ԶԵ. ԵՂ. դկ. Խ. օր յինանց, եւ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՆ ԲՐԻՍ- 30
- ՏՈՍԻ, եւս Յ. եւ Ռ.—Վիճակ.
- Ⓓ Մնունդ լուսնի. — Զուարճալի աւուրք.
- 11 30 ԶԶ. Ուր աձ. ԽԱ. օր յինանց.—Ռ. Խահակայ Դաղմա- 1
- տացւոյն. — Լտ. Բառնարայ առաքելոյն. — Տճ. Ռէ-  
պիւլ կիվիլ. — Հր. Թամուզ.
- 12 31 ԶԷ. Շր. ազ. ԽԲ. օր յինանց. — Ռ. Երմեայ աշակերտին 2
- Պօղոսի.





Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Երեւման Խաչի տօնը խնչպէս կը գտնուի.

— Թե որ ապրիլի 18-ին վերայ տարեգրոյն թիւը աւելցրնեմք, Երեւման Խաչի տօնը կը գտնեմք: — Յրինակ. եթէ վ. տարեգրոյն թիւը, այսինքն 30-ը աւելցրնեմք ապրիլի 18-ին վերայ, կտեսնեմք որ Մայիսի 18-ին Երեւման Խաչ է, ինչպէս օրացուցիս սկիզբը Շարժական տօներուն մէջ դրուած է:

Համբարձման օրը խնչպէս գտնելու է.

— Ապրիլի 29-ին վերայ տարեգրոյն թիւն աւելցրնելով՝ Համբարձումն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՅՆԵՐ.

Ասել են առ ու տուր, եւ ոչ թէ առ ու կուլ տուր:

Երկաթը տաք տաք կը ձեծեն:

Բանն ո՛վ անի,—ես ու դուն. հացն ո՛վ ուտի,—ես ու դուն:

Տարին մի գատիկ, են էլ նաւակատիք:

Ուրիշի ձեռով փուշ քաղի:

Ի՛նչ կասես, են կը լսես:

Թրի կտրածը կը սաղանայ, լեզուինը չի սաղանայ:

Թունդ քացախը իւր ամանը կճաքացրնի:

Ընչանք երեխեն լաց չըլնի, մերը ծիծ չի տալ:

Ի՛նչ կցանես, են կը հընձես:

Լաւ եզր լծան տակին քելլու կըլի, լաւ կնիկը—օրօրոցի:

Խաղ շատ գիտեմ, բայց ձէն չունիմ:

Կուշտը սովածին մանր կը փրբրի:



Մ Ա Յ Ի Ս.

## ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այս ամենազեղեցիկ ամսոյն մեզ բոլոր բնութիւնը մեկ նոր կենդանութիւն ստանալով՝ երկրագործին պարտքն է իւր բոլոր վարուցանքին վերայ ամենայն ուշադրութեամբ հսկել, որ մեզը անասունք չբամենն ու չկոխկրտսեն: Տաք երկիրներու մեջ երկրագործի աշխատանքն է մայիսին խոտ հնձելն ու չորցընելը. այլ եւ կանեփ եւ շողգամ (*բեռն, շէղեմ*) ցանելը:

**ՄԵՂՈՒԱՅՈՒԾԱԿԱՆՔ.** — Ամսոյս մեջ պտղատու ծառերն ու ծաղիկները ծաղկելով՝ մեղուները ապրիլէն առելի արդիւնաւոր կլինին եւ գրեթէ ամէն օր հիւք ժողովելու կելնեն. ուստի մեղուարուծին եւս պարտքն է հսկել որ իւր մեղուաց պարը ուրիշ մեղուներու հետ չխառնուին կամ մի եւ նոյն ծաղկանց վերայ հիւք ժողովելու ժամանակ պատերազմի ջեյնեն միմեանց դէմ, որ շատ անգամ մեծ կոտորած կանեն:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Թէ որ ապրիլին փորուած չէ այգին, ամսոյս սկիզբները անպատճառ պէտք է փորել, եւ միանգամայն խաղողնիքին ճիւղերը քովի ցիցերուն վերայ կապել: Մրգեղինաց ամէն մեկ ծառին վերայ նայելու է, եւ ուր որ բրբուրի (*բրբրբր*) բոժոժ գտնուի, իսկոյն ոչընչացընելու է. այլ եւ նորատունկ ծառերը, թէ որ անձրեւ չլինի, շաբաբը երկու անգամ ջրելու է:

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Մատակ ձիերն իրենց քունակներուն հետ դաշտերու մեջ արածեցընելը պէտք է շարունակել: Էգ ոչխարները այս ամիս եւս գառնուկներ կձնանին. ուստի պէտք է խնամքով կերակրել գիրենք: Տաք երկիրներու մեջ 15-էն վերջը կսկսուի բուրդ խզելը. բայց ուր որ ծով կամ գետ կայ, խզելէն յառաջ լաւ ու



օգտակար կլինի թէ որ 8 կամ 10 օր աւելայն երեկոյ լուացուին, որով թէ ոչխարները կգովանան եւ թէ նոցա բուրդը կմաքրուի: Պետք է նաեւ այլ եւ այլ գունով բուրդ ունեցողները գատել եւ մրակերպները մեկտեղ ժողովելէն վերջը խզել, որ յետոյ դժուարութիւն չլինի մեկմեկ գատելու: Գոմերն ու ախոռները շուտ շուտ մաքրել եւ միշտ աղբը դուրս հանել պետք է. իսկ ձիերուն կանաչի հետ խառնած չոր խոտ տալու է, եւ երեկոյ առաւօտ ծովու կամ գետի մէջ լուանալու է: Խոզերը ցորեկները դաշտերու մէջ՝ ճահիճներու մօտ բողջընելու է. իսկ գոմէշները լիճերու մերձակայքն արածեցընել պետք է, որ տաքէն նեղացած ժամանակ՝ լճին մէջը պառկելով գովանան:

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.**—Բակին մէջ ցանած կա՛ւաչեղէնները երբեմն երբեմն երեկոյեան ժամանակ ջրելու է: Ամսոյս մէջ եկած անձրեւի ժամանակ՝ տան պիտոյիցը համեմատ տակառ պետք է դնել դուրսը որ անձրեւով լցուի, եւ անցեալ տարւոյ զինի լելը (մուրտը) խառնելով՝ արեւի տակ բողջընելու է մինչեւ որ կանոնաւոր քացախ լինի, եւ այնուհետեւ իսկոյն ներս առնելու է որ արեգական ազդեցութենէն սաստիկ կտրուկութեան հասնելով՝ քացախը մեկէն չբուլանայ: Ժամանակ է վարդի քաղցրաւենին (*կիւշկնկի*) եփելու:

**ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՄԱՅԻՍԻ.**

(*Ի Հարաւային Ռուսիա.*)

Ի Բերիսլաւ եւ յԱլեշկի, Էշ. Մայիսի 1-ին.

Ի Տիրասպոլ, Ի Նովոմիրգորոզ, Ի Վոզնեսենսկ, Ի Պաւլոգրադ, Ի Ռոստով, Ի Թայդան, Ի Բելց, Ի Պոլտաւա, Ի Կախովկա, Ի Նիկոպոլ, Ի Սեդնեւկա, յԵասինովատիչ եւ Ի Մեծ Թոկմակ, Ռւր. 9-ին.

Ի Քերսոն, Ի Բերիսլաւ եւ Ի Հօրին, Բշ. 19-ին.

— Բախմուտ, Գշ. 21-ին.

— Բալտա, Շր. 24-ին.



### Յ Ո Ւ Ն Ի Ս

(30 օր է, յորոց 5-ը կիրակի եւ 1-ը տօն.)

- 13 1 † էԿ. Եօրներորդ կիրակե, բձ.—Երկրորդ ծաղկազարդ. 3  
 — Ռ. Յուստինոսի փիլիսոփային. — Լտ. Անտոնի պատուացույն.  
 — Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Մեծի Իշխանին Դեմետրի Կոստանդինովիջ (յամին 1860).
- ⊙ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 14.  
 — մտանէ ժամ 7, վ. 43.
- 14 2 էԲ. Բշ. բկ. ԽԴ օր յինանց. — Ռ. Նիկեփորայ եպիսկոպոսին Կոստանդնուպոլսոյ. 4
- 15 3 էԳ. Գշ. գձ. ԽԵ օր յինանց.—Ռ. Լուկիլիանոսի վկային. 5
- 16 4 էԴ. Դշ. գկ. ԽԶ օր յինանց.—Ռ. Մետրոփանոսի պատրիարքին. 6
- 17 5 էԵ. Եշ. դձ. ԽԷ օր յինանց. — Երկնային վիճակ. ի յիշատակ վիճակաւ ընտրութեան Մատաքիայ առաքելոյն. 7  
 — Ռ. Դորոքեոսի եպիսկոպոսին.
- ⊙ Առաջին քառորդ լուսնի. — Բարեխառն.
- 18 6 էԶ. Ոար. դկ. ԽԸ օր յին.—Ռ. Բեռարիոնի եւ Իլարիոնի. 8
- 19 7 էԸ. Շբ. աձ. ԽԹ օր յինանց. — Ռ. Թեոդիտոնի եպիսկոպոսին. — Յայսմ. Մարգաց. 9

Ն.

Լ.



- 20 8 † Կիր. ակ. ՀՈԳԵԳՍԼՈՒՍՏ, Պենտեկոստե, եւս Յ. եւ Ռ. 10  
— Բարեկենդան Եղիական պահոց.
- 21 9 Բշ. գձ. Բ օր Հոգեգալստեան.—Ռ. Կիւրղի Աղեքսանդր. 11  
— Ամառնամուտ եւ արեւադարձ Խեցգետնի. — Յերեկն  
սկսանի կարճանայ եւ գիշերն երկարել.
- 22 10 Գշ. րկ. Գ օր Հոգ. — Ռ. Տիմոթեոսի եպիսկոպոսին. 12
- 23 11 Գշ. գձ. Գ օր Հոգեգալստեան.— Յ եւ Ռ. Բարբողոմեոսի 13  
եւ Բառնարայ առաքելոցն.
- ⊙ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 15.  
— մտանէ ժամ 7, վ. 49.
- 24 12 Եշ. զկ. Ե օր Հոգեգալստեան. — Ռ. Ոնոփրիոսի մեծին. 14  
— Լտ. Ծնունդ Յովհաննոս Մկրտչին.—Տոմ. Մարգաց.  
⊙ Լրումն լուսնի. — Փոխոխական.
- 25 13 Ուր. դձ. Զ օր Հոգ.—Ռ. Ակիւլինեայ եւ Աննայի. 15
- 26 14 Շր. դկ. Է օր Հոգեգալստեան.— Ռ. Եղիսէի մարգարէին 16  
եւ Մերողիոսի պատրիարքին.
- 27 15 † Կիր. աձ. Ա կիր Յարութեան. յիշատակ Եղիայի 17  
մարգարէին. Հրց. աձ. Որ եկիր ի փրկութիւն. Հմր. աձ.  
Ընդ լուսանայ.—Առաջին պսակ. հարսանիք լինին. —  
Յ. եւ Ռ. Բարեկենդան առաքելոց. — Հր. Ծով վասն  
առնանն Երուսաղեմի.
- 28 16 Բշ. ակ. Հոփսիմեանց կուսանաց.—Ռ. Տիքոնի եպիսկ. 18
- 29 17 Գշ. րձ. Գայիանեանց կուսանաց.—Ռ. Մանուէլի, Սա- 19  
րիղայ եւ Իսմայելի.—Լտ. Առաք. Պետրոսի եւ Պողոսի.
- 30 18 Գշ. րկ. պահք — Ռ. Ղեռնդեայ վկային. 20
- 1 19 Եշ. գձ. Յովհաննոս Կարապետին եւ Աբանագինեայ ե- 21  
պիսկոպոսին. — Ագ. Նախայ. — Յ. եւ Ռ. Յուդայի  
Տեսանեղբոր. — Լտ. ՅՈՒԼԻՍ.
- 2 20 Ուր. զկ. պահք. — Ռ. Մերողիայ եպիսկոպոսին. — Լտ. 22  
Այցելութիւն Ս. Աստուածածնի.

⊙ Վերջին քաթորդ լուսնի. — Անճրեւային.



Ն.

Լ.

- |    |  |    |
|----|--|----|
| 3  | 21 † Շր. դձ. Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վի-<br>րապէն. — Ռ. Յուլիանոսի տարսոնացւոյ.   | 23 |
|    | ☉ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 19.<br>— մտանէ ժամ 7, վ. 48.   |    |
| 4  | 22 † Կիր. դկ. Բ. Տօն կարողիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիա-<br>ծնի.—Ռ. Եւսերեայ սամոսատացւոյ.   | 24 |
| 5  | 23 Բշ. աձ. Մանկանցն Բերդեճեմի եւ Ակակիոսի վկային,<br>Մովկիմայ քահանային եւ Կոտրատիոսի զինաւորին.—<br>Ռ. Ագրիպինեայ վկայուհւոյն.  | 25 |
| 6  | 24 Գշ. ալ. սրբոց կուսանացն Նունեայ եւ Մանեայ. —<br>Յ. եւ Ռ. Ծնունդ Յովհաննոս Կարապետին.  | 26 |
| 7  | 25 Գշ քձ. պահք. — Ռ. Փերրոնեայ կուսին.   | 27 |
| 8  | 26 Եշ. քկ Իշխանացն Սահակայ եւ Յովսեփայ, եւ վկայիցն<br>Սարգսի եւ Բազոսի. — Ռ. Դաւթի վկային.<br>— Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերագն Դշխոյին Ալեք-<br>սանդրայ Իօսիֆովնայ (յամին 1830). | 28 |
| 9  | 27 Ուր. գձ. պահք. — Ռ. Սամփսոնի հիւրասիրին.  | 29 |
|    | ☉ Ծնունդ լուսնի. — Որտամուշք եւ փայլակ.  |    |
| 10 | 28 Շր. գկ. Մեծին Ներսեսի հայրապետին մերոյ եւ Խաղայ<br>Եպիսկոպոսին. — Ռ. Կիւրոսի եւ Յովհաննոս եւ Սեր-<br>գիոսի. — Հր. Աք. — Տճ. Ռեպիւլ ախար.                                    | 1  |
| 11 | 29 † Կիր. դձ. Գ. Հրց. աձ. Պայծառացիր. Հմբ. դձ. Փա-<br>ռարանակից. — Բարեկենդան Լուսաւորչի պահոց. —<br>Յ. եւ Ռ. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի.                                     | 2  |
| 12 | 30 Բշ. դկ. պահք. Եպիփանոս կիպրացւոյն, Բաբելայ հայ-<br>րապետին եւ երից աշակերտաց նորին. — Յ. եւ Ռ.<br>Երկոտասան առաքելոց.   | 3  |



Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Ս. Գրիգորի բարեկենդանը գտնելու համար ինչ հաշիւ կայ .

— Երբ Մայիսի 30-ին վերայ տարեգրոյն թիւն աւելցընենք, Լուսաւորչայ պահոց բարեկենդանը կը գտնենք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՅՆԵՐ.

Ամեն Ղազար՝ Ղազար չի ըլնիլ, ամեն տակո՛ւի զազար չի ըլնիլ :

Քնածն ու մեռածը մին ա :

Շան հետ աղբերացի, փետը ձեռիցդ վեր մի քցի :

Սարը սարին չի դիպչիլ, մարդս մարդին կդիպչի :

Զիտ գողն ու ձուի գողը մին ա :

Արջը որ տանձին չի հասնում, ասում ա « կենա իմ հօր խերին » :

Գողն ինչ կուզի.— Մութը գիշեր :

Գոմշատիրոջը կաշեզին կուտան :

Բերդն իրա միջոցը կը քանդուի :

Արջը գիլի փայ դառաւ, նրա բանը խարար էլաւ :

Գարբնին դանակ չի ըլնիլ, ջուհակին՝ պատանք :

Անուստայ փեշակը հարամ ա :

Անցկացած բանին մի ափսոսայ, անհաւատ բանին մի հաւատայ :

Գինի խմողը կը հարբի, կռիւ գնացողը կմեռնի :


Գանակը կովի կուշտը կտանեն, ո՛չ թէ կովը դանակի :

Ատամը կը հանի անդամը :

Առաջի ասողը չի գիտում թէ ետինը ինչ պիտի ասի :

Աչքն արդար լաւ ա քանց միտքը մեղաւոր :

Ինձ տես, — քեզ լաց. որտեղ ես, — դայիմ (ամուր) կաց :





Յ Ո Ւ Ն Ի Ս.

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏՆԷԼԻՔ

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Յուրա երկիրները ամսոյս մեջ կսկսին խոտ հնձելը: Պետք է արտերուն քովի ջրային տեղերը առուակներ քանայով ջորցրնել ու անպետք թուփերը կտրել եւ վառելու գործածել: Հնձած խոտերը ջորցրնելէն վերջը ժողովել ու մեկտեղ դիզել, եւ մեկմեկ կապած երեք ձող (*սըրըղ*) ձգել վերան, որ քամիի ժամանակ խոտը չցրուի: Ժամանակ է գետնախնձորի արմատին վերայ հողակոյտ անելու:

**ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ.** — Մեղուաց պարքը ամսոյս մեջ կբազմանան. ուստի եւ մեղուարանը պետք է մոմագօծ նոր փերակներ ունենայ պատրաստած, որ որսայ կարողանայ եւ կամաց կամաց փերակին մեջ ժողովէ զիրենք. բայց այս եւս գիտնայու է որ թէ տկար եւ թէ ուժով մեղուաց պարքին համար՝ նոր փերակներուն մեջ անպատճառ խորիսի (մոմէն չբաժնած մեղր) դնելու է առջեւէն, որպէս զի ուժովները աւելի շուտով ընտելանան, եւ տկարները սկզբնական պաշար ունենան:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այս ամիս զգուշութեամբ պետք է շրջել այգիներուն մեջ, որ նորարոյս ճիւղերն ու բողբոջները (*ֆիտակ*) չբափին: Առուակներու մեջ բուսած խոտերը պետք է մաքրել եւ ջրանցքները շտկել. այլ եւ նոր տնկած խաղողնիքին տակի խոտերը պոկել: Ամսոյս մեջ կհասնի ծիրանն ու կեռասը, եւ խաղողն իւր քովի ցիցերուն վերայ կսկսի փաթթուիլ:

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Անասնոց գոմերն ու ախոռները պետք է բաց ու մաքուր պահել որ ճանճերէ չնեղուին: Մարտի վերջերն ու ապրիլի սկիզբները ծնած

Յ Ո Ւ Ն Ի Ս


ձիերը քիչ քիչ գործի դնելու է, եւ ոչխարները զով ժամանակները միայն արածեցրնելու է. գիշերներն եւս իրենց զառնուկներուն հետ մեկտեղ անմշակ արտերու վերայ բողջրնելու է: Հովուին կամ անասնարուծին պարտքն է գիշերները լաւ արածեցրնել, եւ արեգակը դեռ չծագած ջրել: Եթէ ցուրտի պատճառաւ ոչխարաց բուրդը խզուած չեն մայիսին, ամսոյս մեջ անպատճառ պետք է խզել, որ թէ տաքէ չնեղուին եւ թէ ախորժակով արածեն: Շատ տեղ ամսոյս մեջ ձմեռուան ցանքի համար երկիր հերկող եզներն ու գոմէշները ցորեկուան սաստիկ տաքերուն հանգիստ կբողուան եւ գիշերուան զովերուն կաշխատցրնեն:

ՏՆՏԵՍԱՎԱՆՔ.—Յունիս ամսէն սկսելու է քիչ քիչ ձմեռուան փայտին տարեկան պատրաստութիւնը տեսնել. եւ տանիքներուն վնասուած ու արուած տեղերը շակել: Բայ (*վիշնէ*) ու ծիրան (*գեղտաշի*) ասուած մրգեղէններէն թէ քաղցրաւենիք (*կիշէկէկի*, *բարլը*) եփել եւ թէ նոցա, որպէս նաեւ կեռասի չորցուցածը ժողովել: Ձմեռուան տոյմի տերեւը ամսոյս մեջ աղելու է. եւ հաղարջի (*сжоро-дина*) քաղցրաւենին եփելու է:

ՆՇԱՆԱՒՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՅՈՒՆԻՍԻ.

(ի Հարաւային Ռուսիա.)

- ի Խարկով, 1—15.
- Նողայսկ եւ ի Բելց Գշ. 24-ին.
- Բայտա, 25—30.
- Բախմուտ, յԱլեքսանդրիա, յԵլիսաւետադրաղ, յԵկատերինոսլաւ, ի Նովոգեորգեւսկ, յԱլեքսանդրովսկ, ի Մելիտոպոլ, ի Պաւլովսկ եւ ի Նովոիվանովկա, Կիր. 29-ին:





### Յ Ո Ւ Լ Ի Ս

(31 որ է, յորոց 4-ը կիրակի եւ 2-ը տօն.)

13 1 Գշ. աձ. պահք. — Կոստանդիանոսի բազաւորին եւ մօրն  
նորա Հեղինեայ. — Ռ. Կոզմայի եւ Դամիանոսի. 4

☉ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 26.  
— մտանէ ժամ 7, վ. 44.

14 2 Գշ. ալ. պահք. — Յ. եւ Ռ. Գիւտ հանդերձի Ս. Աստուա- 5  
ծածնին ի Վլաքերնի.

15 3 Եշ. քձ. պահք. Թեոդիտոնի գաղատացւոյն եւ Թալի- 6  
լեայ բժշկին, եւ եօրն կուսանացն՝ որք յԱնկիւրիա  
կատարեցան. — Ռ. Յակինթոսի մետրապոլիտին.

16 4 Ռ. ք. քկ. պահք. — Ռ. Անդրէի եպիսկ. Կրեոացւոց. 7

☉ Առաջին քառորդ լուսնի. — Տօթադին.

17 5 † Շք. գձ. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւոր- 8  
ջին մերոյ. Տօն ազգային. — Ռ. Աբանասի արեւացւոյն.  
— Անուանակոչութիւն Վսեմափառ. Կայսրորդւոյն Մեծի  
Իշխանին Սերգեայ Ալեքսանդրովիջ.

18 6 † Կիր. գկ. Գ, Հարց. ալ. Որ եկիր. Հմբ. գկ. Յարեա. 9  
Տերն — Հարսանիք. — Ռ. Սիսոյի մեծին. — Հր. Ծով  
վասն գերուրեան եւ աւերման Երուսաղեմի, որ է  
Գարա պայքամ.

210



Ն.	Լ.
19	10
20	11
21	12
22	13
23	14
24	15
25	16
26	17
27	18
28	19

7 Բշ. դձ. Անտոնինոսի, Թեոփիլոսի, Անիքրտոսի եւ Փոտինոսի. — Ռ. Թովմայի եւ Ակակիոսի. — Յայսմ. Հրոտից.

8 Գշ. դկ. Գանիելի մարգարէին եւ երից մանկանցն՝ Սեդրակայ, Միսաքայ եւ Արեղնագովի. — Ռ. Պրոկոպիոսի վկային. — Լտ. Մարգարիտայ կուսին.

9 Գշ. ակ. պահք. — Ռ. Բագարատայ տոռոմենայ եպիսկ.

10 Եշ. ակ Ս. Թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեարոպայ. Հրց. ակ. Որք զարդարեցին. Հմբ. գձ. Նմանեալ Մովսէսի. — Ռ. Քառասուն մանկանցն Նիկոպոլսոյ. — Լտ. Մարիամու մազդազննացւոյն.

11 Ուր. բձ. պահք. — Յ. եւ Ռ. Եւփիմեայ կուսին.

— Անուանակոչութիւն Վսեմափ. եւ Կայսերազն Գշխոյից Օլգայի Ֆեոդորովնայ, Օլգայի Նիկոլայեվնայ եւ Օլկայի Կոտանդինովնայ.

⊗ Լրումն լուսնի. — Անճրեւային աւուրք.

⊙ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 34.  
— մտանէ ժամ 7, վ. 36.

12 Շբ. բկ. Տրդատայ բազաւորին մերոյ, եւ Աշխէն տիկնոջն եւ Խոսրովիղխտոյ. — Ռ. Պրոկոլի եւ Էլարիոսի. — Տոմ. Հրոտից.

13 † Կիր. գձ. Ե, Գիւտ տփոյ Ս. Աստուածածնին. — Հարսանիք. — Ռ. Գարրիելի հրեշտակապետին. — Լտ. Յակոբայ առաքելոյն.

14 Բշ. գկ. Կալիստրատոսի եւ 49 վկայից, եւ Ղունկիանոսի քահանային. — Ռ. Ակիւղասայ վկային. — Լտ. Աննայի մօր Ս. Աստուածածնի.

15 Գշ. դձ. Զաքարիայ մարգարէին. — Ռ. Կիրակոսի եւ Յուդիտայ վկայիցն.

— Անուանակոչութիւն Վսեմափառ. Կայսրորդայն Մեծի Իշխանին Վլադիմիրայ Ալեքսանդրովիչ.

— Ծնունդ Վսեմափառ. եւ Կայսերազն Գշխոյին Անաստասիայ Միխայլովնայ (յամին 1860).

16 Գշ. դկ. պահք. — Ռ. Աքանագինեայ եպիսկոպոսին.



Ն.

Լ.

- 29 17 Եջ. աձ. Եղիսէի մարգարէին. — Յ. եւ Ռ. Մարիանեայ կուսին. — Լտ. Մարթայի քեռն Ղազարու. 20
- 30 18 Ուր. աղ. պահք. — Ռ. Եմելիանոսի վկային. 21
- 31 19 Շք. բձ Երկոտասան առաքելոցն Քրիստոսի եւ սրբոյն Պողոսի երեքասաներորդ առաքելոյն. — Ագ. Ղամար. 22  
— Ռ. Մակրինայ եւ Գիայ վկայունեաց.
- 1 20 † Կիր. բկ 2, Հրց Որ վասն մերոյ փրկութեան. Հմբ. 23  
Քո յարութեանդ. — Բարեկենդան վարդավառի պահոց.  
— Յ. եւ Ռ. Եղիայի մարգարէին. — Լտ. ՕԳՈՍՏՈՍ.
- 2 31 Բշ. գձ. Ա. օր պհց. վարդավ. — Ռ. Միմեոնի եւ Յովն. 24  
⊙ Արեգակն ելանէ ժամ 4, վ. 47.  
— մտանէ ժամ 7, վ. 24.
- 3 22 Գշ. զկ. Բ օր պհց. վարդ. — Ռ. Մարիամու մագղաղենաց. 25  
— Յր ան. վ. եմ. Կայսրոսն. ՄԱՐԻԱՅ ԱԼԵԲՍԱՆԴՐՈՎՆԱՅ.  
— Անուանակոչութիւն վսեմափ. եւ Կայսերազն Դշխոյից  
Մարիայ Ալեքսանդրովնայ եւ Մարիայ Նիկոլայեվնայ.
- 4 23 Գշ. դձ. Գ օր պհց. վարդ. — Ռ. Տրոփիմոսի եւ Թեոփիլոսի. 26  
— Լտ. Ա. Գոմինիկոսի.
- 5 24 Եջ. զկ. Գ օր պհց. վարդ. — Ռ. Քրիստինեայ կս. — Տձ. 27  
Սխարրը կշեամի պահուչք. վերջ առաք Շնիկ աստեղն.
- 6 25 Ուր աձ. Ե օր պհց. վարդ. — Յ. եւ Ռ. Աննայի մօր 28  
սուրբ Ատուածածնի. — Լտ. վարդավառ.
- 7 26 Շք. աղ. Յիշատակ տապանակին հնոյ եւ տօն նորոյս 29  
սուրբ եկեղեցւոյ. — Յ. եւ Ռ. Սրբուհւոյն Պարասքեեայ.
- 8 27 † Կիր. բձ. վ. ԱՐԴԱՎԱՌ. — Յ. եւ Ռ. Պանդալեոնի բժշկ. 30  
— Ծնունդ վ. եմափառ Կայսրուհւոյն ՄԱՐԻԱՅ ԱԼԵԲՍԱՆԴՐՈՎՆԱՅ (յամին 1824.)  
— Ծնունդ եւ Անուան. վսեմ. Կայսրորդւոյն Մեծի Իշխանին Նիկոլայի Նիկոլայեվիչ, Երիցու (յամին 1831).  
— Անուանակոչութիւն վսեմափառ Կայսրորդւոյն Մեծի Իշխանին Նիկոլայի Նիկոլայեվիչ, Կրտսերոյ.

⊙ Ծնունդ լուսնի. — 2ուարճալի առաք.



Ն.

Լ.



- |    |   |   |
|----|---|---|
| 9  | 28 † Բշ. բկ. Բ օր վարդ. Յիշատակ մեռելոց.—Ռ. Պրոխորոնի եւ Նիկանովրայ. — Տճ. ճեմագիւղ կփկի. | 1 |
| 10 | 29 Գշ. գձ. Գ օր վարդ. — Ռ. Կալինիկոսի վկային. — Լտ. Լաւրենտիոսի վկային.                   | 2 |
| 11 | 30 Դշ. գկ. Դ օր վարդ. — Ռ. Շիղայի եւ Սիդուանոսի. — Լտ. Ֆիլոմենայ Կուսին.                  | 3 |
| 12 | 31 Եշ. դձ. Ե օր վարդ. — Յ. եւ Ռ. Բարեկենդան Ս. Աստուածնի.                                 | 4 |

---

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Վարդավառի օրն ինչպէս գտնելու է.

— Յունիսի 27-ին վերայ տարեգրոյն թիւն աւելցրնելով՝ վարդավառի օրը կը գտնեմք :

Վարդավառի եւ Աստուածածնի միջոց ուտիքը ինչ հաշուով պետք է գտնել.

— Եթէ տարեգիրը Ա կամ Բ եւ կամ Գ-ը լինի, միջոց ուտիքը եօրը շաբաթ է, Դ-են մինչեւ Ժ-են՝ 6 շաբաթ, Ի-են մինչեւ Զ-ան՝ 5 շաբաթ, Դ-են մինչեւ Ռ-ն՝ չորս շաբաթ, Զ-են մինչեւ Տ-ը՝ 3 շաբաթ, եւ Բ-են մինչեւ Փ-ը 2 շաբաթ:

---

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ռ Ա Ծ Ն Ե Բ.

Գիծը գնաց հարսնետուն, ասեց • Էս լաւ է քան զմեր տուն :

Անճարը կերել ա բանջարը :

Տանձն ինչ արաւ թէ կորն ինչ անի :

Վերեւ թրքեմ երեսս ա, ներքեւ թրքեմ՝ միրուքս ա :

Մի ձեռք ծափ չի տալ :



Յ Ո Ւ Լ Ի Ս.

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Խոտի հոսնձը կվերջանայ եւ հրն-  
 ձուածները կղիգոսի: Կանուխ ցանուած ցորենը, վար-  
 սակն ու գարին պետք է հնձել, հնձուածները կալին վերայ  
 ծեծելով՝ յարդէն գատել, եւ շտեմարանը լեցրնելէն յետոյ՝  
 երբեմն երբեմն խառնելով քամիի տայ որ ոջիլէ անվնաս  
 մնան: Ամսոյս մեջ կհասնի վուշը, որ ոջ միայն շուտով  
 ժողովել ջանալու է, այլ եւ ջրոյ մեջ քրջել: Կաղամբի  
 կոթին վերայ եղած տերեւները պետք է պոկել, որ գլուխ-  
 ները աճին ու գօրանան:

**ԸԵՂՈՒԱՔՈՒԾԱԿԱՆՔ.** — Յուլիսի մեջ մեղուաց պարքը  
 կակղի (առս) եւ ուրիշ ծառերու ծաղիկներէն բաւական  
 հիւք ժողովելով՝ մեղրի եւ մոմի քանակութիւնը կշատցը-  
 նեն: Յորեկուան ժամանակ փերակները պետք է բանալ  
 ու մեղրը մոմէն գատել, բայց պետք չէ փերակը առանց  
 մեղրի բողուլ, որ մեղուները չխըրտին եւ ուրիշ տեղ  
 չերբան:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Խաղողնիքին ծռուած ճիւղերը պետք  
 է շտկել ու ցիցի վերայ կապել եւ երէ տկար ճիւղեր կան՝  
 կտրել, որ ուժովները առաւել եւս պտղաբեր լինին:  
 Թրենիներուն կտրած ճիւղերը արմատէն յօղել, եւ մըր-  
 գեղինաց ծառերու արմատին շրջակայքը բուսած խոտերը  
 պոկել ու հողը բահով փորելով փշրել: Նուշի, խնձորի,  
 սալորի եւ ուրիշ ծառերը դիտելու է որ բրբուր չլինի  
 վերաները:

**ԱՆԱՍՆԱԴԱՐԾԱՆԱԿԱՆՔ.** — Ոչխարարոյժները ամսոյս  
 տաքին վերայ մասնաւոր ուշադրութիւն դարձրնելով՝  
 պիտի ստիպեն խաշնարածներուն որ առաւօտները կա-  
 նուխ արածեցրնեն ոչխարները, որպէս զի մինչեւ սաս-



տիկ տաքի ժամանակ բառական կշտացած լինին : Ամսոյս վերջերը հնձուած արտերու վերայ կարելի է արածեցրնել ոչխարները, բայց ոչ առաւօտն ու կեսօրին, այլ միայն իրիկուան ժամանակն մինչեւ մթըննալը : Այս եւս գիտնալու է որ այնուհետեւ իսկոյն պէտք չէ զիրենք ջրել, այլ անմշակ դաշտերու վերայ գիշերելէն յետոյ՝ առաւօտը կանուխ ջուր տալ : Զիերը ուր որ ծով կամ գետ կայ, օրը երկու կամ զէք առաւօտը միանգամ լողացրնելու է, որ թէ զով լինին եւ թէ քիչ շատ ազատ մնան ճանճերուն տուած նեղութենէն : Ուշադրութիւն դարձրնելու է նաեւ կովի, այծի, ոչխարի եւ գառին վերայ որ տիգ (*կէնէ*) ասուած կենդանեաց ոջիլէն որքան կարելի է մաքուր պահուին :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Ամսոյս մեջ պէտք է ձիերու եւ ուրիշ անասնոց համար ձմեռուան խոտը գնել. կովերու եւ ոչխարաց կարեն պանիր ժողովել ու աղել, եւ զոմեշի կամ կովի կարեն ձմեռուան ջորարանը պատրաստել. այլ եւ զանազան սալորաց ջորցուցածներ համբարել :

**ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՅՈՒԼԻՍԻ.**

(ի Հարաւային Ռուսիա.)

Ի Պոլտաւա, 10—31.

— Նիժնիյ Նովգորոդ (համաշխարհական տօնավաճառ) 15-էն յուլիսի մինչեւ ց25 օգոստոսի.

— Բեյց, ի Միխայլովկա, ի Զապլինկա եւ ի Սլաւեանսկ, 20-ին.



Ն.

Լ.



### Օ Գ Ո Ս Տ Ո Ս

(31 օր է, յորոց 5-ը կիրակի եւ 1-ը տօն.)

- |    |   |    |
|----|---|----|
| 13 | 1 Ուր. դկ. 2 օր վարդ.—Ռ. Սկիզբն պհց. Ս. Ա."ժածննի, եւս եւ յիշատակ սրբոց մակարայեցւոցն.  | 5  |
|    | <p>☉ Արեգակն ելանէ ժամ 5, վ. 0.<br/>— մտանէ ժամ 7, վ. 9.</p>  |    |
| 14 | 2 Շր. ած. Թաղեոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին. — Ռ. Ստեփանոսի նախավկային եւ Բարսղի հայրապ.                                   | 6  |
|    | <p>☉ Առաջին քառորդ լուսնի.—<i>Երբեմն անձրեւ, երբեմն արեւ.</i></p>   |    |
| 15 | 3 † Կիր. ալ. Բ, զկնի վարդ. Հրց. քկ Որ յերկնային. — Հարսանիք. — Ռ. Իսահակայ դաղմատացւոյն. — Լտ. Վերափոխումն Ս. Աստուածածնի.    | 7  |
| 16 | 4 Բշ. րձ. Կիպրիանոսի եպիսկոպոսին եւ 45 վկայիցն, եւ սրբոց կուսանացն Յուստիանեայ, Եփիմեայ եւ Քրիստինեայ. — Ռ. Մանկանցն եփեսոսի. | 8  |
| 17 | 5 Գշ. քկ. Աքանագինեայ եպիսկոպոսին եւ 10 աշակերտացն եւ 5 վկայիցն. — Ռ. Եւսինեայ անտիոքացւոյն.                                  | 9  |
| 18 | 6 Դշ. զձ. պահք.—Յ. եւ Ռ. Վարդավառ.—Յայտմ. Աւելեաց. — Ծնունդ Վսեմափառ. եւ Կայսերազն Դշխոյին Մարիայ Նիկոլայեվնայ (յամին 1819).  | 10 |





Ն.

Լ.

29 17 † Կիր. դկ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. Հրց. 21  
 դձ. Որ գնախամօրն. Հմբ. դկ. Այսօր գանճառելի. —  
 Ռ. Միւռոնայ, Փիլիպպոսի եւ Կիպրիանոսի վկայից. —  
 Լտ. Գլխատումն Յովնաննու Մկրտչի.

30 18 † Բշ. աձ. Բ օր վերափոխման. Յիշատակ մեռելոց. — 22  
 Ագ. Նաղար.

⊙ Վերջին քառօրդ լուսնի. — Փոխփախան.

31 19 Գշ. ալ. Գ օր վերափոխ. — Ռ. Անդրէի զօրավարին. 23

1 20 Գշ. բձ. Դ օր վերափոխ. — Ռ. Սամուելի մարզարէին. 24  
 — Լտ. ՍԵՊՏԵՄԲԵՐ.

2 21 Եշ. բկ. Ե օր վերափ. — Ռ. Թադէոսի առաքելոյն. 25

⊙ Արեգակն ելանէ ժամ 5, վ. 24.  
 — մտանէ ժամ 6, վ. 5.

3 22 Ուր. գձ. Զ օր վերափ. — Ռ. Սեւեռիանոսի վկային. 26  
 — Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերացն Դշխոյին Օլգայ  
 Կոստանդինովնայ (յամին 1851).

4 23 Շր. գկ. Է օր վերափ. — Ռ. Լուպոսի եւ Երանոսի. 27

5 24 † Կիր. դձ. Ը օր վերափ. — Ռ. Եւտիքեայ վկային. 28

6 25 Բշ. դկ. Թ օր վերափ. — Ռ. Բարթողոմէոսի առաք. 29

⊙ Ծնունդ լուսնի. — Բարեխառն.

7 26 Գշ. աձ. Յովակիմայ եւ Աննայի ծնողաց սրբոյ Աս- 1  
 տուածաձնին, եւ կանանցն իւղարերից. — Մեծահանդէս  
 ուխտ եկեղեցւոյ սրբոցն Յովակիմայ եւ Աննայի ի  
 Թեոդոսիա. — Ռ. Անդրիանոսի եւ Նատայեայ. — Տճ.  
*ձեմագիւշ ախրր. — Հր. Թշրի եւ տարեմուտ 5630*  
*ևահանջ քուակաւի կոցա.*

— Օր Թագադրութեան Վեհափառ Կայսեր Ինքնակալի  
 ամենայն Ռուսաց ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ եւ  
 Վեհափ. Կայսրուհւոյն ՄԱՐԻՅԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱՅ.

8 27 Գշ. ալ. պահք. — Ռ. Պիմենի վկային. — Լտ. Ծնունդ 2  
 Ս. Աստուածաձնի.

Ն.

Լ.



- |    |    |   |   |
|----|----|---|---|
| 9  | 28 | Եղ. քձ. Երեմիայ մարգարեին. — Ռ. Մովսեսի միւռացւոյն. — Հր. <i>Յոմ վասն սպանման Գորոյիայ որդւոյ Աքիկամայ.</i>   | 3 |
| 10 | 29 | Ուր. րկ. պահք. — Յ. եւ Ռ. Գլխատումն Յովն. Կրպտին.   | 4 |
| 11 | 30 | Շք. գձ. Առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ Շմառնի. — Ռ. Փոխադր. նշխարաց Աղեքսանդրի Նեւացւոյ.<br>— Անուանակոչութիւն Վեհափառ. Ինքնակալի ամենայն Ռուսաց ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ.<br>— Ծնունդ Վսեմափառ. եւ Կայսերացն Դշխոյին Յիզայ Նիկոյայեվնայ (յամին 1822.) | 5 |
| 12 | 31 | † Կիր. գկ. Գ, գկնի վերափոխման. Գիւտ գօտւոյ Ս. Աստուածածնին. եւս Յ. եւ Ռ. — Հարսանիք. — Լտ. Տօն անուան Ս. Աստուածածնին.  | 6 |

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Վերափոխման տօնը թնչպէս գտնելու է.  
— Նախ՝ տարեգրոյ թուոյն վերայ 4 աւելցրնելու է, յետոյ 7 թուով բաժանելու է, եւ մնացածը օգոստոսի 11-ին վերայ աւելցրնելով՝ ամսաթուոյն որ օրն որ վերջանայ, նոյն օրը Աստուածածին է: — Թրինակ. երբ տարեգրոյ 30 թուոյն վերայ աւելցրնեմք 4, կլինի 34, եւ երբ բաժանեմք 7-ով, կմնայ 6. ուրեմն 11-ին վերայ 6 աւելցրնելով՝ կլինի 17, որ տարւոյս Աստուածածնի օրն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՅՆԵՐ.

Եաղը զնայով գալով՝ բարեկամացաւ, բարեկամը  
ջգնայով չգալով՝ ետդացաւ:  
Քամու բերածը քամին կտանի:  
Փորձած սատանէն լաւ ա, քան զանփորձ հրեշտակը:  
Հաւր տանը կենայ, կուտն ուտի:



ՕԳՈՍՏՈՍ.

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Այն տեղերը՝ ուր ցորենը ամսոյս մէջ կհնձեն, պիտի ջանան որ որքան կարելի է շուտով ձեծեն եւ շտեմարան տանեն, որ անձրեւէ չվնասուի : Տաք կողմերը ձմեռուան ցանքը վերջացրնել. եւ ճակնդեղը (свекла), սիսեռը (горохъ), խախաշը (пакъ), սունկը (мушкетар) եւ վարունգի սերմն ժողովել պետք է : Նայելու է որ սեխի ու ձմերուկի ցանքին մէջ անասունք չմտնեն եւ հասունները քիչ քիչ պոկելով՝ վաճառանոց դրկելու է :

ՄԵՂՈՒԱՐՈՒԾԱԿԱՆՔ. — Ամսոյս մէջ մասնաւոր խնամք տանելու է մեղուաց վերայ, որ ուրիշ կենդանիներէ, մանաւանդ մուկերէ ջնեղուին ու ջկտորուին : Սգոստոսի սկիզբները բէւ. բաւական հիւս կգտնեն մեղուները, բայց հետզհետէ ծաղիկները քիչնալով մեղուներն եւս բռնջրտել կղաղրին : Այնուհետեւ մեղուարոյժն իւր բոլոր ուշադրութիւնը պիտի դարձրնէ ճանճերու համար ձմեռուան պատրաստութիւն տեսնելու, մանաւանդ վայրի ճանճերէն պաշտպանելու, որք ընդհանրապէս ամսոյս մէջ բազմութեամբ տկար ու որք մեղուներու վերայ կղիմեն եւ փերակին մէջ կոտորած անելէն վերջը նոցա պաշարն եւս կուտեն : Եթէ մեղուաց մերձակայ դաշտերուն մէջ սեւ ցորենի (речиха) արտ լինի, այս միջոցները ամենալաւ հնարքն է նոցա փերակները արտին մօտը փոխադրել, որով դարձեալ կարելի կլինի նոր մեղր ժողովել :

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Եթէ ամառը ցրտային ու անձրեւոտ լինի, խաղողնիքին աւելորդ տերեւները պոկելու է որ ողկոյզները ժամանակին եփեն : Դիտելու է որ ամսոյս մէջ գետնին պառկած ճիւղեր չլինին, եւ եթէ գտնուին, խկոյն վերցրնելով՝ քովի ցիցերուն վերան կապելու է որ չհոտին : Ժամանակ է խնձորը, դեղձն ու տանձը ժողովելու :

ՕԳՈՍՏՈՍ

ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ. — Կովերը, ոջխարները, ձիու քուռակներն ու խոզերը լուսը բացուելուն պէս ջրելու եւ արձակելու է որ մերձակայ դաշտերուն, անտառներուն ու լեռանց խորշերուն մեջ երբան արածեն եւ տաքէն ազատ մնան: Աշխատելու է որ ոջխարները առաւօտը կանուխ եւ երեկոյեան ժամանակները միայն արձեցրնուին: Յորեկուան տաքերուն ոջխարները քշելու է որ մեկմեկու քով ժողոտուելով մեծ գունդ չկազմեն, ուսկից ջերմ եւ ուրիշ հիւանդութիւններ կյառաջանան: Մատակ ձիերէն իւրեանց քուռակները հեռացրնելու կամ կաքէ կտրելու ամենայարմար միջոցն է օգոստոս ամիսը: Կրուող կովերուն երեկոները քիչ քիչ բեփ տալու է որ առաւօտները շատ կար տան:

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Գինիին տակառները այժմէն իսկ պէտք է լուանալ, չորցրնել ու պատրաստել, որ մինչեւ այգեկուրք հին ըմպելեաց հոտը ըստ կարելոյն մաքրուի: Զմեռուան հաւկիթները օգոստոսէն սկսելու է ժողովել եւ սագերուն փետուրները պոկել: Նոյնպէս եւ խնձորի, տանձի ու դեղձի չորցուցածը համբարել:

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՕԳՈՍՏՈՍԻ.

(ի Հարաւային Ռուսիա.)

Ի Վոզնեսենսկ, 1-ին.


— Նովոգորգեակ, 1—9.

— Նովոմոսկովսկ, 1—9.

— Խարկով, 1—27.

— Նիկոպոլ, 15-ին.

— Քայդան, 26-ին:



Ն.


Լ.



## ՍԵՊՏԵՄԲԵՐ

(30 օր է, յորոց 4-ը կիրակի եւ 2-ը տօն.)

- |    |  |    |
|----|--|----|
| 13 | <p>1 Բշ. դձ. Ստեփանոսի ունեցույն, եւ սրբոց վկայիցն Գոնարինեայ, Ծամինդոսի, Տիւքիկոսի եւ Ռատիկոսի. — Յ. եւ Ռ. Սիմեոնի սիւնակեցին, որոց եւ եկեղեցական տարեմուտ.</p> <p>☉ Առաջին քատորդ լուսնի. — Բարեխառն.</p> <p>☉ Արեգակն ելանէ ժամ 5, վ. 57.<br/>— մտանէ ժամ 6, վ. 14.</p> | 7  |
| 14 | <p>2 Գշ. դկ. Ս. մարգարեիցն Եգեկիելի, Եզրի եւ Ջաքարիայ հօրն Յովհաննու Մկրտչի. — Ռ. Մամանտայ վկային. — Լտ. Խաչվերաց.</p>   | 8  |
| 15 | <p>3 Գշ. աձ. պահք. — Ռ. Անթիմոսի եպիսկոպոսին.</p>  | 9  |
| 16 | <p>4 Եշ. ակ. Յովհաննու Կարապետին եւ Յորայ արդարոյն. — Ռ. Բարեչայ եպիսկոպոսին եւ Մովսեսի մարգարեին. — Հր. <i>Sole paxioris</i>, որ է <i>Չորսայ պայրամը. եւ է ևոցա ծով մեծ.</i></p>  | 10 |
| 17 | <p>5 Ուր. րձ. պահք. — Ռ. Ջաքարիայ եւ Եղիսաբեթի.</p>  | 11 |
| 18 | <p>6 Շր. րկ. Նիկիոյ սուրբ ժողովոյն 318 հայրապետացն. — Յ. եւ Ռ. Միքայելի հրեշտակապետին.</p>   | 12 |
| 19 | <p>7 † Կիր. գձ. Գ, գկնի վերափոխման. Հրց գկ. Անճառելի. Հմբ. գձ. Իսզարեր եւ Այսօր յարութիւն. — Բարեկենդան սուրբ Խաչի պնց. — Ռ. Սողոմոնտայ վկային.</p>  | 13 |



Ն.		Լ.
20	8 † Բշ. զկ. Ա օր պահոց Խաչի, եւ տօն Ծննդեան սուրբ Աստուածածնի ի յԱննայե, եւս Յ. եւ Ռ.	14
	— Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Գշխոյին Յիզայ Ֆեոդորովնայ (յամին 1839.)	
21	9 Գշ. դձ. Բ օր պահոց Խաչի. — Ռ. Յովակիմայ եւ Աննայի. — Լտ. Մատրեոսի աւետարանչին. — Հր. Սուքքօր, տօն տաղաւարահարաց, որ է Գամըշ պայրամը.	15
	— Ծնունդ Վսեմափառ Կայսրեղբօր Մեծի իշխանին Կոստանդնի Նիկոլայեվիչ (յամին 1827.)	
	⊙ Լրումն լուսնի. — Փոփոխական.	
22	10 Գշ. զկ. Գ օր պահոց Խաչի. — Յայսմ. Հոռի. — Ռ. Մեհողորայ, Մետրոդորայ եւ Նիմփողորեայ.	16
23	11 Եշ. աձ. Գ օր պհց. Խաչի. — Ռ. Թեոդորայ վկայութեայն. — Աշնանամուտ եւ հասարակած, որով լինի տիւ եւ գիշեր հաւասար.	17
	⊙ Արեգակն ելանէ ժամ 5, վ. 49. — մտանէ ժամ 5, վ. 55.	
24	12 Ուր. ալ. Ե օր պհց. Խաչի. — Ռ. Աւտոնոմոսի վկային.	18
25	13 Շր. բձ. Տօն Եկեղեցւոյ ի նաւակատիս սրբոյ Խաչին. — Ռ. Նաւակատիք տաճարի Յարութեան Տեառն.	19
26	14 † Կիր. բկ. ԽԱԶՎԵՐՍՅ. եւս եւ Յ. եւ Ռ.	20
27	15 † Բշ. գձ. Տօն Խաչի. Յիշատակ մեռելոց. — Տոմ. Հոռի. — Ռ. Նիկեոսայ վկային.	21
28	16 Գշ. զկ. Տօն Եկեղեցւոյ. — Ռ. Եւփիմեայ կուսին.	22
	⊙ Վերջին քառօրդ լուսնի. — . Սառն հողմունք.	
29	17 Գշ. դձ. պահք. Տօն Եկեղեցւոյ. — Ռ. Սոփիայ եւ երից դստերացն՝ Պիատիսի, Ելպիսի եւ Ազապի (Հաւատոյ, Յուսոյ եւ Սիրոյ). — Լտ. Միքայելի հրեշտակապետին. — Անուանակոչութիւն Վսեմափ. եւ Կայսերազն Գշխոյին Վերայ Կոստանդինովնայ.	23



Ն.

Լ.

30 18 Եջ. դկ. Տօն Եկեղեցոյ. — Ռ. Երմինեայ եպիսկոպոսին. 24  
— Լտ. Ս. Հերոնիմոսի եւ տօն Ս. Լուսաւորչին մերոյ  
ի սահմանս Հռովմայ եւ Նեապոլսի.

1 19 Ուր. աձ. պահք. Տօն Խաչի. — Ռ. Տրոփիմոսի վկային. 25  
— Լտ. ՀՈԿՏԵՄԲԵՐ.

2 20 Շր. ալ. Տօն Խաչի. — Յ. եւ Ռ. Եւստաքոսի վկային. — 26  
Լտ. Պահապան հրեշտակաց.

3 21 † Կիր. բձ. Բ, գկնի Խաչի. Հրց. դձ. Որ Եկիր կամաւ. 27  
հօր. — Բարեկենդան Վարազայ Խաչին. — Ռ. Կողրա-  
տիոսի վկային. — Լտ. Տօն Վարդարանին.

— Ծնունդ Վսեմափառ Կայսրորդոյն Մեծի Իշխանին  
Պօղոսի Ալեքսանդրովիչ (յամին 1860.).

☉ Արեգակն ելանէ ժամ 6, վ. 1.  
— մտանէ ժամ 5, վ. 6.

4 22 Բշ. բկ. պահք. Մամասայ եւ Փիլիկտիմոնի եւ Սիմեոնի 28  
սիւնակեցին. — Ռ. Փոկասու եպիսկոպոսին սինոպե-  
ցոց եւ Յովնանու մարգարէին. — Լտ. Ֆրանկիսկոսի  
ասիզացոյն.

5 23 Գշ. գձ. պահք. Ս. կուսանացն Փերրոնեայ, Մարիա- 29  
նեայ եւ Շուշանայ դստեր մեծին Վարդանայ. — Յ. եւ Ռ.  
Յղութիւն Յովհաննու Կարապետին.

☉ Ծնունդ լուսնի. — Յուլիտ եւ պարզ.

6 24 Գշ. գկ. պահք. — Յ. եւ Ռ. Գիւտ պատկերի Ս. Աս- 1  
տուածածնին. — Տճ. Ռեճեայ.

7 25 Եջ. դձ. Ս. հայրապետացն Բարադամու, Անքիմոսի եւ 2  
Երանոսի. — Ռ. Եւփրոսինեայ կս. — Հր. Խեսուշան.

8 26 Ուր. դկ. պահք. — Յ. եւ Ռ. Յովհաննու աւետարանչին. 3

9 27 Շր. աձ. Ս. Գեորգայ զօրավարին, եւ Աղոկտոսի եւ 4  
Ռոմանոսի երգեցողին. — Ռ. Կալիստրատոսի.

10 28 † Կիր. ալ. Գ, գկնի Խաչին. Վարազայ սուրբ Խաչ. — 5  
Ա կիր. 7 շաբ. — Հարսանիք. — Ռ. Խարիտոնի խոստ.

Ն.

Լ.



11 29 Բշ. բձ. Ս. Դաւթի դմնեցւոյն, եւ սրբոց վկայիցն Ղամբեկոսի եւ Ղամբեկուհւոյն. — Ռ. Կիրակոսի եւ Թեոփանոսի ողորմածին. 6

12 30 Գշ. րկ. Ս. Եւստաքեոսի եւ կնոջ նորա Թեոպիստեայ. 7  
— Յ. եւ Ռ. Ս. Գրիգորի Հայաստանեայցս Լուսաւորչին.

Օ Առաջին քառորդ լուսնի. — *Երբեմն պարզ, երբեմն ամպ.*

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Ս. Խաչի տօնը ինչ հաշուով գտնելու է.

— Տարեգրոյ բուռն վերայ 2 աւելցրնելէն յետոյ 7-ով բաժանելու է, եւ մնացածը սեպտեմբերի 10-ին վերայ աւելցրնելով՝ առաջ երբալու է, եւ որ օր մնացեալ թիւը վերջանայ, նոյն սեպտեմբերի օրը Ս. Խաչ է :

Ս. Գեորգայ բարեկենդանը ինչպէս կը գտնուի.

— Տարեգրոյ բուռն վերայ երկու աւելցրնելէն յետոյ 7-ով բաժանելու է եւ քանորդը սեպտեմբերի 17-ին վերայ բերելով՝ Ս. Գեորգայ բարեկենդանի օրը կգտնուի :

Ս. Գեորգայ եւ Յիսնակաց բարեկենդանի միջոցն ինչպէս իմանալու է.

— Տարեգրոյ թիւը 7-ով բաժանելու է, երկ աւելցածը 6 կամ 7 լինի, միջոց ուտիքը ուշ շարաք է. իսկ երկ ուրիշ թիւ, — կօրը շարաք :

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ռ Ա Ն Ն Ե Ր.

Տեր տեր արա՛ զեղը գձի (ձգէ), թէ որ չապրի՛ զետը գձի :  
Շունը կհաչէ, քարվանք կը քոչէ :

Մի ծաղկով զարուսք չի գալ :

Մեղքը լալով՝ պարտքը տալով :

Աստուծոյ պահած գառը գելը չի ուտիլ :



**ՍԵՊՏԵՄԲԵՐ.**

**ԿԵՆՏԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ**

**ՆԵՎԵՐՍՏԱՎԱՆՔ.** — Ամսոյս մեջ պետք է ժողովել ճակընդեղը, գեանախնձորն ու կաղամբը. երկրորդ անգամ հնձած խտոր լաւ չորցրնելէն յետոյ դիզել. ձմեռուան ցորենի, գարւոյ, վարսակի եւ հաճարի ցանքն անել. եւ հասուն սելխն ու ձմերուկը ստեպ ստեպ վաճառանոց յուղարկել:

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱՎԱՆՔ.** — Փերակներուն վերայ ուշադրութիւն դարձրնելու է որ ոչ առանցք ունենան եւ ոչ այնպիսի տեղ դրուած լինին որ սաստիկ ցուրտերու ժամանակ տեղափոխութեան հարկաւորութիւն ունենան: Մայր ճանձին ու ամառուան ծնած մեղուներուն ուժին ու առողջութեանը համեմատ՝ ձմեռուան մեղրի պատրաստութիւնը տեսնելու է, եւ վայրենի մեղուաց յորձակմունքէն ու նոցա մեղրագողութենէն զգոյշ կենալու է:

**ԱՅԳԵԳՈՐԾԱՎԱՆՔ.** — Այգեկուրն ընդհանրապէս ամսոյս մեջ կանեն. ուստի պետք է զգուշանալ որ անձրեւը չսկսած խաղողները քաղես, տեսակները զանազանես եւ գինեհանութեան համար ժողովածները՝ նոյն օրուան մեջ կոխել տաս: Ժամանակ է ձմեռուան տանձը, խնձորը, սերկեւիլն ու զղեարը (գլեռ, մուշմուշա) ժողովելու, եւս եւ ընկոյզ բափելու:

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱՎԱՆՔ.** — Սեպտեմբերի մեջ պետք է զատել ձմեռը պահելու անասունները եւ մնացածը վաճառել: Պահուելիներուն համար հաշիւ ընելու եւ ձմեռուան ուտելիքը պատրաստելու է: Ընդհանրապէս հաշիւ կանեն որ մեկ կովի համար ամիսը 6 պուղ խտտ, 5 պուղ



մանրած յարդ եւ 2<sup>1</sup>/<sub>2</sub> պուղ թեփ կհարկաւորի. իսկ մեկ ոջխարի համար օրը երեք ֆունք կամ մեկ հօխա խոտ : Ոջխարները հորթերն ու այծերը հնձուած արտերու մեջ արածեցընելու ե ցերեկները եւ երեկոները աղ տալու ե :

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Զմեռուան համար պետք եղած խոտը, վարսակը, գարին, յարդն ու կորեկը պատրաստելու ե : Վառելիքն ու այրելիքը հոգալու ե : Վարունգ, կաղամբ, սմբուկ (помидоръ, *ֆրեկկ փարլընա(ը)*) եւ գոյեարն աղելու . այլ եւ գետնախնձոր, սոխ ու սխտոր համբարելու ե : Ամսոյս մեջ պետք ե ձմերուկի կեղեւի քաղցրաւենին եփել . եւս եւ տարեկան եղը պատրաստել :

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ.

(ի Հարաւային Ռուսիա.)

լելիսաւետգրադ, Բշ. 1-ին.

լԱնանեւ, ի Նովոմիրգորոդ, ի Բախմուտ, ի Ռոստով եւ ի Պետրիկովկա, Բշ. 8-ին.

լՅոդեսսա, 14—30

ի Խարկով, 23—30.

ի Բերիսլաւ, 26-ին.

լեկատերինոսլաւ, 26-ին.

ի Պաւլոգրադ, 29-ին.






## ՀՈԿՏԵՄԲԵՐ

(31 օր է, յորոց 4-ը կերակի.)

- |    |   |    |
|----|---|----|
| 13 | 1 Դշ. զձ. պահք. — Ռ. Պաշտպանութիւն Ս. Աստուածածնի. — Լտ. Եղուարդայ բազաւորին.   | 8  |
|    | <p>⊙ Արեգակն ելանէ ժամ 6, վ. 14.<br/>         — մտանէ ժամ 5, վ. 18.</p>   |    |
| 14 | 2 Եշ. զկ. Ս. Իշխանացն Սահակայ եւ Համազասպայ. — Ռ. Կիպրիանոսի վկային եւ Յուստիանեայ կուսին.  | 9  |
| 15 | 3 Ուր. զձ. պահք. — Ռ. Դիոնեսիոսի արիսպագացւոյն եւ Ելեաթիւրոսի վկային. — Լտ. Թերեզայ կուսին.   | 10 |
| 16 | 4 Շք. զկ. Եօրանասունեւերկու աշակերտացն Քրիստոսի. — Ռ. Յուսէպոսի վկային.<br>— Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Մեծի Իշխանին Միքայելի Միխայլովիչ (յամին 1861.)          | 11 |
| 17 | 5 † Կիր. աձ. Դ, զկնի Խաչին — Բ կիր. 7 շաբաթ. — Հարսանիք. — Ռ. Պետրոսի եւ Ալեքսիոսի.<br>— Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Դշխոյին Մարիայ Ալեքսանդրովնայ (յամին 1853.) | 12 |
| 18 | 6 Բշ. ալ. Ս. Փոկասու հայրապետին, եւ Երանոսի հետեւողի առաքելոցն. — Ռ. Թովմայի առաքելոյն. — Լտ. Ղուկասու աւետարանչին.   | 13 |

Ն.

Լ.



- 19 7 Գշ. բձ. Ս. կուսանացն Թեկղի եւ Վառվառեայ եւ Պեղազեայ. — Ռ. Սարգսի եւ Բազոսի. 14
- 20 8 Գշ. բկ. պահք. — Ռ. Պեղազեայ կուսին եւ Տայասայ. 15
- ⊙ Լրումն լուսնի. — Անճրեւային.
- 21 9 Եշ. զձ. Ս. Պանդայեոնի բժշկին, Երմողեայ քահանային եւ Եւպրաքսեայ կուսին. — Ռ. Յակոբու Այփեայ. — Լտ. Ուրսուլայ կուսին. 16
- 22 10 Ուր. զկ. պահք. — Յայսմ. Սահմի. — Ռ. Ղամբեոսի եւ Ղամբեոհայն. 17
- 23 11 Շբ. դձ. Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսեսի քերթողին, Դաւթի անյաղք փիլիսոփային, Գրիգորի նարեկացւոյն եւ Ներսեսի կլայեցւոյն. — Ռ. Փիլիպպոսի առաքելոյն. — Լտ. Ռաֆայելի հրեշտակապետին. 18
- ⊙ Արեգակն ելանէ ժամ 6, վ. 27.  
— մտանէ ժամ 5, վ. 1.
- 24 12 † Կիր. դկ. Ե, զկնի Խաչին. — Գ Կիր. 7 շար. — Հարսանիք. — Ռ. Պրորոսի, Տարաքոսի եւ Անդրոնիկեայ. 19
- 25 13 Բշ. աձ. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Աղուանից կարողիկոսին, եւ սրբոց հարցն Թարլոյ, Վարոսի, եւ Թումասու, եւ Անտոնի, եւ Կրոնիղեայ, եւ 7 խոտաճարացն որք յիննակնեան վանսն կատարեցան. — Ռ. Կարպոսի եպիսկոպոսին. 20
- Ծնունդ Վսեմափառ. եւ Կայսերազն Մեծի Իշխանին Միքայելի Նիկոյայեվիչ (յամին 1832.)
- 26 14 Գշ. ակ. Սրբոց առաքելոցն՝ Անանիայ, Մատարիայ, Բառնարայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Շիղայ եւ Սիդուանոսի. — Ռ. Նազարիոսի աշակերտին Պօղոսի. 21
- 27 15 Գշ բձ. պահք. — Տոմ. Սահմի. — Ռ. Եւփիմեոսի եւ Ղուկիանոսի. 22
- 28 16 Եշ. բկ. Ս. Գիոնեսիոսի արիսպագացւոյն, եւ սրբոց առաքելոցն Տիմոթեոսի եւ Տիտոսի. — Ռ. Ղուկիանոսի հարիւրապետին. — Լտ. Առաքելոցն՝ Սիմոնի եւ Յուդայի. 23

⊙ Վերջին քառօրդ լուսնի. — Աշնանային հողմուճք.



Ն.

Լ.

29 17 Ուր. գձ. պահք. — Ագ. Գամայ. — Ռ. Ովսեայ մարգարէին եւ Անդրէի կրեաացւոյն. 24

30 18 Շր. գկ. Ս. աւետարանչացն՝ Մատթեոսի, Մարկոսի, 25  
Ղուկասու եւ Յովհաննոս. — Յ. եւ Ռ. Ղուկասու աւետարանչին.

31 19 † Կիր. դձ. 2, գկնի Խաչին. Գ կիր. 7 շար. — Հարսա- 26  
նիք. — Ռ. Յովելեայ մարգարէին.

1 20 Բշ. դկ. Ս. Ղունկիանոսի հարիւրապետին, եւ Յովսե- 27  
փայ աստուածահօրն, եւ Յովսեփայ արեմարացւոյն,  
եւ բարեկամին Քրիստոսի Ղազարու եւ քերցն նորա  
Մարիամու եւ Մարթայի. — Ռ. Մատրոնայ կուսին. —  
Լտ. ՆՈՅԵՄԲԵՐ, եւ տօն ամենայն սրբոց. — Տճ. Միքան  
կիճեաի.

2 21 Գշ. աձ. Թեոդիտոնի գաղատացւոյն եւ Զենոնի գինաւո- 28  
րին, եւ Մակարայ, եւ Եղոկսեայ եւ Ռամելայ. — Ռ.  
Իլարիոնի գազացւոյն. — Լտ. Յիշտ. համօրէն ննջեցելոց.

⊙ Արեգակն ելանէ ժամ 6, վ. 41.

— մտանէ ժամ 4, վ. 46.

3 22 Գշ. ալ. պահք. — Ռ. Արեւիկոսի եպիսկոպոսին. 29

4 23 Եշ. բձ. Ս. Խարիբեանց, եւ վկայիցն Արտեմեայ եւ 30  
Քրիստափորի, եւ երկուց կանանցն Կալինիկեայ եւ  
Սկիւլինեայ. — Ռ. Յակոբայ առաքելոյն.

⊙ Ծնունդ լուսնի. — Սմայ եւ խոնաւ.

5 24 Ուր. բկ. պահք. — Ռ. Արեւայ եւ 4299 վկայիցն որք ընդ 1  
նմա կատարեցան. — Տճ. Շապաւ. — Հր. Քասդեւ.

6 25 Շր. գձ. Ս. երկուտասան վարդապետացն՝ Յո. երեոսի, 2  
Գիոնեսիոսի, Սեղբեսարոսի, Աբանասի, Կիւրղի երուսաղեմացւոյն,  
Եփրեմի Խուրին ասորւոյ, Բարսղի կեսարացւոյն,  
Գրիգորի նիւսացւոյն, Գրիգորի աստուածաբանին,  
Եպիփանոս կիպրացւոյն, Յովհաննոս ոսկերեւանին  
եւ Կիւրղի աղեքսանդրացւոյն. — Ռ. Մարկիանոսի եւ Մարտիրոնի.

7 26 † Կիր. գկ. Ե, գկնի Խաչին. Գիւտ Խաչ. Ե կիր. 7 շար. 3  
— Հարսանիք. — Յ. եւ Ռ. Գեմետրեայ վկային.

Ն.

Լ.



- |   |   |   |
|---|---|---|
| 8   | 27 Բշ. դձ. Անաստասայ քահանային, եւ Վարոսի, եւ Թեոդորիտեայ եւ որդւոց նորա եւ որոց ընդ նմա կատարեցան. — Ռ. Նեստորիոսի վկային.                   | 4 |
| 9   | 28 Գշ. դկ. Ս. Հիպերիքեանց, որք ի Սամուսատ կատարեցան. — Ռ. Տերենտեայ, Նեոնիլայ եւ Պարասքեայ.   | 5 |
| 10  | 29 Գշ. աձ. պահք. — Ռ. Անաստասեայ հռովմայեցւոյն.   | 6 |
| 11  | 30 Եշ. ալ. Սեւեոփանոսի սերաստացւոյն, եւ Բարեւայ ծերոյն եւ 84 աշակերտաց նորին. — Ռ. Զենորիոսի եպիսկոպոսին եւ քեռ. նորա. — Լտ. Մարտինոսի եպիսկ. | 7 |
| <p>© Առաջին քառորդ լուսնի. — Փոխիսական.</p> |   |   |
| 12  | 31 Ուր. քձ. պահք. — Ռ. Ստաքեայ աշակ. Պօղոսի.  | 8 |

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Գիտ խաչի օրը ինչ հաշուով գտնելու է.

— Տարեգրոյն վերայ 2 աւելցրնելէն յետոյ 7-ով բաժանելու է, եւ քանորդը հոկտեմբերի 22-ին վերայ անցնելով՝ յառաջ երբայու է. հոկտեմբերի նր օրն որ վերջանայ, նոյն օրը Գիտ խաչ է:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ռ Ա Ծ Ն Ե Ր.

Երագումը սովածը հաց կտեսնի, ծարաւը ջուր :  
 Գեռ. չը ծնած երեխին՝ շոր մի կարիլ :  
 Գողը մինի մեղքը տարաւ, կորցրնողը՝ հարիւրի :  
 Արինն արնով չեն լուանայ :  
 Շներն իրար հետ կռուում են, գելի դեմը միանում են :  
 Մալը զքնա՝ տերը հետը, որդին զքնա՝ հերը հետը :



**ՀՈԿՏԵՄԲԵՐ.**


**ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ**

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Թեև ձմեռուան վարուցանքը ամսոյս մեջ կվերջանայ, բայց քանի որ գետինը պաղած չէ՝ երկրագործութիւնը կարելի է շարունակել: Յորեն ծեծելը, յարդէն գատելն ու համբարելը եւս հոկտեմբերի մեջ պէտք է վերջացրնել: Հաստ կեղեւ ունեցող ձմերուկներն ու կաղամբը, եւս եւ սմբուկը, մեկունը, սոխն ու սխտորը ժողովել ու վաճառանոց յուղարկելու է:

**ՄԵՂՈՒԱՔՈՒԾԱԿԱՆՔ.** — Ճեղք ունեցող փերակները մոմով պատելու եւ ամրցրնելու է, եւ մեռած ճանճերը փերակներէն դուրս հանելէն յետոյ ձմեռուան պաշարը, այսինքն ամեն մեկ փերակի մեջ 20-էն մինչեւ 30 ֆունք մեղր դնելու է, որ մինչեւ ապրիլի 15-ը կրաւէ, եթէ փերակին մեջի ճանճերուն թիւը 100-էն աւելի չէ: Ամսոյս մեջ հազիւ երբեք փերակէն դուրս կրթուչեն մեղուները, եւ աւելի օգտակար կլինէր թէ որ բոլորովին չեյնէին. վասն զի օրերը կարճ լինելով՝ ոչ հիւք ժողովել կկարողանան եւ ոչ փերակները կորսրնցրնելու վտանգէն ազատիլ:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Եթէ ամառը անձրեւային լինի եւ խաղողը ժամանակին չեփելուան համար այգեկուքը հոկտեմբերին մնայ, պէտք է գգուշանայ որ խաղողները պարզ օդոյ եւ ցօղերը չորացած ժամանակը քաղուին:

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Կենդանեաց ձմեռուան պաշարը թէ որ պատրաստ չէ, ամսոյս մեջ անպատճառ պէտք է պատրաստել, եւ ծառերէն բափած տերեւները ժողովել ու չոր խոտերուն հետ պահել: Կրօնող կովերուն երեկոները տաք ջրով քիչ մի աղ խառնած թեփ տալու է: Ոչխարները գիշերները պէտք չէ թողուլ դաշտերու վերայ, այլ գոմերու մեջ պահելու է:



ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.— Հաւերուն կուտը պէտք է շատցընել որ հաւկիր ամեն : Սոխն ու գետնախնձորը գետնի խոնաւութենէն ու սաստիկ ցուրտերէն անվնաս պահելու համար դրուած տեղերուն վարն ու վերը չոր խոտ փռելու է : Ամսոյս մեջ պէտք է բնակարաններուն պատուհանները գոցել եւ ճեղքերը շաղախով (замаска) ծեփել կամ թուղթ փակցընել, այլ եւ վառարաններուն ծխնելոյզները (труба) մաքրել, որ հրդեհ չպատահի :

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ.

(ի Հարաւային Ռուսիա.)

ի Տիրասպոլ, ի Վոզնեսենսկ, յԱլեքսանդրովսկ,  
ի Կախովկա, ի Սեդնեակա, յԵասինովատըյ, ի  
Կազալնիկա եւ ի Պոկրովսկ, 1-ին.

— Խարկով, 1—15.

— Նոդալսկ եւ ի Լիխովկա 14-ին.

յԱնդրեւկա, 22-ին.

ի Նովոմիրզորոդ, ի Բելց, ի Հօրին եւ ի Նիկոպոլ,  
26-ին.

— Քիշնեւ հոկտեմբերի 26-էն մինչեւ նոյեմբերի 26:





## ՆՈՅՆԵՄԲԵՐ

(30 օր է, յորոց 5-ը կիրակի եւ 1-ը տօն.)

- |    |   |    |
|----|---|----|
| 13 | 1 Շր. րկ. Յովհաննու ոսկերերանին.—Յ. եւ Ռ. Կոզմայի եւ Դամիանոսի մարտիրոսաց.  | 9  |
|    | ☉ Արեգակն ելանէ ժամ 6, վ. 56.<br>— մտանէ ժամ 4, վ. 32.  |    |
| 14 | 2 † Կիր. զձ. Ը, զկնի Խաչին. Զ կիր. 7 շաբ.—Հարսանիք.— Ռ. Ակինդինոսի եւ Պիգասեայ.   | 10 |
| 15 | 3 Բշ. զկ. Ստեփանոսի Հռովմայ հայրապետին, եւ քահանայիցն եւ սարկաւազացն եւ ժողովրդոցն. — Ռ. Ակիփսիմեայ եպիսկոպոսին եւ Այիքալայ սարկաւազին.             | 11 |
| 16 | 4 Գշ. զձ. Ակիփսիմեայ եպիսկոպոսին, եւ Յովսեփայ քահանային, Այիքալայ սարկաւազին եւ Պղատոնի վրկային. — Ռ. Յաննիկիոսի մեծին.                             | 12 |
| 17 | 5 Դշ. զկ. պահք.—Ռ. Գաղակտիոնի եւ Եպիստիմեայ վկ.   | 13 |
| 18 | 6 Եշ. աձ. Ս. հայրապետացն Սետրոփանոսի, եւ Աղեքսանդրոսի, եւ Պօղոսի խոստովանողին, եւ սրբոց նօտարացն Մարկիանոսի եւ Մարտիրոնի. — Ռ. Պօղոսի խոստովանողին. | 14 |
|    | — Ծնունդ Վսեմափառ. եւ Կայսերազն Մեծի Իշխանին Նիկոլայի Նիկոլայեվիչ Կրտսերոյ (յամին 1856.)  |    |



Ն.		Լ.
	<p>7 Ռր. ակ. պահք. — Ռ. Երեսունեւերից վկայիցն Մելիտինոյ. — Տճ. Պերսք կէսկսի.</p> <p>☉ Լրումն լուսնի. — Տեղ տեղ անձրեւ, տեղ տեղ արեւ.</p>	
19	<p>8 Շր. բձ. Ս. ճրեշտակապետացն Գաբրիելի եւ Միքայելի եւ ամենայն երկնային զօրաց. — Յ. եւ Ռ. Միքայելի ճրեշտակապետին եւ ամենայն երկնային զօրաց.</p> <p>— Անուանակոչութիւն Վսեմափառ. եւ Կայսերացն Մեծի Իշխանին Միքայելի Նիկոլայեվիչ.</p>	15
20	<p>9 † Կիր. բկ Թ, զկնի Խաչին. է կիր. 7 շաբ. — Հարսանիք. — Ռ. Ոնեսեփորայ եւ Պորփիրայ վկայիցն. — Լտ. Ընծայումն Ս. Աստուածածնի. — Յայսմ. Տրե.</p>	16
21	<p>10 Բշ. զձ. Ս. Մելիտոսի անտիոքայ եպիսկոպոսին եւ Մինասայ եգիպտացոյն, եւ միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային եւ Շինու սարկաւագին. — Ռ. Էրաստայ, Ողիմպեայ, Ռոդիոնի, Սիսիպատրոսի եւ այլոց վկայից. — Լտ. Չիչիլիայ կուսին.</p>	17
22	<p>11 Գշ. զկ. Ս. Գեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային. — Ռ. Մինասայ եւ Ստեփանիղեայ.</p> <p>☉ Արեգակն ելանէ ժամ 7, վ. 9. — մտանէ ժամ 4, վ. 23.</p>	18
23	<p>12 Գշ. զձ. պահք. — Յ. եւ Ռ. Յովհաննու ողորմածին եւ Նեղոսի եգիպտացոյն.</p>	19
24	<p>13 Եշ. զկ. Ս. Գուրիասայ, Սամոնասայ եւ Արիբայ սարկաւագին, Ռոմանոսի միայնակեցին, եւ Մանկանն խոստովանողի, եւ Հիւսիքոսի զինաւորին. — Ռ. Յովհաննու Ոսկերերանին. — Լտ Կատարինեայ կուսին.</p>	20
25	<p>14 Ռր. աձ. պահք. — Յ. եւ Ռ. Փիլիպպոսի առաքելոյն, եւ բարեկենդան 40-օրեայ պահոց Ծննդեան Քրիստոսի. — Տոմ. Տրե.</p>	21
26	<p>15 Շր. ակ. Ս. առաքելոցն՝ Անդրէի եւ Փիլիպպոսի. — Ռ. Ակիզքն քառասնօրեայ պահոց Ծննդեան. եւ յիշատակ Գուրիասայ, Սամոնասայ եւ Արիբայ խոստովանողացն.</p> <p>☉ Վերջին քառօրդ լուսնի. — Անհաստատ օդք.</p>	22
27		23



Ն.

Լ.

- 28 16 † Կիր. քձ. Ժ, գկնի Խաչի. Բարեկենդան Յիսնակաց պահոց. — Յ. եւ Ռ. Մատրեոսի աւետարանչին. — Լտ. Առաջին կիր. գալստեան, որ է սկիզբն կամաւոր պահոց Ծննդեան Քրիստոսի. — Ագ. Համիրայ. 24
- 29 17 Բշ. քկ. Ա. օր պահոց յիսնակաց. — Ռ. Գրիգորի սքանչելագործին. — Տճ. Խանուկայ, որ է Գաւաթի պաշրամը. 25
- 30 18 Գշ. գձ. Բ օր պահոց յիսնակաց. — Ռ. Պղատոնի եւ Ռոմանոսի. — Լտ. Անդրէի առաքելոյն. 26
- 1 19 Գշ. գկ. Գ օր պահոց յիսնակաց — Ռ. Արդիայ մարգարէին. — Լտ. ԴԵԿՏԵՄԲԵՐ եւ Մաքրուհւոյ կուսին. 27
- 2 20 Եշ. դձ. Դ օր պահոց յիսնակաց. — Ռ. Գրիգորի եւ Եւստարեոսի. 28
- 3 21 † Ռւր. դկ. Ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն. եւս եւ Յ. եւ Ռ. 29

☉ Ծնունդ լուսնի. — Տրտաշունչ Հողմունք.

☉ Արեգակն ելանէ ժամ 7, վ. 22.  
— մտանէ ժամ 4, վ. 18.

- 4 22 Շր. աձ. Ս. Գրիգորի սքանչելագործին, եւ Նիկողայոսի հայրապետին եւ Միւռոնայ եպիսկոպոսին. — Ռ. Փիլիմոնի. — Տճ. Ռամազան. — Հր. Թեքեք. 1
- 5 23 † Կիր. ալ. Ա. կիր. յիսնակաց. Հրց. աձ. Օրհնեալ ես ես Տէր Աստուած. Հմբ. ալ. Յարուցեալ եւ Սքանչելի հրեշտակն. — Ռ. Գրիգորի եպիսկ. ակրագանտիոյ. 2
- 6 24 Բշ. քձ. Ս. կուսանացն Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ. — Ռ. Կատարինեայ եւ Մերկեօփոսի. — Լտ. Նիկողայոսի հայրապետին պաշտպանին նաւավարաց. 3  
— Անուանակոչութիւն Վսեմափառ. եւ Կայսերազն Դըշխոյին Կատարինէի Միխայիլովնայ.
- 7 25 Գշ. քկ Ըռանկիանոսի քահանային, եւ Տարագոսի, Պրորոսի, Անդրոնիկոսի եւ Ռնեսիմեայ եւ այլոց աշակերտացն Պօղոսի. — Ռ. Կղեմայ պապին եւ Պետրոսի եպիսկոպոսին Աղեքսանդրիոյ. — Լտ. Ս. Ամբրոսիոսի. 4
- 8 26 Գշ. գձ. պահք. — Ռ. Յակովբայ վկային. — Լտ. Անարատ յղութիւն սուրբ Աստուածածնին յԱննայէ. 5

Ն.

Լ.



- 9 27 Եջ. զկ. Կղեմայ հայրապետին եւ Բագարատայ Տոռմենայ եպիսկոպոսին. — Ռ. Յակովբայ պարսկին. 6
  - 10 28 Ռ.ր. դձ. պանք.—Ռ. Ստեփանոսի վկ. եւ Երինարքեայ. 7
  - 11 29 Շր. զկ. Ս. առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադեոսի եւ Բարթողոմէոսի. — Ռ. Պարամոնայ եւ Փիլոմենայ. 8
- ☉ Առաջին քառորդ լուսնի. — Բարեխառն.
- 12 30 † Կիր. աձ. Բ Յիսնակաց. Հրց. ալ. Որ վասն մերոյ փրկութեան. Հմբ. աձ. Որ անճառ եութեամբ. — Յ. եւ Ռ. Անդրէի առաքելոյն. 9

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Յիսնակաց բաղեկենդանն ինչպէս գտնելու է.  
 — Տարեգրոյն թիւը 7-ով բաժանելու է, եւ մնացորդը նոյեմբերի 14-ին վերայ ածելով՝ ամսոյն մեկէն սկսեալ յառաջ երթալու է, որ օր վերաջանայ, նոյն օրը Յիսնակաց բարեկենդան է: — Օրինակ երե վ տարեգիրը, այսինքն 30-ը 7-ով բաժանեմք, կմնայ 2. այս երկուսը երբ նոյեմբերի 14-ին վերայ աւելցրնեմք, կլինի 16. ուրեմն տարույս Յիսնակաց բարեկենդանի օրը 16-ն է:

Ս. Յակոբայ բարեկենդանը ինչ հաշուով պետք է գտնել.  
 — Տարեգիրը 7-ով բաժանելէն յետոյ՝ մնացորդը դեկտեմբերի 5-ին վերայ աւելցրնելու է. եւ որ օր դադարի, նոյն օրը սուրբ Յակոբայ բարեկենդան է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՆՆԵՐ.

- Ձուազեղի խաբեր թափ կոթը կպաշեն:
- Բանը շինելով՝ էշը քշելով:
- Չանգակի ձենը հեռուանց յառ ա գալի:
- Ամեն թուրքանող աղա չի դառնայ:



**ՆՈՅԵՄՔԵՐ.**

**ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ**

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Ցանուած արտերուն վերայ ուշադրութիւն պետք է դարձրնել, ու թէ որ ջրոտ կամ լճացեալ տեղեր կան՝ նոցա մօտերն առուներ բանալով ցամաքեցրնել, որ ջրոց շատութենէն հունտերը չապականուին : Պարապ միջոցները գարնան ցանելիք հունտերը մաքրել եւ դաշտերէն ու անտառներէն ձմեռուան այրելիքը բերել :

**ՄԵՂՈՒԱՔՈՒԾԱԿԱՆՔ.** — Այս ամսէն կսկսի մեղուաց ձմեռնային հանգստութիւնը. վասն զի նոյեմբերին կղաղրին աշխատանքէ, եւ փերակներուն մեջ այնպիսի հանդարտութեամբ կկենան, որ ոչ տրգոց կլսուի եւ ոչ բզբոց. Միայն տաք օրերը նոր կենդանութիւն մի ստանալով՝ մեկ կամ կես ժամ փերակին դիմացը արեւու մեջ կբրջրտին եւ նորէն տեղերնին կդառնան : Փորձով դիտուած է որ նոյեմբերի մեջ դուրսը բռջրտող մեղուները՝ կատարեալ հանգստութեան մեջ կմնան մինչեւ ապրիլի սկիզբները, իսկ այն ճանճերը որ նոյեմբերէն կսկսին հանգրտանալ եւ մարտի մեջ կզարբին, ըստ մեծի մասին կըմեռնին :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Գինիները այգիէն կամ հնձանէն տուն տանելէն ու տեղաւորցրնելէն լետոյ, պետք է խաղողնիքին ցիցերը հանել եւ վերայի հողերը մաքրելէն վերջը՝ մեկ առանձին տեղ դիզել որ չփրտտին եւ հետեւեալ տարւոյն համար գործադրուին : Նորարոյս եւ նորատունկ ծառերը հաստ ձողերու վերայ կապելու է, որ ձմեռուան քամիներէն չկտարուին :



**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Անասնոց զոմերն ու ախուռները պետք է մաքուր պահել, ոչխարներուն չորախառն կերակուր տալ, եւ եթէ օդը ներք' օրը քանի մի ժամ դուրս հանել որ մաքուր օդ առնուն: Շատ տեղ ամսոյս մեջ կրողցրնեն խոյերը մաքիներուն՝ այսինքն արու ոչխարները եզերուն քով, որով մինչեւ ապրիլի 23-ը գառնուկներ կը ծնեն: Ամորձատ (կռտած) խոզերը մորթել եւ ապխտել պետք է. իսկ խոճքորները (խոզի ձագերը) եթէ հարկաւորութիւն չկայ պահելու՝ ողջ ողջ վաճառել:

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Չմեռուան համար պատրաստուած բոլոր փայտը սղոցել, կտորել տալ ու բնակարանէն դուրս տեղ մը շարել տալու է որ անկից հրդեհ չպատահի: Շտեմարաններն ու ներքնատները պարզ ու բարեխառն օդոյ ժամանակ բաց ձգել ու հովոտել պետք է:

**ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՋԱՌՔ ՆՈՅԵՄԲԵՐԻ.**

(Ի Հարաւային Ռուսիա.)

- Ի Բրատույիւրովկա, 1-ին.
- Օրնխով, 8-ին.
- Նովոգորգիւսկ եւ ի Բեյց, 21-ին.
- Սլաւեանոսերբսկ, 24-ին.
- Ռոմանովկա (գաւառ. Եկատերինոսլաւի), 30-ին.
- Բերեզովկա, ամեն երկուշաբթի.





### ԴԵԿՏԵՄԲԵՐ

(31 օր է, յորոց 4-ը կերակի եւ 1-ը տօն.)

- |    |   |   |    |
|----|---|---|----|
| 13 | 1 | Բշ. ակ. Գեննարիոսի եպիսկոպոսին, Մերկեո.իոսի զինաւորին եւ Յակովբայ եւ Իրաւափառայ. — Ռ. Նաումայ մարգարէին. — Հր. Ծով փասե պաշարման Երուսաղեմի ի Նաբուզոդոնոսորայ.   | 10 |
|    |   | ☉ Արեգակն ելանէ ժամ 7, վ. 31.<br>— մտանէ. ժամ 4, վ. 17.   |    |
| 14 | 2 | Գշ. բձ. Ս. Կուռնելիոսի հարիւրապետին, եւ Շմաւոնի ազգականին Քրիստոսի, եւ Պողիկարպոսի Զմիւռնիոյ հայրապետին, եւ սրբոց վկայիցն որք յարեւելս կատարեցան. — Ռ. Ամրակումայ մարգարէին.  | 11 |
| 15 | 3 | Գշ բկ պահք. — Ռ. Սոփոնիայ մարգարէին եւ Սարայի վկային.   | 12 |
| 16 | 4 | Եշ. գձ. Ս. հարցն եգիպտացւոց՝ Պողոսի, Պողայ, Մակարայ, Եւազրի, Յովհաննու գրեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսենի, Սիսիանու, Դանիելի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմենի եւ այլոց սրբոց հարց. — Յ. եւ Ռ. Վառվառեայ կուսին. | 13 |
| 17 | 5 | Ուր. զկ. պահք. — Յ. եւ Ռ. Հօրն Սարայի.  | 14 |

Ն.

Լ.



18 6 Շր. դձ. Ս. Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին. 15  
եւս եւ Յ. եւ Ռ.

— Անուանակոչութիւն Վսեմափառ եւ Կայսերազն Մեծի Իշխանին Նիկոլայի Կոստանդինովիչ.

— Անուանակոչութիւն Վսեմափառ եւ Կայսերազն Մեծի Իշխանին Նիկոլայի Միխայլովիչ.

19 7 † Կիր. դկ. Գ, Յիսնակաց. Հրց. բձ. Անապական. Հմբ. 16  
դկ. Հրեշտակ քո Տեր. — Բարեկենդան սուրբ Յակոբայ պահոց. — Ռ. Ամբրոսեայ եպիսկոպոսին.

⊕ Լրումն լուսնի. — *2իւն եւ յուրտ.*

20 8 Բշ. աձ. պահք. Ս. Մինասայ, Երմոզինեայ եւ Գրաբոսի, 17  
եւ կամաւոր աղքատացն Յովհաննու. եւ Ալեքսիանոսի.  
— Ռ. Պատապեայ եւ Սոսրենոսի վկայից.

21 9 † Գշ. ալ. պահք. — Յղութիւն Ս. Աստուածածնի յԱն- 18  
նայե. եւս եւ Յ. եւ Ռ. — Լտ. Թովմայի առաքելոյն. —  
Յայսմ. Քաղոց.

22 10 Դշ. բձ. պահք. — Զմեռնամուտ եւ արեադարձ Այծեղ- 19  
ջեր. Յերեկն սկսանի երկարիչ եւ գիշերն կարճանայ. —  
Տճ. *Էջիվելի երպայիև, որ է առաջիև օր քառաս-*  
*ևօրեայ մասիև ձմերասև, որ կոչի Գարա գրշ.*

23 11 Եշ. բկ. Ս. Եւտրատիոսի, Օգսենտիոսի, Եւզինեոսի, 20  
Ովրեստեսի եւ Մարդարիոսի. — Ռ. Գանիելի սիւնակեցին.

⊙ Արեգակն ելանէ ժամ 7, վ. 38.  
— մտանէ ժամ 4, վ. 21.

24 12 Ուր. գձ. պահք. — Յ. եւ Ռ. Սպիրիդիոնի եպիսկ. 21

25 13 Շր. գկ. Ս. Յակոբայ Մծրնայ հայրապետին, Մարու- 22  
գէի ձգնաւորին եւ Մելիտոսի եպիսկոպոսին. — Ռ. Եւս-  
տրատիոսի, Օգսենտիոսի, Եւզինեոսի, Մարդարիոսի  
եւ Ովրեստեսի վկայիցն. — Լտ. Ծնունդ Տեառն մերոյ  
Յիսուսի Քրիստոսի.

26 14 † Կիր. դձ. Գ, Յիսնակաց. Հրց. բկ. Անսկիզբն Աս- 23  
տուած. Հմբ. դձ. Որ ի վերդ ես. — Ռ. Փիլիմոնի եւ Կա-  
լինիկեայ վկ. — Լտ. Ստեփան. նախավկ. — Տոմ. Քաղոց.

⊙ Վերջին քառորդ լուսնի. — *2իւնաբեր հողմունք.*





Ն.

Լ.

27 15 Բշ. դկ. Ս. հայրապետացն Իգնատիոսի, եւ Աղղէի, եւ Մարութայի եպիսկոպոսին. — Ռ. Ելեւթիւրոսի եւ մօր նորա Անթիայ. — Լտ. Յովհաննու աւետարանչին. 24

28 16 Գշ. աձ. Ս. Թեոպոմպայ եպիսկոպոսին, եւ Թեովնայ վկային, եւ չորից զինաւորացն Բասոսի, Եւսերի, Եւտիքի եւ Բասիլիդեայ. — Ռ. Անգեայ մարգարէին. — Լտ. Մանկանցն Բերդեհեմի. 25

29 17 Դշ. ալ. պահք. — Ռ. Դանիելի մարգարէին եւ երից մանկանցն՝ Անանիայ, Ագարիայ եւ Միսայելի. 26

30 18 Եշ. բձ. Ս. կուսանացն՝ Ինդոսի եւ Դոմնայի, եւ Գղերիկոսի քահանային եւ երկուց բիւրուցն որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացոց. — Ռ. Սերաստիանոսի վկային. — Տճ. Կատրը կէճէսի 27

31 19 Ուր. բկ. պահք. — Ռ. Բոնիփատոսի վկային. — Լտ. Սեղբեստրոսի Հոովմայ հայրապետին. 28

1 20 Շր. գձ. Նախավկայ եւ անդրանիկ քաղաւորին մերոյ սրբոյն Արգարու. — Ռ. Իգնատիոսի աստուածազգեաց հայրապետին. — Լտ. ՅՈՒՆՈՒԱՐ եւ տարեմուտ 1870 քուականին, եւ Տօն Տնօրէնութեան Տեառն. 29

2 21 † Կիր. գկ. Ե, Յիսնակաց. Հրց. գձ. Փառաւորեայ որդի. Հմբ. գկ. Զաստուածային, Զքօ յարութիւնդ եւ Առեայ. — Ռ. Յուլիանեայ կուսին. — Հր. Աք. 30

⊗ Ծնունդ լուսնի. — Տխրագին աւուրք.

⊙ Արեգակն ելանէ ժամ 7, վ. 40.  
— մտանէ ժամ 4, վ. 28.

3 22 Բշ. դձ. Ս. Արրահամու եւ Խորենայ, եւ անարժար թշկացն Կոզմայի եւ Դամիանոսի, եւ Աստուածատրոյ վկային. — Ռ. Անաստասեայ կուսին. — Տճ. Շեփվալ, եւ Ռամագուսն պայրամը զաւուրս երիւ. 1

— Անուանակոչութիւն վսեմափառ եւ Կայսերազն Դըշխոյին Անաստասիայ Միխայլովնայ.

4 23 Գշ. դկ. Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն. — Ռ. Սատուրնինոսի վկային. 2

5 24 Դշ. աձ. պահք. — Յ. եւ Ռ. Ճրագայոյց Ծննդեան. 3

Ն.

Լ.



- 6 25 Եջ. ակ. Ս. Ստեփանոսի նախավկային եւ առաջին մարտիրոսին. — Հաւատօն. — Յ. եւ Ռ. Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. — Լտ. Յայտնութիւն. 4
- 7 26 Ուր. բձ. պահք. — Ռ. Յովսեփայ աստուածահօրն. 5
- 8 27 Շք. բկ. Ս. առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի. — Յ. եւ Ռ. որբոյն Ստեփանոսի նախավկային. 6
- 9 28 † Կիր. գձ. 2, Յիսնակաց. Հրց. դկ. Նախայաւիտեան. Հմք. դձ. Փառաւորեայ ե քո. ցվերջն. — Ռ. Երկուց բիւրուցն, որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացոց. 7  
— Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Դշխոյին Ելենայ Պաւլովնայ (յամին 1806).
- 10 29 Բշ. գկ. Որդւոցն որոտման՝ Յակոբայ առաքելոյն եւ Յովհաննոս աւետարանչին. — Բարեկենդան պահոց Ծննդեան Քրիստոսի. — Ռ. Մանկանցն Բերդեհեմի. 8  
*Օ Առաջին քառորդ լուսնի. — Սառնամանիք եւ ցուրտ.*
- 11 30 Գշ. դկ. Ա. օր պհ. Ծնն. — Ռ. Անբիմոսի եւ Սամփսոնի վկ. 9
- 12 31 Գշ. աձ. Բ օր պհ. Ծնն. — Ռ. Մելանիայ հռովմայեցւոյն. 10

Տ Օ Ն Ա Գ Ի Ի Տ.

Ս. Յակոբայ եւ Յայտնութեան բարեկենդանի միջոցը գտնելու համար ինչ հաշիւ կայ.

— Տարեգիրը 7-ով բաժանելէն յետոյ, մնացորդը դեկտեմբերի 18-էն յետ տալու է, եւ որ բուռն վերայ մնացորդ թիւը դադարի, նոյնքան օր միջոց ուտիք է: — Օրինակ. Տարեգիրը երբ 7-ով բաժանեմք՝ քանորդը կլինի 4 եւ մնացորդը 2. այս երկուսը երբ 18-էն յետ տալով 18, 17 ասեմք, երկրորդ օրը 17-ին կրնկնի, որով կիմանամք թէ միջոց ուտիքը 17 օր է:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Այս տօներու հաշիւներն անելու ժամանակ պէտք է աչքի առջեւ ունենալ որ նախանջ տարիներու մէջ տարեգիրը փետրուարին փոխուի նախընթաց գրոյն հետ, այսինքն եթէ Լ տառը լինի տարեգիրը Ի-ովը հաշուես, եթէ Ի-ն՝ Ժ-ովը, եւ այլն, որպէս զի ամենայն հաշիւ ճիշդ ելնէ:



**ԳԵԿՏԵՄԲԵՐ.**

**ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԻՔ**

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Ամսոյս մեջ երկրագործը դաշտերուն մեջ գործ չունենալով՝ իրեն յարմար աշխատանքն է ամառուան հնձած խոտը վաճառել, մերձակայ անտառներէն փայտ կտրել ու վաճառելու հանել, եւ պարապ միջոցները իւր աշխատանաց արդիւնքը հանգստութեամբ վայելել :

**ՄԵՂՈՒՍԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Մեղուները դեկտեմբերին կատարեալ հանգստեան մեջ կլինին. ուստի պէտք չէ փերակներուն քով աղաղակ վերցընել ու կանչելով խօսել : Ճանճերը մկներուն ձեռքէն ազատելու համար՝ փերակին դիմացը ականատ (*գաֆսունա*) լարելու է, որ մեղուները չմեռցուցած՝ իրենք սատակին :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այգեգործը դեկտեմբերին այգիներուն մեջ մասնաւոր գործ չունենալով՝ ժամանակին յարմար աշխատանաց նիւր պիտի գտնէ իրեն համար. եւ իբրեւ հանգստեան ամիս, պատշաճաւոր ժամանակն է իւր աշխատանաց քաղցր արդիւնքը վայելելու :

**ԱՆԱՍՆԱԳԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Անասնոց վերայ մասնաւոր խնամք տանել պէտք է ամսոյս մեջ, եւ գոմերուն, ախոռներուն ու հասնոցներուն դռները փակ պահելու է որ չըմբօսին : Ոչխարներուն կեցած տեղը պէտք է ջուր դնել, եւ երէ ցուրտը սաստիկ է՝ ջուրը փոքր ինչ տաքցընել : Ամսոյս խոզաբուտը, այսինքն խոզի կերակուրը վարսակ, գարի եւ եգիպտացորեն է. որով մեկ խոզը լազիրցընելու համար՝ երկու ամիսը բաւական է. իսկ միջակ գիրութիւն ունենալուն համար՝ մեկ ամիսն ալ կօգտէ : Նայելու է որ խոզնոցը տաք լինի :



ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Թե որ սաստիկ ցուրտին պատճառաւ գետերն ու լիճերը պաղած լինին, ամառուան սառույցը պետք է ժողովել: Հաւերու եւ սագերու բնակարանը պետք է տաք պահել: Սագերու ամենալաւ կերակուրը կհամարուի չծեծած ցորեն, վարսակ, գարի եւ սիսեռ: Իւրաքանչիւր սագը լաւ գիրցընելու համար բաւական է 4 չկտփերիկ վարսակը կամ 3 գարնեց գարին եւ կամ 1/2 ջերփերիկ սիսեռն: Նայելու է որ կուտը քիչ քիչ տրուի, որպէս զի անելորդ ջմնայ գետնին վերայ եւ չբիճանայ: Ջուրը որքան կարելի է շատ պետք է տալ եւ մինչեւ մորթելը սագնոցն դուրս չբողուլ: Եթէ գետը կամ լիճը պաղած չլինի, շատ օգտակար է սագերը լողացընելէն վերջը մորթել:

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌՔ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ.

(Ի Հարաւային Ռուսիա.)

Ի Նովոգորգեւսկ, յԱդեքսանդրիա, Ի Հօբին եւ Ի Թոկմակ, 6-ին.

— Բելց, 20-ին.

— Խարկով, 20-էն մինչեւ 6 յունուարի.



## ԱՆՈՒԱՆՔ ՍՐԲՈՑ

*solentem jekenteghu Zayausanetsayg rus karaqhi ayբուբենից*

յամին 1869.

Արգար ղեկտեմբերի 20.  
 Արդիա Փետրուարի 4.  
 Արդյմսեն Փետրուարի 24.  
 Արեղնագով (Միսայել) Յուլ. 8.  
 Արել Օգոստոսի 7.  
 Արիբա Նոյեմբերի 13.  
 Արիսողոմ Յունուարի 16.  
 Աբրահամ Օգոստ. 7 եւ Դեկտ. 22.  
 Ագարիա Փետրուարի 6.  
 Ադամ Օգոստոսի 7.  
 Ադդե Դեկտեմբերի 15.  
 Ադոկտոս Սեպտեմբերի 27.  
 Ագարիա (Միսաք) Յուլիսի 8.  
 Աբանագինե Յնս. 19 եւ Օգոստ. 5.  
 Աբանաս Յունվ. 25 եւ Հոկտ. 25.  
 Ալեքսիանոս Դեկտեմբերի 8.  
 Ակակիոս Յունիսի 23.  
 Ակիւլինիա Հոկտեմբերի 23.  
 Ակիւղաս Յունուարի 27.  
 Ակիփսիմոս Նոյեմբերի 4.  
 Ահարոն Օգոստոսի 7.  
 Աղեքսանդրոս Նոյեմբերի 6.  
 Ամբակում Փետրուարի 4.  
 Ամովս Փետրուարի 5.  
 Այիթալա Նոյեմբերի 4.  
 Անանիա Յուլիսի 8 եւ Հոկտ. 14.  
 Անաստաս Հոկտեմբերի 27.  
 Անատոլա Յունուարի 30.  
 Անգեոս Փետրուարի 4.  
 Անդրեաս Յունվ. 28 եւ Նոյեմ. 15.  
 Ադրիանոս Նոյեմբերի 25.  
 Անրիմոս Սեպտեմբերի 25.  
 Անիբատոս Յուլիսի 7.  
 Աննա Մարտի 15 եւ Օգոստ. 26.  
 Անտոն Յունվ. 18 եւ Հոկտ. 13.

Անտոնինոս Յուլիսի 7.  
 Աշխեն Յուլիսի 12.  
 Ապիտոն Յունուարի 23.  
 Ատուածատուր Դեկտեմբերի 22.  
 Ատովմ Փետրուարի 17.  
 Արիստակես Փետրուարի 8.  
 Արսեն Դեկտեմբերի 4.  
 Արտեմիոս Հոկտեմբերի 23.

Բարել Յունվ. 30 եւ Հոկտ. 30.  
 Բագարատ Նոյեմբերի 27.  
 Բագոս Յունուարի 26.  
 Բառնարա Հոկտեմբերի 14.  
 Բասիլիդ Դեկտեմբերի 16.  
 Բասիլիսկոս Նոյեմբերի 11.  
 Բասոս Դեկտեմբերի 16.  
 Բարակ Օգոստոսի 7.  
 Բարադամ Սեպտեմբերի 26.  
 Բարթողոմեոս Նոյեմբերի 29.  
 Բարսեղ Հոկտեմբերի 25.

Պարրիել Նոյեմբերի 8.  
 Գայիանե Յունիսի 17.  
 Գեննարիոս Դեկտեմբերի 1.  
 Գեդեոն Օգոստոսի 7.  
 Գեորգ Սեպտեմբերի 27.  
 Գլերիկոս Դեկտեմբերի 18.  
 Գորգիոս Յունուարի 21.  
 Գուրիաս Նոյեմբերի 13.  
 Գրարոս Դեկտեմբերի 8.  
 Գրիգոր Փետր. 1 եւ 8, Մարտի 22,  
 Ապրիլի 5, Յունիսի 21, Յուլիսի  
 17, Հոկտեմբերի 11 եւ 25, եւ  
 Նոյեմբերի 22.  
 Գրիգորիոս Յունվ. 21 եւ Հոկտ. 13.

Դամիանոս Դեկտեմբերի 22.  
 Դանիել Փետրուարի 8, Յուլիսի 8  
 եւ Դեկտեմբերի 4.  
 Դաւիթ Սեպտեմբերի 29, Հոկտեմ-  
 բերի 11 եւ Դեկտեմբերի 23.  
 Դեմետրիոս Նոյեմբերի 11.  
 Դիոնեսիոս Հոկտեմբերի 16 եւ 25.  
 Դոմնա Դեկտեմբերի 18.

Եզեկիել (Եզր) Սեպտեմբերի 2.  
 Ելեբիւրոս Յունուարի 30.  
 Ելպիս Փետրուարի 6.  
 Եկատերինէ (Նեքրտառինէ) Սեպ-  
 տեմբերի 30.  
 Եղիազար Փետր. 3 եւ Օգոստ. 7.  
 Եղիա Յունիսի 15.  
 Եղիշէ Հոկտեմբերի 11.  
 Եղիսէ Յուլիսի 17.  
 Ենովս Օգոստոսի 7.  
 Ենովք Օգոստոսի 7.  
 Եպիփան Յնս. 30 եւ Հոկտ. 25.  
 Երանոս Սեպտ. 25 եւ Հոկտ. 6.  
 Երեմիա Օգոստոսի 28.  
 Եւզինիա Յունուարի 23.  
 Եւզինէոս Յունվ. 27 եւ Դեկտ. 11.  
 Եւփիմէ Օգոստոսի 4.  
 Եփրեմ Հոկտեմբերի 25.

Զաքարիա Փետրուարի 4, Յուլիսի  
 15 եւ Սեպտեմբերի 2.  
 Զենոն Հոկտեմբերի 21.

Թադէոս Օգոստոսի 2 եւ Նոյեմ-  
 բերի 29.  
 Թաքուլ Հոկտեմբերի 13.  
 Թեոդոս Յունուարի 20 եւ 30.  
 Թեոփիլոս Յուլիսի 7.  
 Թումաս Հոկտեմբերի 13.  
 Թովմա Օգոստոսի 30.

Իգնատիոս Դեկտեմբերի 15.  
 Ինգոս Դեկտեմբերի 18.  
 Իսահակ Օգոստոսի 7.  
 Իրաւափառ Դեկտեմբերի 1.

Խաղ Յունիսի 28.  
 Խոսրովիդուխտ Յուլիսի 12.  
 Խորեն Դեկտեմբերի 22.  
 Կալիստրատոս Յուլիսի 14.  
 Կանդիտոս Յունուարի 27.  
 Կիպրիանոս Օգոստոսի 4.  
 Կիրակոս Յունուարի 21.  
 Կիւրեղ Յունուարի 25, Փետր. 24,  
 Մարտի 15 եւ Հոկտեմբերի 25.  
 Կղոզիա Յունուարի 23.  
 Կոտրատիոս Յունուարի 23.  
 Կոզմա Դեկտեմբերի 22.  
 Կոստանդիանոս Յուլիսի 1.  
 Կուռնելիոս Դեկտեմբերի 2.  
 Համագաստ Հոկտեմբերի 4.  
 Հեղինէ Յուլիսի 1.  
 Հովփսիմէ Յունիսի 16.

Ղազար Ապրիլի 12 եւ Հոկտ 20.  
 Ղամբէոս եւ Ղամբէոսի Սեպտ. 29.  
 Ղեռնդ Փետրուարի 25.  
 Ղուկաս Հոկտեմբերի 18.  
 Ղուսկիանոս Յուլիսի 14, Հոկտեմ-  
 բերի 20 եւ Նոյեմբերի 25.

Սակար Օգոստոսի 4, Հոկտեմ-  
 բերի 21 եւ Դեկտեմբերի 4.  
 Մաղաքիա Փետրուարի 4.  
 Մամաս Սեպտեմբերի 22.  
 Մանեայ Յունուարի 24.  
 Մանուկ Նոյեմբերի 13.  
 Մատթէոս Հոկտեմբերի 18.  
 Մաղաքիա Հոկտեմբերի 14.  
 Մարդարիոս Դեկտեմբերի 11.  
 Մարթա եւ Մարիամ Հոկտ. 20.  
 Մարիանիա Սեպտեմբերի 23.  
 Մարկիանոս եւ Մարտիրոն Նոյեմ-  
 բերի 6.  
 Մարկոս Փետր. 24 եւ Հոկտ. 18.  
 Մարոգէ Դեկտեմբերի 13.  
 Մարութէ Դեկտեմբերի 15.  
 Մարտիրոս Փետրուարի 15.  
 Մարտիրոն Նոյեմբերի 6.  
 Մելիտոս Նոյեմ. 10 եւ Դեկտ. 13.

Մելքիսեդեկ Օգոստոսի 7.  
 Մեսրոպ Յուլ. 10 եւ Հոկտ. 11.  
 Մետրոփանոս Նոյեմբերի 6.  
 Մինաս Նոյեմ. 10 եւ Դեկտ. 8.  
 Միսաք (Արեղնագով) Յուլիսի 8.  
 Միւռոն Նոյեմբերի 22.  
 Միքայել Նոյեմբերի 8.  
 Միքիա Փետրուարի 4.  
 Մովկիմ Յունուարի 23.  
 Մովսէս Օգոստոսի 7 եւ Հոկտ. 11.

Յակոբ Օգոստոսի 7 եւ 30, Հոկտեմբ. 14 եւ Դեկտ. 13, 23 եւ 29.  
 Յակովկ Դեկտեմբերի 1.  
 Յեսու Օգոստոսի 7.  
 Յեփրայե Օգոստոսի 7.  
 Յոր Սեպտեմբերի 4.  
 Յովակիմ Օգոստոսի 26.  
 Յովել Փետրուարի 4.  
 Յովհաննէս Յունուարի 14, 19, Մարտի 22, Սեպտ. 4, Հոկտ. 14, 18, 25, Նոյեմբերի 1, Դեկտեմբերի 4, 8 եւ 29.  
 Յովնան Փետրուարի 4.  
 Յովսեփ Յունուարի 26, Օգոստոսի 7, Հոկտեմբերի 20 եւ Նոյեմ. 4.  
 Յուլիանէ Նոյեմբերի 24.  
 Յուդիտա Յունուարի 21.  
 Յուսկան Փետրուարի 8.  
 Յուստիանէ Օգոստոսի 4.  
 Յուքրէոս Հոկտեմբերի 25.

Կառում Փետրուարի 4.  
 Կեղոս Դեկտեմբերի 4.  
 Կերսէս Յունվ. 28 եւ Հոկտ. 11.  
 Կերտառիմ (Կատարիմ) Սեպտեմբերի 30.  
 Կիկոզայոս Նոյեմբերի 22 եւ Դեկտեմբերի 6.  
 Կոյ Օգոստոսի 7.  
 Կոննէ Յունուարի 24.

Կամուսնէ Փետրուարի 3.  
 Շիղա Հոկտեմբերի 14.  
 Շին Նոյեմբերի 10.

Շմաւոն Օգոստ. 30 եւ Դեկտ. 2.  
 Շողակաք Օգոստոսի 16.  
 Շուշան Սեպտեմբերի 23.

Ոնեսիմոս Նոյեմբերի 25.  
 Ոնոփրիոս Յունուարի 18.  
 Ոսկի (Ոսկեանք) Փետրուարի 20.  
 Ովսէ Փետրուարի 4.  
 Ովրեստէս Դեկտեմբերի 11.  
 Որմզղան Փետրուարի 24.

Պանդայէոն Հոկտեմբերի 9.  
 Պարսամ Յունուարի 18.  
 Պեղագիա Հոկտեմբերի 7.  
 Պետրոս Յունվ. 16 եւ Դեկտ. 27.  
 Պիմեն Դեկտեմբերի 4.  
 Պիոն Փետրուարի 24.  
 Պիստոս կամ Պիտիս Փետր. 6.  
 Պղատոն Նոյեմբերի 4.  
 Պոզ Դեկտեմբերի 4.  
 Պողիկարայոս Դեկտեմբերի 2.  
 Պողիկտոս Յունուարի 21.  
 Պրոքոս Նոյեմբերի 25.  
 Պոզոս Յուլիսի 19, Նոյեմբերի 6 Դեկտեմբերի 4 եւ 27.

Ռամել Հոկտեմբերի 21.  
 Ռատիկոս Սեպտեմբերի 1.  
 Ռոմանոս Սեպտ. 27 եւ Նոյեմ. 13.

Սահակ Փետր. 22, Յունիսի 26, Յուլիսի 10 եւ Հոկտեմբերի 1.  
 Սամուէլ Օգոստոսի 7.  
 Սամուանաս Նոյեմբերի 13.  
 Սամփոն Օգոստոսի 7.  
 Սայեն Փետրուարի 24.  
 Սանդուխտ Օգոստոսի 2.  
 Սարգիս Յունվ. 26 եւ Փետր. 15.  
 Սեղրակ (Սնանիա) Յուլիսի 8.  
 Սեք Օգոստոսի 7.  
 Սեղրեստրոս Հոկտեմբերի 25.  
 Սերգիոս կամ Սերգի Յունվ. 23.  
 Սեւեռիանոս Հոկտեմբերի 30.  
 Սիդուանոս Հոկտեմբերի 14.

Սիմեոն Փետրուարի 14.  
 Սիսիանոս Դեկտեմբերի 4.  
 Սիւքիաս Փետրուարի 18.  
 Սոփիա Փետրուարի 6.  
 Սոփոնիա Փետրուարի 4.  
 Ստեփանոս Սեպտեմբ. 1, Նոյեմբերի 3 եւ Դեկտեմբերի 25.  
 Սրապիոն Դեկտեմբերի 4.  
 Վահան Յունուարի 23.  
 Վաղերիոս Յունուարի 27.  
 Վառվառե Հոկտեմբերի 7.  
 Վասիլուհի Նոյեմբերի 24.  
 Վարդան Փետրուարի 27.  
 Վարոս Հոկտեմբերի 13 եւ 27.  
 Վլասիոս կամ Վլաս Յունվ. 16.  
 Վրբանես Փետրուարի 8.

Տարագոս Նոյեմբերի 25.  
 Տիմոթեոս եւ Տիտոս Հոկտ. 16.  
 Տիւքիկոս Սեպտեմբերի 1.  
 Տրդատ Յուլիսի 12.  
 Տրիփոն Յունուարի 18.  
 Փերրոնիա Սեպտեմբերի 23.  
 Փիլիպպոս Յունուարի 23, Նոյեմբերի 15 եւ Հոկտեմբերի 14.  
 Փիլիկտիմոն Սեպտեմբերի 22.  
 Փոկաս Հոկտեմբերի 6.  
 Փոտինոս Յուլիսի 7.  
 Քրիստափոր Հոկտեմբերի 23.  
 Քրիստինե Օգոստոսի 4.  
 Օգսենտիոս Դեկտեմբերի 11.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Այս տօներէն զատ՝ քանի մի անուններ կան որ ի վաղուց հետէ սովորութիւն եղած է եկեղեցական հանդիսաւոր տօներուն հետ ի միասին տօներէ զոր օրինակ Յարութիւն — որ ընդ հանրապէս Չասկի չորրորդ կիւրակէի օրը կտօներն, Համբարձում — Համբարձման տօնին, Գալուստ — Գալստեան օրը, Վարդիբես — Պայծառակերպութեան կամ Վարդալատի տօնին, Խաչատուր կամ Խաչերես — Ս. Խաչի օրը, եւ այլն :

### ՏՕՆ ԱԽՄԲՈՒԹԻՒՆ.

Տօնախմբութիւն կասուի համանուն սրբոյն յիշատակի օրը տօն կատարելը : — Աստուածաշնչի պատմութենէն յայտնի է որ նորածին մանկանց այլ եւ այլ անուններ տալու պատճառ եղած են ի սկզբան երբեմն իւրեանց գոյութիւնը (Յննդոց Գ, 1), երբեմն նոցա ծնողաց դիտաւորութիւնն ու պարզ կամեցողութիւնը (Յննդոց ԻԱ, 3) եւ երբեմն Աստուծոյ կամքը (Մատթ. Ա, 21). իսկ քրիստոնեայք ի սկզբան նահապետաց եւ մարգարէից, եւ ապա սրբոց առաքելոց, մարտիրոսաց եւ հայրապետաց անուններովը կոչելով իւրեանց նորածին մանուկները, սովորութիւն եղաւ, ինչպէս Յունաց եւ Ռուսաց, նոյնպէս եւ մերայնոց մեջ իւրեանց համանուն սուրբր առանձին պաշտպան կոչելով՝ սուրբ եկեղեցւոյ նոցա յիշատակը տօնած ժամանակը մասնաւոր տօնախմբութիւն անել : Թեւ մեզի համար, — իրրեւ խնայող ու չափաւոր ազգի համար, — շատ ունակ այս մեկ աւելորդ ծախքի դուռն է. բայց իրրեւ բարեպաշտական սովորութիւն, միանգամայն եւ համանմանութիւն ուրիշ քրիստոնեայ եղբարց, չափաւոր կերպով տօն կատարելը գովելի է :

### ՏՕՄԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՏՕՄԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ կամ որ նոյն է ժամանակագրութիւն եւ կամ ըստ Յունաց իսոկոգրագիա (χρονολογια) կոչուածը՝ ուսումնական գիտութեանց մէկ մասն է, որ արեգական ընթացքին համեմատ՝ ժամանակը կորոշէ դարու, տարւոյ, ամսոյ, շաբաթու, արու, ժամու եւ ուրիշ ամենափոքր միջոցներու վերայ, որով եւ յաւելեանական ժամանակի շրջանը կկարգաւորէ:

ԺԱՄԱՆԱԿ. — Ժամանակ կամ ժամանակի շրջանն է արեգական շարժմամբը չափուած 24 ժամու միջոց, որ անբաժանելի վայրկեաններէ կայանալով՝ անծայր մանեակի (օղ) պէս հետզհետէ յառաջ կերթայ եւ աշխարհիս ստեղծմանէն մինչեւ մեր օրերը եւ մեզմէ յետոյ եւս գալու դարերուն ժամանակը կբաղկացընէ:

ԴԱՐ. — Ընդհանրապէս դար կասուի հարիւրամեայ ժամանակի միջոցը. բայց երկարատեւ ժամանակներն եւս դար կկոչուին, ինչպէս որ աշխարհիս ստեղծմանէն մինչեւ Ջրհեղեղը, որ 1655 տարւոյ միջոց է՝ առաջին դար կասուի, Ջրհեղեղէն մինչեւ Քրիստոս՝ երկրորդ դար, Քրիստոսէ մինչեւ աշխարհիս վերջը կամ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը՝ երրորդ դար: Նոյնպէս դար կասուի նաեւ հազարամեայ ժամանակի միջոցը, եւ այն է պատճառը որ Քրիստոսի գալուստը աշխարհիս ստեղծման 5508 թուականին լինելով՝ մեր Շարականին մէջ 6-րդ դար գրուած է.

„Իսկ նոր Ադամդ ի վեց դարուն՝  
„Այց արարեր կորուսելոյն“

եւ կամ թէ

„Որով զգեցաւ որդին զըրած,  
„Ի վեց դարուն զմարմին մեղաց“:


**ՏԱՐԻ.** — Տարի կասուի տասներկու ամսոց ժամանակի միջոցը, որ աստղաբաշխական հաշուով երկուսի կբաժանուի. Ա) Արեգակնային տարի, յորում արեգակը 12 ամսոց շրջանի կամ 365 օրերու՝ 5 ժամու եւ 48 վայրկենի միջոցին ամբողջ զողիակոսէն անցնելով՝ արեւելքէն արեւմուտք կերթայ, եւ Բ) Լուսնակա տարի, որ տասներկու լուսնական ամսոց կամ 354 օրերու՝ 8 ժամու եւ 48 վայրկենի միջոցին իւր շրջանը կկատարէ: Վերջնոյս առաջինէն (այսինքն արեգակնային տարիէն) 10 օր ու գրեթէ 21 ժամ ունեցած տարբերութիւնն է որ մեր լեզուով վերայիս կասուի. սակայն հասարակ լուսնական տարին 354 օրէ կբաղկանայ, որոյ վեց ամիսքը երեսնօրեայ են եւ վեց ամիսքը 29-օրեայ: Լուսնական տարին կբանեցընեն Հրեաներն ու մահմետականները. բայց Հրեաները լուսնոյ իննեւտասնամեայ շրջանի եօթը տարին նահանջ, այսինքն 13-ական ամիս հաշուելով՝ տարւոյն շրջանը կուղղեն. իսկ մահմետականացը միշտ ետ կմնայ:

**ՆԱՀԱՆՁ ՏԱՐԻ.** — Քրիստոսի թուականի հասարակ տարին 365 օրերէ կբաղկանայ, որ եթէ 12 ամսոց վերայ բաժանեմք՝ քանորդը 30 կլինի եւ մնացորդը 5, որ այն եւս այլ եւ այլ ամսոց վերայ դնելով՝ 5 ամիսը 31-օրեայ կլինի եւ 7 ամիսը 30-օրեայ. բայց Յուլիոս Կեսարը Հռովմայեցւոց տոմարը նորոգելով՝ հասարակ տարին 365 օր եւ 6 ժամ հաշուեց. եւ ահա այս 6 ժամն է որ 4 տարուան մէջ մէկ օր ձեւացընելով՝ Փետրուարի օրերուն վերայ կաւելցուի, տարին 366 օր կլինի եւ նահանջ կկոչուի:

**ՀՌՈՎՄԱՅԵՅԻՈՅ ՏԱՐԻ.** — Հին Հռովմայեցւոց տարին Հռովմայ շինութենէն սկսաւ Քրիստոսէ 753 տարի յառաջ՝ նոցա Հռոմուլոս թագաւորին հոգաբարձութեամբը, որ ժամանակակից էր Եսայեայ մարգարէին: Այս Հռովմուլոսը կարծելով թէ արեգակը 300 օրուան մէջ կկատարէ իւր շրջանը՝ տարին 10 ամսոց

վերայ կարգաւորեց եւ սկիզբը Մարտ ամսոյ առաջին օրէն սահմանեց. բայց Հռովմալոսի յաջորդը՝ Նուսա Պոնափիոնս յաւելցուց տարւոյն վերջը նախ Յունուար ամիսը՝ ի պատիւ իւրեանց Եանուս<sup>1</sup> չաստուծոյն, եւ ապա Փետրուարը՝ յանուն Փեքրուսայ, որ հռովմայեցւոց լեզուաւ մաքրաքիւն կնշանակէ. վասն զի այս ամսուն կկատարէին նորա իւրեանց քաւութեան եւ ննջեցելոց տօները, որոյ տեղը քրիստոնէութեան ժամանակ՝ սուրբ Հարք Տեառնընդառաջի տօնը սահմանեցին. եւ որովհետեւ Հռովմայեցիք Փետրուարի սկիզբը նաեւ լապտերներ կվառէին Պղտատոնի<sup>2</sup> յիշատակին համար, քրիստոնէից մէջ եւս սահմանուեցաւ ճրագ օրհնելը եւ տեղ տեղ երեկոյեան ժամանակ կրակ վառելն ու վրայէն ցատքելը:—Ս.յս յայտնի է որ նախնի քրիստոնեայք իւրեանց տարեգլուխը նախ՝ Զատիի առաջին օրէն եւ ապա Ծննդեան տօնէն կսկսէին. բայց երբ վեշտասաներորդ դարու երկրորդ կիսուն սկիզբները, այսինքն 1564-ին Հռովմայեցւոց Կարոլոս Թ թագաւորի կարգադրութեամբը տարեգլուխը Յունուարի մէկէն սկսաւ, բոլոր քրիստոնեայք եւս նոյն սահմանադրութեանը հետեւեցան:

<sup>1</sup> Եանուս կամ Յանուս կուռքը հռովմայեցւոց մեջ չաստուած տարւոյ կհամարուէր, որոյ պատկերը երկու դեմքով կնկարուէր, իբր



նորա անցեալն ու ապառնին տեսնելուն նշան : Նումա Պոմպիլիոսը  
նորա անուամբբ մեկ պղնձե մեհեան (կռատուն) շինել տուաւ , յորում  
12 սեղանք կային ի նշանակ երկոտասան ամսոց տարւոյն :

<sup>2</sup> Պղոտոնը Կոռնոսի երեք որդւոց կրտսերն էր , որ աշխարհիս  
իշխանութիւնը իւրեանց մեջ բաժանած ժամանակ՝ տատարոսը կամ  
սանդարամետն ընկաւ իւր բաժինը . որով յունարէն Այիդէս եւ լատիններէն Որկոս կոչուեցաւ , որ մեր լեզուաւ դժոխք , դժոխական կամ  
որ նոյն է չաստուած դժոխոց կրարգմանուի : Սորա պատկերը ամենա-  
տոգեղ կերպով կնկարէին 4 ձի լծուած կառքի վերայ նստած , մեկ ձեռ-  
քին մեջ եւս դժոխոց փականքը :

ՀՐԷԻՑ ԵՒ ԵԳԻՊՏԱՅԻՈՑ ՏԱՐԻՆԵՐԸ. — Թէպէտ եւ  
Հին ժամանակները գտնուեցան երբեմն երբեմն այն-  
պիսի անձինք որ կարծեցին թէ իւրաքանչիւր ազգ  
այլ եւ այլ տարի ունեցած է ի սկզբան , ինչպէս  
սիկիլիացի Դիոգորոս պատմիչը , Պլինիոսն ու Պլու-  
տարքոսը , որք կասէին թէ « Եգիպտացւոց տարին ի  
սկզբան մեկ եւ յետոյ երկու լուսնական ամիս էր .  
բայց որովհետեւ այն ծուռ ենթադրութիւնը հակա-  
ռակ կեղնէ Աստուածաշնչի խօսքերուն , որ յայտ-  
նապէս կգրէ թէ « նոյ երբ Ջրհեղեղի ժամանակ տա-  
պանը մտաւ 600 տարեկան էր , յորում տասն ամիս  
եւ 54 օր կենալէն յետոյ՝ 601 տարեկան հասակին ե-  
լաւ տապանէն <sup>3</sup> » , պէտք է գիտնալ որ նահապետաց ,  
ինչպէս նաեւ Հրէից եւ Եգիպտացւոց տարիները կարճ  
չեն եղած քան զմերը . վասն զի եթէ Ջրհեղեղէն ա-  
ռաջ Մովսիսի պատմած տարիները մէկ մէկ ամիս լի-  
նէին , ենովքը , Մաղաղայէլն ու Կայէնը եօթը տարե-  
կան չեղած ու այրութեան հասակը չառած՝ տղայ  
պիտի ունենային , որ աւելի վարմանալի է քան թէ  
Մաթուսաղայի ինը հարիւր վաթսուներինը տարի  
ապրիլը . նոյնպէս եթէ նահապետաց տարիները եր-  
կերկու ամիս հաշուեմք , կտեսնեմք որ Փաղէկն ու Սե-  
րուքը տակաւին հինգ տարեկան չեղած՝ զաւակ ունե-  
ցած են եւ հազիւ թէ 24 տարի ապրած են , որ կնշա-  
նակէ թէ նոցա կեանքը Արփաքսաղայ , Յակոբայ ու

մեր կեանքէն շատ աւելի կարճ եղած է. մինչդեռ ընդ հակառակն, ինչպէս սուրբ գրոց վկայութենէն, նոյնպէս եւ ընդհանուր ազգաց աւանդութենէն յայտնապէս կտեսնեմք որ հին ժամանակի մարդիկը մեզմէ շատ աւելի երկայնակեաց եղած են. Հին ազգաց տարին՝ մերինին պէս 12 ամսէ բաղկանալուն վերայ վաղուց արդէն յիշատակած է երողոտոս՝ թէ «Եգիպտացիք առաջինն եղան որ տարին 12 ամսոց վերայ 30-ական օրով բաժանեցին, որոց վերայ հինգ օր եւս Հերմէսն աւելցուց»:

<sup>3</sup> Նոյ եր ամաց վեց հարիւրոց, եւ ջրհեղեղ ջուրցն եղեւ ի վերայ երկրի . . . յամսեանն մետասաներորդի երեսեցան գլուխք լերանց . . . եւ եղեւ ի վեցհարիւրերորդի եւ ի միում ամի կենաց Նոյի երաց Նոյ գտապանն (Ծննդոց է, Ը):

**ԱՄԻՍ.** — Առիս կասուի տարւոյն երկոտասաներորդ մասը, որ ի սկզբան լուսնի առաջին երեւոյթէն որոշուեցաւ. վասն զի մարդիկ տեսնելով որ լուսինը իւր կանոնաւոր շրջանը կատարելէն յետոյ վերստին կճնուի, այն նորածնութիւնը անազոյս անուանեցին. սակայն բաւական ժամանակէ յետոյ լուսնի տեղը արեգակնային ամիսն սկսաւ գործադրուիլ, որով եւ ասմարագիտաց մէջ սովորութիւն եղաւ ամիսը արեգակնային եւ յուսնային օրերու վերայ բաժանել: Արեգակնային ամիսը 30 օր, 10 ժամ, 29 վայրկեան եւ 4 մանրերկրորդ կհաշուի. իսկ լուսնային ամիսը՝ 29 օր, 12 ժամ 44 վայրկեան, 2 մանրերկրորդ եւ 8 տասնորդական մասունք: — Կռապաշտութեան ժամանակ ամսագլխոյ կամ ամսամտի օրերը՝ քուրմերէն մէկը ուշադրութեամբ կհսկէր լուսնի նորմանը, եւ տեսնելուն պէս կիմացընէր զորհարարին, որ քուրմերու գլխաւորը կլինէր, եւ նա բարձր ձայնիւ կհրատարակէր ժողովրդեան ամսամտի օրը, հրաւիրելով որ ցանկացողները երթան զոհ մատուցանեն նոյն ամսոյ կուռքին:

ՇԱԲԱԹ. — Շարքս կամ Եօթնեակ կասուի Եօթն օրուան շրջանը, որ ոմանք լուսնի Եօթնօրեայ փոփոխութիւններէն պատճառած կհամարին, եւ ոմանք Եօթնօրեայ արարչագործութեան աւանդութենէն մտած, որ շատ հաւանական է. մանաւանդ թէ Հրէից մէջ շատ հին է այս սովորութիւնը, վասն զի Աստուած պատուիրած էր Մովսիսի բերանովը որ 6 օր աշխատին, եւ Եօթներորդ օրը հանգստանան: Արեւելեան ուրիշ ազգերն եւս, ինչպէս Եգիպտացիք, Հայք, Ասորիք անյիշատակ ժամանակէ հետէ այս սովորութեանը կհետեւէին. եւ միայն արեւմուտքի մէջ կուպաշտութեան ժամանակ Հռովմայեցիները իննական օր կհամարէին շաբաթը եւ Յայները տասնական, որոց ամիսը երեք շաբաթէ կբաղկանար, բայց նորա եւս քրիստոնէութենէն յետոյ սկսան Եօթնական օր հաշուել մէկ շաբաթը: — Շաբաթուան Եօթն օրերը Հրեայք մէկմէկու ետեւէ կարգաւ կհամարէին ի սկզբանէ հետէ, եւ առաջին օրուան Միաշարքի կասէին, երկրորդին Երկուշարքի, երրորդին Երեքշարքի, չորրորդին Չորեքշարքի, հինգերորդին Հինգշարքի, բայց ի վեցերորդ օրէն, որ (Ռարք) — *quies* կանուանէին, ուսկից Յայք եւ Հայք առնելով՝ յունարէն *Παρασκή* (*παρασκή*) եւ հայերէն Ռարք աւուեցաւ. իսկ Եօթներորդ օրուան Շարք կասէին, որ *hambatus* կամ *hambustus* օր կնշանակէ: — Արեւելեան քրիստոնեայք ընդհանրապէս Հրէից հետեւացան այս կողմանէ, եւ միայն միաշաբաթի օրուան անունը ի պատիւ Յարութեան Քրիստոսի փոխեցին եւ յունարէն *Կիրակի* անուանեցին որ *skironian* կնշանակէ. եւ Ս. Հարց ժողովողը որոշուեցաւ որ Հրէից շաբաթին տեղը այն օրը սուրբ պահուի Քրիստոսի Յարութեան եւ միանգամայն Հոգւոյն սրբոյ գալստեան յիշատակին համար, որ կիրակի (միաշաբաթի) օրը հանգիպեցաւ: Իսկ արեւմտեան քրիստոնեաներէն ոմանք շաբաթուան օրերը Եգիպտացւոց Եօթը մոլորա-

կաց կոչմամբը անուանեցին, որ մինչեւ ցայժմ գործածական է լատինացւոց մէջ. վասն զի Բշ. օրուան՝ օր յուսնի, Գշ. — օր Հրսի, Գշ. — օր Փայրածուի, Եշ. — օր Լուսնբագի, Ուր. — օր Արուսեկի, Շք. — օր Երեւակի եւ Կիր. — օր Արեւու կանուանեն: Եւ որովհետեւ կռապաշատութեան ժամանակ եօթը մոլորակները մէկ մէկ չաստուածաց կնուիրէին, շաբաթուան օրերն եւս նոյն կուռքերուն, այսինքն Բշ. օրը Անահիսին <sup>4</sup> ընծայեցին Գշ. — Արեւին <sup>5</sup>, Գշ. — Հերմեսին <sup>6</sup>, Եշ. — Արաւագիին <sup>7</sup>, Ուր. — Ափրոդիսկին <sup>8</sup>, Շք. — Կոռնուսին <sup>9</sup> եւ Կիր. (Միաշաբաթին) Ապոդոնիին <sup>10</sup> կարծելով թէ սոքա կաիրեն օրերու առաջին ժամերուն:



<sup>4</sup> Անահիտը, որ յունարէն Արտեմիս եւ լատիներէն Տիւնա կասուի՝ Գիոսի դուստրը եւ Ապոդոնի քոյրն էր եւ որսորդութեան դիցուհի կհամարուէր: Հեթանոսութեան ժամանակ այնչափ պատիւ ունէր Հայոց մէջ, որ „Փառք եւ կեցուցիչ ազգիս մերոյ“ կանուանէր Տրրդատ բազաւորը: Սորա արձանը Հայաստանի մէջ շատ տեղեր կային, յորոց երեւելին ու ոսկիէ բափածը Եկեղեաց գաւառի Երիզա կամ Երզնկա քաղաքին մէջ կանգնուած էր. որով Ոսկիաճաշը կամ Ոսկիածիւն եւս կոչուեցաւ մեր նախնի մատենագիրներէն: Եփեսոսի մէջ եւս մէկ ամենափառաւոր մեհեան ունէր՝ Գրեւսիփոն ճարտարապետին ձեռքովը շինուած, որ աշխարհիս եօթն հրաշալեաց մէկը կհամարուէր: Կռատան ծախքը, որոյ երկայնութիւնը 425 ոտնաչափ էր եւ լայնութիւնը 220, Ասիոյ բոլոր ժողովուրդներէն ընծայուեցաւ եւ շինութիւնը 200 տարի քշեց: Վարսուն ոտնաչափ բարձրութեամբ 127 հատ սիւներ ունէր, որոց ծախքը նոյնքան բուով քաղաւորներ նուիրած էին:


<sup>5</sup> Արեւ կամ ըստ լատինացոց Մարսը Արամազդայ որդին էր եւ աստուած պատերազմի կհամարուէր, ուստի եւ ձեռքը նիզակ բռնած կնկարուի: Քուրմերը պահպանութիւն կանէին սորա 12 վահանին, յորոց մէկը երկնքէն ընկած էր կասէին: Այս կուռքին անունովը կոչուեցաւ Մարտ ամիսը:



<sup>6</sup> Հերսէս, որ յունարէն ու լատիներէն Մերկուրիոս կասուի՝ Արամազդ ջաստուածոյ եւ Մայա յաւերժահարսի որդին էր, դեսպան եւ բարգման կկոչուէր Ռոմիպոսի մէջ բնակող ջաստուածոց, եւ ամենայն տեղ արագութեամբ հասնելուն համար, զլխուն կամ ուսերուն վերայ քեւեր կնկարէին: Հերմեսի կուստան մէջ հերանոսներն իւրեանց գոհերու լեզուները կաչրէին, ի պատիւ ճարտարախօսութեան նորա, եւ իւրեանց տան դռներուն վերայ պատկերը կքաշէին գողերէն ու աւազակներէն պաշտպանուելու նպատակաւ:



<sup>7</sup> Արամազդ, որ յունարէն Դիոս կամ Զեւս, լատիներէն Յուլիս կամ Յուլիտէր եւ պարսկերէն Որմիզդ կասուի ծնած էր Կոռնոսէն ու Ռեայէն (Կիւրեղէ) եւ անմահից ու մահկանացուաց հայր եւ ամենայն աստուածոց վեհագոյնը կհամարուէր: Սա իւր մօրը իտրամանկութեամբը կրետէի մէջ Ամաղթեայ այժուս կաթովը մեծանայով՝ հալածեց



երկնքէն իւր հայրը եւ բոլոր աշխարհիս տիրելէն վերջը՝ իւր երկու եղբարց հետ բաժին արաւ. այսինքն Պոսիդոնին ծովու իշխանութիւնը տուաւ, Պղուտոնին դժոխաց եւ իրեն երկնից . ուր ինքն պիտի բնակէր : Պատկերը (ինչպէս մեք եւս դրած ենք) կնկարուի գաճի վերայ բազմած , մէկ ձեռովը արքունի գաւազանը բռնած եւ միւսովը կայծակներ. ոտքի տակն եւս թեւերը տարածած արծիւ կլինի :

8 Յունաց Ափրոդիտէն կամ Վեներան , որ լատիներէն Վեներա եւ հայերէն Աստղիկ կկոչուի , ըստ առասպելեաց ծովու փրփրատեսակ ալիքներէն ծնուած կհամարուի եւ գեղեցկութեանը համար ծաղկակց դժխոյ կանուանուի : Սա կնկարուի իբրեւ ամենագեղեցիկ դիցունի ծո-



վային չորքոտանեաց կարծր կեղեւէն շինուած կառքի վերայ նստած՝ որուն երկու աղանի լծուած են, եւ մեջքը կամարածեւ գօտի կապած, որ շատ գեղեցիկ կնկարագրէ Հոմերոս: Նախնի Հայկազանց կռապաշտութեան ժամանակ ամեն տարի օգոստոսի 6-ին կտօնուէր այս դիցունհայն տօնը, եւ զանազան ծաղիկներով կզարդարուէր տաճարը: Սորա կռատունը Հայաստանի Աշտիշատ քաղաքին մեջ շինուած էր, որ *Սենեակ վանագնի* կասուէր. եւ այնչափ յարգի էր Հայոց մեջ, որ ոսկի զարդերով լցուցել էին տաճարը: Դիցունհայն Ափրոդիտէ անունը Յունաց *ἄφροս*—փրփուր եւ *διαμα*—ելանեմ բառերէն շինուած է. վասն զի կասեն Ռուանոսի մէկ կաթիլ արիւնը ծովու փրփուրին մեջն ընկաւ եւ անկեց ծնաւ Ափրոդիտէն: Վարդավառի տօնի օրը, որ նախնի աստուածապաշտ հայկազոնք սովոր էին աղանիք բռուցանել իբրեւ Նոյի տապանէն ելնելու յիշատակ, կռապաշտութեան ժամանակ դիցունհայն տօնին սկսան կատարել այն հանդէսը, որ յետոյ մեր Ս. Լուսաւորիչը Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին փոխարկեց:

<sup>9</sup> *Կռունու*, որ լատիներէն *Սատուրնոս* եւ սլարսկերէն *Զրուան* կասուէր, Ռարանոսի եւ Եստայ, այսինքն երկնի եւ երկրի որդին էր եւ առաջին ջատուածը կհամարուի ամենայն կռոց մեջ. ուստի եւ ժամանակ կրարգմանուի:



<sup>10</sup> *Ապոդոս*, որ լատիներէն *Փերսու* եւ սլարսկերէն *Միհր* կասուէր, Դիոսի որդին էր, եւ արեգական՝ բանաստեղծութեան ու երաժշտութեան աստուած կհամարուէր: Սորա անունովը զրեթէ ամենայն տեղ կռատուն շինուած էր, որոց մեջ աւելի հռչակաւորն էր *Դեչու* կղզւոյն մեջ կանգնածը: Մեր նախնեաց ժամանակ Արմաւիր քաղաքին մեջն էր

սորա պղնձե ձուլուած (քաւիւռած) ոսկեգօծ արձանը՝ որ արեւմտեան պատերազմին մեջ Արտաշէս առաջինը՝ Լիւդացոց Կրիստոս քաղաքին յաղթելէն վերջը՝ բերած էր Հայաստան :



ՕՐ. — Օր կասուի արեգական մէկ ելնելէն մինչեւ երկրորդ ելնելն անցած միջոցը, որ երկու գլխաւոր մասն կբաժանուի, այսինքն ՅՈՐԵԿ եւ ԳԻՇԵՐ. — Յորեկն է օրուան լուսաւոր մասը, որ արեւուն ծագելէն կսկսի եւ մինչեւ մտնելը կտեւէ. իսկ գիշերը օրուան խաւար մասը, որ արեւուն մտնելէն կսկսի եւ մինչեւ ելնելը կտեւէ : — Օրուան այս երկու մասունքը մէկ-մէկու հաւասար չեն. վասն զի ձմեռնային արեւադարձէն սկսեալ մինչեւ անառնային արեւադարձը՝ ցորեկը հետագհետէ կերկրննայ եւ գիշերը կկարճանայ. իսկ ընդհակառակն ամառնային արեւադարձէն սկսեալ մինչեւ ձմեռնային արեւադարձը՝ ցորեկը հետագհետէ կկարճանայ եւ գիշերը կերկրննայ : Արեգակը երբ այս երկու արեւագարձերուն ճիշդ մէջտեղը, այսինքն գիշերահաւասարակից կէտը հասնի, գիշեր ու ցորեկ հաւասար կլինին :

ՏԱՐԵԳԻՐ. — Տարեգիր կասուի այն տառը, որով տարւոյն սօսները կգտնուի : Մեր հայկական 35 (Ս.—Փ) տառերը՝ զատկի երեսունեւհինգամեայ օրերու շար-

Ժականութեան վերայ դասաւորելով, ամէն տարւոյ զատկի ամսաթուոյն հաշուէն կգտնուի տարեգիրը. եւ որովհետեւ զատկը այն երեսունեւհինգամեայ փոփոխութենէն վերջը նորէն իւր առաջին թուոյն, այսինքն մարտի 22-ին վերայ կդառնայ. պէտք է հաշուել որ երբ զատկի օրը այս ինչ քուին մարտի 22-ին ընկնի, այն թուոյն տարեգիրը Ա. տառը կլինի, եթէ 23-ին՝ Բ, 24-ին Գ եւ այլն, եւ այսպէս զատկի ամսաթիւերը տարեգրաց հետ յառաջ երթալով կհասնին մինչեւ ապրիլի 25-ը, որոյ տարեգիրն է Փ տառը. եւ այն օրէն, (ապր. 25) աւելի առաջ չանցնիր զատկի տօնը, որով եւ տարեգիրը դարձեալ Ա.-էն կսկսի:—Օրինակ. այս տարի զատկի օրը Ապրիլի 20-ին ընկնելով՝ տարեգիրն եւս Վ տառն կլինի. վասն զի մարտի 22-էն հաշուելով մեր այբուբենի 30-րդ գիրը Վ տառն է:

**ԵՕԹՆԵՐԵԱԿ** — Եօթներեակ կկոչուի այն տառը որ ամբողջ տարւոյ մէջ եղած եօթներեակները կամ կիրակիները կցուցանէ, եւ այս պատճառաւ կիրակագիր եւս կասուի: Եօթներեակը գտնելու համար պէտք է մեր (Հայոց) թուականէն 1153 թիւը հանել եւ մնացածը բաժանել 28-ի վերայ, եւ յետոյ քանորդը թողելով՝ առնուլ աւելցած թիւը, եւ այնու մանել հետագայ եօթներեկաց աղիւսակին մէջ, եւ ուր վերջանայ՝ այն տառը կլինի եօթներեակ կամ կիրակագիր, որով նոյն տարւոյ մէջ եղած կիրակիները, երկուշաբթիները, երեքշաբթիներն ու միւս օրերը գիւրապէս կյայտնուին:—Օրինակ. եթէ տարւոյս Հայոց թուականէն, այսինքն 1318-էն հանեմք 1153-ը՝ կմնայ 165. եւ եթէ այս 165-ը բաժանեմք 28-ով, քանորդը կլինի 5 եւ մնացածը 25. որով եօթներեկաց աղիւսակիս առաջին խորանէն 1, 2, 3, 4 եւ այլն համարելով յառաջ երթամք, 25-երորդ խորանին մէջ Գ տառը կգտնեմք, որ է տարւոյս եօթներեակը:

ԱՂԻՍԱԿ ԵՕԹՆԵՐԵԿԱՑ.

Ա	Բ	Գ	ԴԵ	Զ	Է	Ա
ԲԳ	Դ	Ե	Զ	ԷԱ	Բ	Գ
Դ	ԵԶ	Է	Ա	Բ	ԳԴ	Ե
Զ	Է	ԱԲ	Գ	Դ	Ե	ԶԷ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Այս աղիսակի մեջ երկու տառով հանդիպած եօթներեկի տարին նահանջ կլինի միշտ :

ՎԵՐԱԴԻՐ. — Վերադիրը արեգական եւ լուսնոյ տարեկան շրջանի տարբերութիւնն է, որ տասնեւմէկ օր կհամարուի. վասն զի արեւու տարին լուսնոյ տարիէն 11 օր աւելի է. ուստի առաջին տարւոյ վերագիրը 11 է, երկրորդինը՝ 22, երրորդինը՝ 33, յորմէ 30-ը հանելով կմնայ 3, չորրորդինը՝ 14, հինգերորդինը 25 եւ այլն : — Վերագիրը գիւրին կերպով գտնելու համար մեր ազգային թուականէն պէտք է հանել 1162, եւ մնացածը բաժանել 19-ով, եւ ինչ որ աւելնայ՝ կարգաւ նայել հետագայ աղիսակիս մէջ, եւ որ խորանին մէջ յաւելեալ թիւը վերջանայ, այն է տարւոյն վերագիրը : — Օրինակ. եթէ տարոյս Հայոց 1318 թուականէն հանեմք 1162-ը, կմնայ 156, որ եթէ բաժանեմք 19-ով, քանորդը կլինի 7 եւ մնացորդը 23 : Բայց որովհետեւ վերագրաց խորանները միայն 19 են եւ մնացորդը 4-ով աւելի է, ուստի պէտք է 19 հանել 23-էն եւ մնացած 4 թիւը աղիսակին (էջ 94) ծայրէն սկսելով՝ մէկ մէկ թիւ տալ իւրաքանչիւր խորանին եւ հասնել մինչեւ չորրորդ խորանը, յորում Իէ=27 թիւը կգտնեմք, որ է տարւոյս վերագիրը :

ԱՂԻՒՍԱԿ ՎԵՐԱԴՐԱՅ.

ԻԴ	Ն	ԺԶ	ԻԷ	Ը	ԺԹ	Լ	ԺԱ	ԻԲ	Գ
ԺԴ	ԻԵ	Զ	ԺԷ	ԻԸ	Թ	ԻԱ	Բ	ԺԳ	—

**ԱՐԵՒՈՒ ՇՐՋԱՆ.** — Արեւու շրջան կամ Շրջան արեգակնային կոչուածը 28 տարուան միջոց է, որոց վերջանալէն յետոյ՝ նոյն թուերուն կդառնան, այսինքն կիրակիներն ու շաբաթուան օրերը նոյն թուերովը կամ տառերովը կնշանակուին, ինչ որ առաջ կգրուէին: — Վերը գրուած եօթներեկաց աղիւսակէն (էջ 125) յայտնի է արդէն որ արեգական այս 28-ամեայ շրջանը՝ եօթնական թուով չորս կարգի եւ 28 խորանի վերայ բաժանելով, 28 տարիէն առաջ չէ կարող անդրադառնալ:

**ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐԵԱԿ.** — Հատինացիք շրջան յուսնի կանուանեն այս իննեւտասնամեայ միջոցին, որոց վերջանալուն պէս լուսնի նորմունքն ու լրմունքը դարձեալ նոյն օրէն կսկսին, թէ եւ ոչ նոյն ժամէն ու վայրկենէն: Իննեւտասներեակը գտնելու համար մեր ազգային թուականէն 1142-ը հանելէն յետոյ՝ մնացածը 19 բաժանելու է, աւելցած թիւը ինկեսասնեւեակ կլինի տարւոյն:—Օրինակ. տարւոյս Հայոց 1318 թուականէն եթէ հանեմք 1142 կմնայ 176, որ այս եւս բաժանելով 19-ի վերայ, քանորդը կլինի 9 եւ մնացորդը 5, որ տարւոյս իննեւտասներեակն է: Եւ որպէս զի ստոյգ կերպով գիտնամք թէ անսխալ է մեր այս հաշիւը եւ կամ քանիերորդ լուսնի շրջանն է այժմ, պէտք է աշխարհիս ստեղծման թուականը, այսինքն 7377-ը բաժանեմք 19-ի վերայ, որոյ քանորդը կլինի 388 եւ մնացորդը 5: Քանորդը կցուցընէ որ մինչեւ 1869 թուականը 388 լուսնի շրջանն անցած է եւ 389-երորդն


սկսած է. իսկ մնացորդ 5 թիւը կցուցընէ որ 1869 թուականին հինգերորդ տարին է այժմու լուսնի շրջանին: — Այս լուսնի շրջանին գանողն ու կարգողն եղաւ Մեղոն աթենացին Քրիստոսէ 433 տարի առաջ, տեսնելով որ այս ինչ տարւոյ Յունուարի 1-ին եղած լուսնի ծնունդը, տասնեւինը տարիէն վերջը դարձեալ նոյն օրը կհանդիպի: Կուսնի եւ արեւու շրջանները մէկմէկու հետ բազմապատկելով 532 մեծ շրջանը կարտագրեն, վասն զի այս երկու շրջանները ի միասին սկսելով՝ 532 տարիէն յառաջ երբէք մէկմէկու չեն հանդիպիր: — Օրինակ. մեք արդէն վերը տեսանք որ շրջան արեգական կասուի 28 տարուան միջոցը, իսկ շրջան լուսնի 19 տարուայ միջոց. արդ եթէ այս երկու այլ եւ այլ թիւերը բազմապատկեմք  $28 \times 19$ , արտագրեալը կլինի 532, որ մեծ շրջան, շրջան հինգհարիւրեկի կամ հինգհարիւրեակ կասուի, եւ որոյ վերայ հիմնուած է նաեւ մեր տօնացոյցը. վասն զի 532 տարիէն յետոյ, դարձեալ նոյն օրերը, տօներն ու ամսաթուերը կուգան, ինչ որ 532 տարի առաջ էին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Մեծ շրջան կամ հինգհարիւրեակը յօրինեց նախ՝ Վիկտորիոս ակուիտանացին Քրիստոսի 463 բուականին, եւ ապա կարգաւորեց աղեքսանդրացի Էսս անունով աստղաբաշխը:

ՈՍԿԵԹԻԻ. — Աթենացիք ոսկերիւ անուանեցին լուսնի շրջանը. վասն զի նոքա իւրեանց աստղաբաշխի, այսինքն Մեղոնի նոր ու երեւելի գիւտին վերայ զարմանալով՝ քաղաքին հրապարակին մէջ մէկ մարմարիօնէ կոթող կանգնեցին, եւ վերան իւրաքանչիւր տարւոյ լուսնի շրջանին թիւն սկսան օսկիէ գլխատառով գրել, եւ այս պատճառաւ ոսկերիւ ասուեցաւ, որ մինչեւ ցայժմ գործածական է լատինականաց մէջ:

ԹՈՒԱԿԱՆ.— Թուականը մէկ այլ եւ այլ հաշիւ է իւր պէսպէս սկսուածքովը, ինչպէս Հրէիցը, որ աշխարհիս ստեղծմանէն կսկսի. Յունացը, որ օղիմպիական իազի սկիզբէն կհամրուի. Սելեւկիացւոցը, որ Մեծին Աղեքսանդրի մահուանէն վերջը կսկսի. Հռովմայեցւոցը, — Հռովմ քաղաքի շինութենէն (753). Քրիստոնէիցը, — Քրիստոսի ծննդենէն. մեր ազգային (մեծ) թուականը, — նոր տումարի նորոգութենէն, որ Քրիստոսի 552 թուականին Եղիվարդեցի Մովսէս Բ կաթողիկոսը կարգի դրաւ. (փոքր կամ) Ազարիայի թուականը, — նոր Զուղայի շինութենէն (1615). Իսկ Տաճկացը՝ իւրեանց ամիրապետէն (Մէհմէմէտէն), որ Քրիստոսի 622 թուականէն կսկսի: Ուստի ներկայ 1869 տարւոյս սկիզբները Հրէից թուականն է 5629, Ողիմպիականը կամ հին Յունաց թուականը 2645, Սելեւկիացւոցը—2176, Հռովմայեցւոցը—2622, մեր Ազգային (մեծ) թուականը 1318, Ազարիայի (փոքր) թուականը 254, եւ Տաճկացը 1285:

<sup>1</sup> 1603-ին Օսմանեանց եւ Պարսից մէջ պատերազմ բացուելով՝ Պարսից Շահապլաս քաղաքորը 14 հազար տուն գերի տարաւ. Հայաստանէն ի Պարսկաստան, որոց մէջ էին Դաւիթ եւ Մելքիսեդեկ կաթողիկոսները, եւ Ասպահանայ հանդեպը բնակեցուց, որ մինչեւ 1615 բուականը հետզհետեւ շինուելով ու քաղաք ձեւանալով՝ նոր Զուղա անուանեցաւ: Այն ժամանակները, իբրեւ երեսնի անցք Հայոց ի Պարսկաստան, Ազարիա վարդապետը վերոյիշեալ կաթողիկոսաց հրամանաւր նոր անուաններ տալով մեր ամիսներուն՝ Հայոց փոքր բուականը սահմանեց առանց տումարական նշանաւոր փոփոխութեանց, որ եւ երեսնի սկիզբն չունենալուն համար՝ աւելորդ ու միայն նոր Զուղայեցւոց վերաբերեալ բուական է:



## ՔԱՂՈՒՄԾ ԿԱՆՈՆԱՅ

Հ Ե Ռ Ս Գ Ր Ս Կ Ա Ն Թ Ղ Թ Ս Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն Յ

1. Ամեն մարդ իրաւունք ունի հեռագրական հաղորդակցութեամբ քղրակցութիւն անելու :

2. Հեռագրատանց մեջ ամեն օր, որպէս նաեւ կիրակի եւ տօն օրերը հեռագրեր կրնդ ունուիլն՝ իւրեանց համար սահմանեալ ժամանակին համաձայն :

3. Հեռագրաց բովանդակութիւնը գաղտնի պահելու համար՝ հեռագրական տեսչութիւնը ամեն կողմանէ զգուշութիւն պիտի անէ :

4. Գործ չունեցող անձանց հրաման չկայ հեռագրաց սենեակները մտնել առանց մասնաւոր բոյլտուութեան :

5. Հեռագրերը բանաքով պիտի գրուին որոշ տառերով, հասկանալի ոճով եւ առանց համառօտութեան ու փակագծի :

6. Հեռագրին սկիզբը ընդունողին մանրամասն հասցեն պիտի գրուի, յետոյ բովանդակութիւնը եւ վերջը յուղարկողին ստորագրութիւնը : Երե հեռագիրը մասնաւոր անձի կյուղարկուի, որ մեծ քաղաքի մեջ կրնակի, պետք է նաեւ բնակութեան փողոցն ու տան բուահամարը ղնել, որպէս զի առանց դժուարութեան գտնուի եւ իրեն ձեռքը հասցուի :

7. Թե որ հասցեն բերի եւ սխալ եղածին պատճառաւ հեռագիրը կամ բոլորովին չհասցուի եւ կամ ուրիշ անձի տրուի, հեռագրական տեսչութիւնը պատասխանատու չէ :

8. Քսան բառէ բաղկացեալ հեռագրի վճարքը կհաշուի յուղարկուած տեղէն մինչեւ նշանակեալ տեղն եղած հեռագրութեանը նայելով : Քսանէն պակաս բառ ունեցող հեռագրին վճարքը՝ 20 բառ ունեցողի չափ է. իսկ քսանէն աւելի բառ ունեցողին՝ իւրաքանչիւր տասը բառին քսանին համար նշանակուած գնոյն կէսը կառնուի :

9. Իւրաքանչիւր բառ որ 7 վանկէ պակաս երկայնութիւն ունի, մեկ բառ կհամարուի. իսկ երե 7 վանկէն աւելի լինի՝ առանձին բառ կհամարուի : Քերականական կանոններով բարդուած եւ միատեղ գրուած բառը մեկ բառ կհամարուի, երե 7-էն աւելի վանկ չունի : Իւրաքանչիւր զիր կամ բուանշան որ առանձին կեցած է, նախդիրներն եւ ապարարցով զատուած բառերը առանձին բառի տեղ կհաշուին :

Այն բառերն որ միութեան գծով կապուած են, առանձին բառեր կրհամարուին: Հինգ բուանշանով ձեւացած բիւր մեկ բառ կհաշուի. իսկ աւելին առանձին բառի տեղ կառնուի: Առողջանութեան եւ ուղղագրութեան նշանները չեն ընդունուիր, բաց ի բուանշաններու եւ կոտորակներու մեջ եղածներէն, ուր իւրաքանչիւր նշան զատ զնր կհամարուի:

10. Ելեալ եւ մտեալ նամակաց բնագրերը յուղարկողաց կամ ընդունողաց կտրուի. երբ պահանջողները հեռագրաց կայարանէն տրուած ընդունելութեան կամ հասցրնելուն տոմսակները հեռագրատուն ներկայացրնեն: Այս պահանջմունքն ուղղակի հեռագրատան գլխաւորին կամ նորա փոխանորդին ձեռքովը պէտք է անել:

11. Այն հեռագիրներու համար որ մի եւ նոյն քաղաք բնակող այլ եւ այլ անձանց ուղղուած են, որոշեալ գնէն զատ, իւրաքանչիւր պատճենին համար, որ առանձին հասցեով կյուղարկուի, 19 կոպեկ կհատուցուի:

12. Հեռագրական կայարաններէն հեռու տեղ յուղարկուած հեռագրոց համար կառնուի. քըրատարի ձեռքով հասարակ նամակի պէս յուղարկուածին համար՝ 25 կոպեկ, մասնաւոր յուղարկուածին համար՝ մինչեւ 14 վերստ, 75 կոպեկ. իսկ երեւելի լինի հեռագրութիւնը, ըստ այնմ եւս վճարքը կառնուի, կամ աւելորդը հեռագիրը տուողին կղարձուի, եւ կամ նա պարտական կլինի պակասը հատուցանել:

13. Այն հեռագրոյն համար որ նամակատան վերայ ուղղուած է, որպէս զի ընդունողն այն տեղէն առնու գայն, որոշեալ գնէն զատ կրհատուցուի 25 կոպեկ:

14. Որոշեալ բուով պատասխանին վճարքը կարելի է հեռագիրը տուողէն առնուլ. բայց երեւ պատասխանին մեջ առաջուց վճարուածէն աւելի բառ լինի, այն ժամանակ իրր զատ հեռագիր կհամարուի, եւ բոյոր մեջը պարտւնակած բառերուն համար վճարք կառնուի: Մեկ վճարուած հեռագրի պատասխանին համար ուր որ նշանակուած է. երեւ պատասխանը վճարողը մինչեւ 10 օր չընդունէ գայն, եւ կամ իւր հատուցածէն աւելի բառերով ընդունէ, այն ժամանակ պատասխանին համար հատուցած փողն իրեն կղարձուի, եւ կամ կպահանջէ գայն՝ առաջին հեռագրին տրուած ժամանակին տասներորդ օրէն սկսեալ մինչեւ 15-երորդ օրն եղած հինգ օրուան միջոցը:

15. Հեռագիր ուղարկողը կարող է պահանջել. Ա, թէ երբ հեռագիրը հասաւ ընդունողին ձեռքը, եւ սորա համար ընդունած պատասխանին բառերուն բուովը վճարք պիտի տայ. եւ Բ, հեռագրին ստուգումը (проверка), որոյ համար եւս ամբողջ հեռագրին զինը պիտի հատուցանէ:

16. Երեւ հեռագրի տրուած ժամանակը սխալմամբ պակաս վճարք առնուած է, յուղարկողը պարտական է պակասը լեցրնել. իսկ երեւ աւելի առնուած է, աւելորդը յուղարկողին կղարձուի:

17. Հեռագիր տուողը, երբ տակաւին սկսած ջեն հեռագիրը գարնել, կարող է 19 կուպէկ հատուցանելով՝ հեռագրին առաքումն արգելել, եւ առաջուան հատուցած փողը յետ ստանալ. իսկ երբ հեռագիրն արդէն սկսած է յուղարկուիլ, վճարքը յետ ջղարձուիլ :

18. Յուղարկողը կարող է պահանջել որ իւր հեռագիրը ջարուի այն անձին, որոյ ուղղուած է. սորա համար նոր հեռագիր կ'ուղարկուի միւս քաղաքին հեռագրական կայարանը, որոյ վճարքը յուղարկողը պիտի հատուցանէ :

19. Ընդունուած հեռագրերը առանց վճարքի կ'հասցուին այն անձանց ձեռքը՝ որոց ուղղուած են :

20. Հատուցուած դրամն յետ պահանջելը, ինչպէս նաեւ ամեն զանգատանաց խնդրագրերը, Պետերբուրգի հեռագրական կառավարութեանը կտրուին. եւ այսպիսի խնդրագրեր տալու վեց ամիս ժամանակ նշանակուած է, հեռագրին տրուած օրէն հաշուելով :

## ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՅՍԱԿ

ՆԵՐՔԻՆ ԹՂԹԱԿՅՈՒԹԵԱՆՅ ՅԱՂԱԳՍ ԿԱՅԱՐԱՆԻՆ

ՈՐ Ի ԹԷՆՂՈՂՈՍԻԱ.


ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՅ.	Գինք 20 բառից		ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՅ.	Գինք 20 բառից.	
	ը.	կ.		ը.	կ.
Արօ . . . . .	3	—	Բաքու . . . . .	2	—
Ագրիման . . . . .	4	—	Բելիյ Կլիւջ . . . . .	2	—
Աժաերխան . . . . .	2	—	Բելոգերսկ . . . . .	3	—
Ալեքսանդրիա . . . . .	3	—	Բելոստոկ . . . . .	2	—
Ալեքսանդրոպոլ . . . . .	2	—	Բելց . . . . .	2	—
Ալեքսանդրովսկոյէ . . . . .	2	—	Բենդերիյ . . . . .	1	—
Ախալցխա . . . . .	2	—	Բերդեանսկ . . . . .	1	—
Աղղաշ . . . . .	2	—	Բերդիչեա . . . . .	2	—
Անդրեեվ . . . . .	2	—	Բերիսլաւ . . . . .	1	—
Աջինսկ . . . . .	6	—	Բերնաու . . . . .	5	—
Արխանգելսկ . . . . .	3	—	Բերներորգ . . . . .	3	—
Բալտա . . . . .	1	—	Բիրսկ . . . . .	3	—
Բախմուտ . . . . .	1	—	Բիրիասա . . . . .	6	—

ԱՆՈՒԱՆՔԻ ԿԱՅԱՐԱՆԱՑ.	Գինք 20 բառից.		ԱՆՈՒԱՆՔԻ ԿԱՅԱՐԱՆԱՑ.	Գինք 20 բառից.	
	ը.	կ.		ը.	կ.
Բոքրույսկ . . . . .	2	—	Ելայսկայեա. . . . .	5	—
Բուլոզոյե . . . . .	2	—	Ելեց . . . . .	2	—
Բորգօ . . . . .	3	—	Ելիսաւետոզրադ . . . . .	1	—
Բորիսոզլեբսկ. . . . .	2	—	Ելիսաւետսոյոլ . . . . .	2	—
Բորշոմ . . . . .	2	—	Էկատերինբուրգ . . . . .	3	—
Բուզուլուկ . . . . .	2	—	Էկատերինոզար . . . . .	1	—
Բրագեշտադ. . . . .	3	—	Էկատերինոսլա. . . . .	1	—
Բրեստլիսովսկ. . . . .	2	—	Եյսկ . . . . .	1	—
Բրեանսկ. . . . .	2	—	Ենոտայեվսկ . . . . .	2	—
Գազենսլոտ . . . . .	2	—	Եռխնով . . . . .	2	—
Գամլե Կարլեքի. . . . .	3	—	Երեւան . . . . .	2	—
Գապսալ . . . . .	3	—	Եփրեմով . . . . .	2	—
Գատչինօ . . . . .	2	—	Զամոսկ . . . . .	2	—
Գելսինգֆորս . . . . .	3	—	Զասլա. . . . .	2	—
Գեորգիեվսկ. . . . .	2	—	Էկնես. . . . .	3	—
Գոլդինգեն . . . . .	2	—	Թարարբունար. . . . .	1	—
Գոմել . . . . .	2	—	Թաման . . . . .	—	50
Գորի . . . . .	2	—	Թամրով . . . . .	2	—
Գուդաուր . . . . .	2	—	Թամմերֆորս . . . . .	3	—
Գուտովօ. . . . .	5	—	Թայզան . . . . .	1	—
Գրանիցա . . . . .	2	—	Թավաստզուս . . . . .	3	—
Գրոզնօ . . . . .	2	—	Թաուրոզեն . . . . .	2	—
Գեբեսի . . . . .	3	—	Թեյշի . . . . .	2	—
Գելիժան. . . . .	2	—	Թեմիրխանշուրա . . . . .	2	—
Գելչադար . . . . .	2	—	Թեմրիս.բ. . . . .	1	—
Գերբենա . . . . .	2	—	Թիխվին . . . . .	2	—
Գերսլոտ . . . . .	2	—	Թիրասսոլ . . . . .	1	—
Գժուլֆա (Ջուդա) . . . . .	2	—	Թիւմեն . . . . .	4	—
Գինարուրգ . . . . .	2	—	Թիւքայինսկ . . . . .	5	—
Գուրբելն . . . . .	2	—	Թիֆլիզ . . . . .	2	—
Գուրնօ . . . . .	2	—	Թորոյսկ . . . . .	4	—
Գուրովսկիյ . . . . .	2	—	Թոմսկ . . . . .	5	—
Գուրրովինօ . . . . .	5	—	Թորնեօ . . . . .	3	—
Գուշեք . . . . .	2	—	Թուլա . . . . .	2	—
Գրուզկենիկի . . . . .	2	—	Թուլինսկայեա. . . . .	6	—
Եալթա . . . . .	—	50	Թուլչին . . . . .	2	—
Եակորշտադ. . . . .	3	—	Թվեր (Тверь) . . . . .	2	—
Եարոսլաւ . . . . .	2	—	Ժիտոմիր. . . . .	2	—
Եգորլիկ . . . . .	1	—	Իշխմ . . . . .	4	—
Ելարուգա . . . . .	2	—	Իրրիտ . . . . .	4	—

ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՑ.	Գինք 20 բարից.		ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՑ.	Գինք 20 բարից.	
	ը.	կ.		ը.	կ.
Իրկուտակ . . . . .	6	—	Կողով . . . . .	2	—
Իւանզորող . . . . .	2	—	Կոյրվան . . . . .	5	—
Լենջիցա . . . . .	2	—	Կոյրմնա . . . . .	2	—
Լիբավա . . . . .	2	—	Կոնստանդինովսկ . . . . .	1	—
Լիվադիա . . . . .	—	50	Կոջոռ . . . . .	2	—
Լիպեցկ . . . . .	2	—	Կոստրոմա . . . . .	2	—
Լիպնո . . . . .	2	—	Կովեչ . . . . .	2	—
Լիսինո . . . . .	2	—	Կովնո . . . . .	2	—
Լիսկովո . . . . .	2	—	Կուլսկայեա . . . . .	6	—
Լիւբիչ . . . . .	2	—	Կունզոբ . . . . .	3	—
Լիւբլին . . . . .	2	—	Կուոպիօ . . . . .	3	—
Լոդզ . . . . .	2	—	Կուպա . . . . .	2	—
Լոմժա . . . . .	2	—	Կուրսկ . . . . .	2	—
Լովիգա . . . . .	3	—	Կրասնոեարսկ . . . . .	6	—
Լուգա . . . . .	2	—	Կրասնոստով . . . . .	2	—
Լուցկ . . . . .	2	—	Կրասնոե սելօ . . . . .	3	—
Խարկով . . . . .	1	—	Կրեմինեց . . . . .	2	—
Խերսոն . . . . .	1	—	Կրեմենչուկ . . . . .	1	—
Խոլմ . . . . .	2	—	Կրոնշտադ . . . . .	3	—
Խոլմոզորի . . . . .	3	—	Մալմիժ . . . . .	2	—
Խոտին (Շօքին) . . . . .	2	—	Մալովիշերա . . . . .	2	—
Խվալինսկ . . . . .	2	—	Մարիինսկ . . . . .	6	—
Կազան կամ Խազան . . . . .	2	—	Մարիուպոլ . . . . .	1	—
Կաժիլ . . . . .	3	—	Մելիտոպոլ . . . . .	1	—
Կալաչ . . . . .	2	—	Մենզելինսկ . . . . .	3	—
Կալիշ . . . . .	2	—	Մինսկ . . . . .	2	—
Կալուգա . . . . .	2	—	Միշիխա . . . . .	6	—
Կամենից Պոդոլսկ . . . . .	2	—	Միտավա . . . . .	2	—
Կամրշին . . . . .	2	—	Մյավա . . . . .	2	—
Կամրշլով . . . . .	4	—	Մոնիլե . . . . .	2	—
Կալինսկ . . . . .	5	—	Մոսկուա . . . . .	2	—
Կանսկ . . . . .	6	—	Մորշանսկ . . . . .	2	—
Կարաչե . . . . .	2	—	Մոսկովսկայեա . . . . .	1	—
Կարգոպոլ . . . . .	3	—	Մուրոմ . . . . .	2	—
Կելցե . . . . .	2	—	Մցինսկ . . . . .	2	—
Կերչ . . . . .	—	50	Յոենսու (Ioency) . . . . .	3	—
Կիեւ . . . . .	2	—	Նազայեվսկայեա . . . . .	2	—
Կինեշմա . . . . .	2	—	Նարվա . . . . .	2	—
Կիրասնով . . . . .	2	—	Նախիջեւան (հին) . . . . .	2	—
Կլեմովսկայեա . . . . .	3	—	Ներչինսկ . . . . .	6	—

ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՅ.	Գինք 20 բառից.		ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՅ.	Գինք 20 բառից.	
	ը.	կ.		ը.	կ.
Նիժնեչիրսկայեա . . . . .	2	—	Պերեկոպ . . . . .	4	—
Նիժնեուդինսկ . . . . .	6	—	Պերեեսայա . . . . .	2	—
Նիժնի Նովգորոդ . . . . .	2	—	Պերմ . . . . .	3	—
Նիկոլայեվ . . . . .	4	—	Պերնով . . . . .	2	—
Նիկոլայեվսկ (Կիրիլով).	2	—	Պինսկ . . . . .	2	—
Նիկոլայշտադ . . . . .	3	—	Պյոցկ . . . . .	2	—
Նիշտադ . . . . .	3	—	Պոլանգեն . . . . .	2	—
Նոյինսկ . . . . .	3	—	Պոլոցկ . . . . .	2	—
Նովայեա Լադոգա . . . . .	3	—	Պոլտավա . . . . .	1	—
Նովգորոդ . . . . .	2	—	Պոնեվեժ . . . . .	2	—
Նովոգեորգևսկ . . . . .	2	—	Պոսոլսկ . . . . .	6	—
Նովոգայիմկա . . . . .	4	—	Պոտի . . . . .	2	—
Նովոխոպերսկ . . . . .	2	—	Պոլտոնսկ . . . . .	2	—
Նովոչերկասկ . . . . .	4	—	Պսկով . . . . .	2	—
Նովոսելցի . . . . .	2	—	Պրոխյադնայեա . . . . .	2	—
Նուխի կամ Նուխա . . . . .	2	—	Պրոսկուրով . . . . .	2	—
Շադրինսկ . . . . .	4	—	Ռադզիվիլով . . . . .	2	—
Շամախի . . . . .	2	—	Ռադոմ . . . . .	2	—
Շավլի . . . . .	2	—	Ռաումո . . . . .	3	—
Շլիսսելբուրգ . . . . .	3	—	Ռեազան . . . . .	2	—
Շույա . . . . .	2	—	Ռեաժսկ . . . . .	2	—
Ռայկարոբ . . . . .	3	—	Ռեմկ . . . . .	3	—
Ռայսոն . . . . .	2	—	Ռեժիցա . . . . .	2	—
Ռակիրսկայեա . . . . .	6	—	Ռժես . . . . .	2	—
Ռաման . . . . .	2	—	Ռիբինսկ . . . . .	2	—
Ռարաչսկ . . . . .	2	—	Ռիգա . . . . .	2	—
Ռարժում . . . . .	2	—	Ռոսլայա . . . . .	2	—
Ռաֆա . . . . .	3	—	Ռոսսինի . . . . .	2	—
Չերոկսարի . . . . .	2	—	Ռոստով (Գոնի վերայ) . . . . .	4	—
Չերեմխովսկ . . . . .	6	—	Ռոստով (Եարոսլա) . . . . .	2	—
Չերեպովեց . . . . .	2	—	Ռովնո . . . . .	2	—
Չերնիգով . . . . .	2	—	Սամարա . . . . .	2	—
Չիտա . . . . .	6	—	Սարատով . . . . .	2	—
Չուգոսեվ . . . . .	4	—	Սեդլցե . . . . .	2	—
Չորնի Եառ . . . . .	2	—	Սելենգինսկ . . . . .	6	—
Պեատիգորսկ . . . . .	2	—	Սերգիևսկ . . . . .	2	—
Պենզա . . . . .	2	—	Սերպուխով . . . . .	2	—
Պետրոգավոդսկ . . . . .	3	—	Սեաստոպոլ . . . . .	4	—
Պետրովկա . . . . .	2	—	Սիգրան . . . . .	2	—
Պետրովսկ . . . . .	2	—	Սիմբիրսկ . . . . .	2	—

ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՑ.	Գինք 20 բառից.		ԱՆՈՒԱՆՔ ԿԱՅԱՐԱՆԱՑ.	Գինք 20 բառից.	
	ը.	կ.		ը.	կ.
Սիմֆերոպոլ . . . . .	—	50	Վիլկոմիր . . . . .	2	—
Սիլսկ . . . . .	3	—	Վիլմանստրադ . . . . .	3	—
Սինեավկա . . . . .	2	—	Վիլնո . . . . .	2	—
Սլուցկ . . . . .	2	—	Վինդավա . . . . .	3	—
Սլոնիմ . . . . .	2	—	Վիտերսկ . . . . .	2	—
Սկոպին . . . . .	2	—	Վիտեգրա . . . . .	3	—
Սկուլեանի . . . . .	2	—	Վլադիկովկաս . . . . .	2	—
Սոնախ . . . . .	2	—	Վլադիմիր . . . . .	2	—
Սմոլենսկ . . . . .	2	—	Վլադիմիր (Վոլինսկ) . . . . .	2	—
Սնեժնայեա . . . . .	6	—	Վոլկովիսկ . . . . .	2	—
Սորոկի . . . . .	2	—	Վոլմար . . . . .	2	—
Սուվալի . . . . .	2	—	Վոլոգդա . . . . .	2	—
Սուրամ . . . . .	2	—	Վորոնեժ . . . . .	2	—
Ս. Միխել . . . . .	3	—	Վոյսկ . . . . .	2	—
Ս. Պետրբուրգ . . . . .	3	—	Յարիցին . . . . .	2	—
Ստարայեա Ռուսաս . . . . .	2	—	Յարսկոե Սելո . . . . .	2	—
Ստարիյ Օսկոլ . . . . .	2	—	Յիմլեանսկայեա . . . . .	2	—
Ստարիցա . . . . .	2	—			
Ստաւրոպոլ . . . . .	1	—	Քիշնեա . . . . .	1	—
Ստերլիտամսկ . . . . .	3	—	Քուրայիս . . . . .	2	—
Ստոպնիցա . . . . .	2	—	Քրիստինեշտադ . . . . .	3	—
Ստրեռնոսկայեա . . . . .	6	—			
Ստրելնա . . . . .	3	—	Օդեսա . . . . .	1	—
Վալկ . . . . .	2	—	Օխանակ . . . . .	3	—
Վասիլսուրսկ . . . . .	3	—	Օմսկ . . . . .	5	—
Վարկաուզ . . . . .	3	—	Օպատով . . . . .	2	—
Վարշա . . . . .	2	—	Օրանիենրաում . . . . .	3	—
Վեազմա . . . . .	2	—	Օրել . . . . .	2	—
Վեատկա . . . . .	3	—	Օրենբուրգ . . . . .	2	—
Վեզնեբերգ . . . . .	3	—	Օրհեյ . . . . .	2	—
Վենդեն . . . . .	2	—	Օրայիրա . . . . .	2	—
Վերժբույովո . . . . .	2	—	Օրեկ . . . . .	3	—
Վերխնեուդինսկ . . . . .	6	—			
Վերխնեօզերնայեա . . . . .	3	—	Ֆեդովսկայեա . . . . .	3	—
Վիբորգ . . . . .	3	—	Ֆելլին . . . . .	2	—
			Ֆրիդրիխսգամ . . . . .	3	—



ՏԱՐԻՈՅՍ ՌՈՒՍԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՅ ԸՆԹԱՅՔԸ

Ապրիլի 29-էն մինչեւ Սեպտեմբերի 27.

ԽՐԻՄՈՒ ԳԻԾԸ ՇԱՖԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ.

Կ Ե Լ Ն Ի

Օղեսսայէն Եջ. եւ Գշ. 7 ժ. առ.առ.  
Եապատորիայէն Ուր. եւ Գշ. կէսօր.  
Սեւաստոպոլէն Ուր. եւ Գշ. կէսօր.  
Եալքայէն Ուր. եւ Գշ. 8 1/2 ժ. երեկ.  
Թեոդոսիայէն Շր. եւ Գշ. 6 1/2 ժ. առ.

Կ Ղ Ա Ս Ն Ի

Եապատորիա Ուր. եւ Գշ. առ. կան.  
Սեւաստոպոլ Ուր. եւ Գշ. 11 ժ. առ.  
Եալքա Ուր. եւ Գշ. 6 ժ. երեկ.  
Թեոդոսիա Շր. եւ Գշ. առ. կանուխ.  
Կերջ Շր. եւ Գշ. կէսօրուան 2 ժ.

Ի Գ Ա Ր Ձ Ի Ն.

Կերջէն Գշ. եւ Կիր. 11 ժ. առ.առ.  
Թեոդոսիայէն Գշ. եւ Կիր. 8 ժ. երեկ.  
Եալքայէն Եջ. եւ Բշ. 7 1/2 ժ. առ.  
Սեւաստոպոլէն Եջ. եւ Բշ. 3 ժ. երեկ.  
Եապատորիայէն Եջ. եւ Բշ. 8 ժ. եր.

Թեոդոսիա Գշ. եւ Կիր. երեկոյին.  
Եալքա Եջ. եւ Բշ. առ. կանուխ.  
Սեւաստոպոլ Եջ. եւ Բշ. 2 ժամուան.  
Եապատորիա Եջ. եւ Բշ. 6 1/2 ժ. եր.  
Օղեսսա Ուր. եւ Գշ. կէսօրին.

ԱՂՈՎԻ ԳԻԾԸ ՕԳԵՍՍԱՅԻՆ ԽՐԻՄՈՒ ՆՍԻՍՏԱՆԳԻՄՏՆԵՐԷՆ ԱՆՅՆԵԼՈՎ ՄԻՆՁԵԻ ԹԱՅՂԱՆ—ՇԱՖԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ. ԻՍԿ ԱՂՈՎԻ ՈՒՐԻՇ ՆՍԻՍՏԱՆԳԻՄՏՆԵՐԸ—ՇԱՖԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ.

